372
2-23

ՀՍԽՀ Լուսժողկոմատ. Ուսումնամեթոդական սեկտոր

ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏՆԵՐԻ)

372
Ն-23

ՊԵՏՀՐԱՏ ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1933

10 JUL 2013

Պատ. խմբագիր՝ Մ. Սանթրոսյան. Տեխն. խմբագիր՝ Գ. Զենյան. Լեզվական խմբագիր՝ Ա. Առոտամյան
Հրատ. № 2732 Գլավլիտ № 8296 (բ, Տիրաժ 2000
Պատվեր 2015 սրբագրեց՝ Վ. Տերոյան

Հանձնված է արտադրության 14 սեպտեմբերի 1938
Ստոր ագրված է տպագրելու 19 հոկտեմբերի 1938

5Q 469

372
Կ-23

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԿՎԱՐՏԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՎԱԳ ԵՎ ՄԻՋԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշնան կվարտալը տարվա աշխատանքների սկիզբն է։ Այս կվարտալի հիմնական խնդիրն է — ճիշտ դասավորել մանկապարտեզի մանկավարժական աշխատանքը, ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները, կարգավորել յերեխաների կազմակերպված կոլեկտիվ կյանքը նորակազմ խմբերում։

Դաստիարակության տեսակետից շատ կարևոր է յերեխաների անմիջական մասնակցությունը հիմնարկի կյանքի կազմակերպման գործին։ Այդ պատճառով էլ նախքան յերեխաների նոր խումբ անցնելը, ղեկավարը նախապատրաստում է միայն անհրաժեշտ պայմանները, մանկավարժական աշխատանքն առաջին օրից նորմալ հունի մեջ դնելու (կահ-կարասի, ուսումնական պիտույքներ, սարքավորում կուլտուրական-առողջապահական գործունեության համար և այլն), թողնելով յերեխաների համար աշխատանքի ավելի հետաքրքիր և դաստիարակչական տեսակետից ավելի գնահատելի մոմենտները։ Յերեխաները ներգրավվում են խաղի և աշխատանքի միջավայր կազմակերպելու մեջ։ Մանկապարտեզն ամրապնդում է կապը պիոներ կազմակերպության, արտադրության, դպրոցի և այլ կազմակերպությունների հետ։

Այս բոլորը հարուստ նյութ է ներկայացնում յերեխաների աշխատանքային գործունեության համար, շատ գնահատելի մոմենտներ է տալիս մանկական կոլեկտիվի կազմակերպման համար (յերեխաների ինքնակազմակերպման ձևերի ճշտում և լայնացում), մտահորիզոնի լայնացման համար, աշխատանքային կազմակերպչական ունակությունների զարգացման, ճիշտ գրույթների դաստիարակման համար։

Միջավայրը կազմակերպելու ընթացքում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել յերեխաների խաղերի համար նախապատրաստական պայմաններ ստեղծելուն. յուրաքանչյուր խմբում խաղերի համար անհրաժեշտ է մտցնել համապատասխան նույթեր (տես կազմակերպող մոմենտները)։ Ավագ խմբում յերեխաներին նույթեր տալ

ինքնաշեն խաղալիքներ պատրաստելու համար։ Հասարակական-քաղաքական դաստիարակության ասպարեզում, այդ ժամանակ կատարվող Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի կապակցությամբ յերեխաներն ստանում են մի շարք նոր գաղափարներ սոց-շինարարության, բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած պայքարի, պրոլետարիատի միջազգային համերաշխության մասին և այլն։

Ամռան յեղանակից աշնանն անցնելը և նրա հետ կապված խիստ փոփոխությունները շրջապատող բնության մեջ՝ հարուստ նյութ են տալիս բնագիտական աշխատանքների համար։ Եքսկուրսիաներն ու զբոսանքները, վորոնց նպատակն է դիտելու բնության մեջ, կենդանիների և բույսերի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, նրանց հարմարվելը ձմեռվա պայմաններին, պարզել բնության մեջ կատարվող փոփոխությունների պատճառները — լայնացնում են յերեխաների բնագիտական կողմնորոշումները և խորացնում նրանց հակակրոնական դրույթները։

Առողջապահական աշխատանքների գծով այս ժամանակաշրջանում յերեխաների համար պետք է ձեռք բերել տաք և թեթև հագուստ, բակում կառուցել ծածկ՝ անձրևոտ յեղանակներին տեղի ունեցող բացօթյա խաղերի և աշխատանքների համար, ձեռք բերել կահավորում՝ յերեխաներին բացօթյա քնեցնելու համար և այլն։

Անհրաժեշտ է ընտանիքի հետ տանել խոշոր աշխատանք՝ նրա դաստիարակչական ազդեցությունները մանկապարտեզի ազդեցությունների և նպատակների հետ համաձայնեցնելու իմաստով։ Առաջին կազմակերպող մոմենտի «Հիմնարկի կյանքի կազմակերպման» հիմնական նպատակն է կարգավորել յերեխաների կոլեկտիվ կյանքը նոր պայմաններում, ամրապնդել ճիշտ փոխհարաբերություններ զանազան ազգերի յերեխաների միջև, աղջիկների և տղաների միջև, նոր ընդունված յերեխաներին ներգրավել ընդհանուր կոլեկտիվ կյանքի մեջ, կարգավորել մանկական կոլեկտիվի կազմակերպումը և օրվա ռեժիմը։ Յերեխաներին պետք է սովորեցնել ղեկավարի հետ միասին հոգ տանել կարգ ու կանոնի, իրենց կյանքն ու աշխատանքը մանկապարտեզում կազմակերպելու մասին։ Այդպիսով հենց առաջին օրից յերեխաների առաջ ծառանում է իրենց կյանքը կազմակերպելու անհրաժեշտությունը։

Այս կազմակերպող մոմենտն առաջինն է ուսումնական տարվա համար։ Այդ պատճառով հանձնարարվում է յերեխաներին քիչ նյութեր տալ խաղի և աշխատանքի համար, չկազմակերպել նոր անկյուններ, այլ վերականգնել և կարգի բերել յեղածները։ Շատ կարևոր է ավագ խմբի յերեխաներին ներգրավել նախատեսվող աշխատանքների պլանավորման գործի մեջ, ընդ վորում հաշվի պետք է առնել, վոր այդ

հասակում յերեխաները կարող են պլանավորել միայն կարճ ժամանակամիջոցի աշխատանքները (2-3 օրվա)։

Կազմակերպող մոմենտի բովանդակությունը դասավորվում է այնպես, վոր յերեխաների հետ պլանավորվում է աշխատանքի միայն մի մասը։

Յեթե մանկապարտեզն աշխատում է ամառը և իր հողամասում ունի բանջարանոց ու ծաղկանոց, անհրաժեշտ է յերեխաների աշխատանքն այդ ժամանակ կազմակերպել հողամասում (ծաղիկների, բանջարեղենի խնամքը, հավաքը և այլն)։

Յերկրորդ կազմակերպող մոմենտը՝ «Կենցաղի բարելավումը» անց է կացվում ուստարվա սկզբից, վորպեսզի հենց սկզբից յերեխաների առողջ կենցաղի հիմքը դրվի թե տանը և թե մանկապարտեզում, իսկ հետագայում այդ աշխատանքը պիտի դարձնել մշտական և սիստեմատիկ ամբողջ տարվա ընթացքում։ Այս կազմակերպող մոմենտի նպատակն է սովորեցնել յերեխաներին առողջապահության հիմնական կանոնները և ռեժիմի պահանջները կիրառելու վոչ միայն մանկապարտեզի պայմաններում, այլ և ընտանեկան կյանքում, յերեխաներին գաղափար տալ առողջապահության նշանակության մասին վոչ միայն անձնական, այլև հասարակական առողջապահության տեսակետից, տարրական գիտելիքներ տալ, թե ինչից է կախված մարդու առողջությունը, օգտագործել այդ աշխատանքը յերեխաների հակակրոնական դրույթներն ամրապնդելու համար։

Կենցաղի բարելավման աշխատանքը մանկ. հիմնարկում կատարվում է ամեն օր և կապվում է մանկական կյանքի բոլոր մոմենտների հետ։ Այդ պատճառով տվյալ կազմակերպող մոմենտում շատ կարևոր է խաղի և զբաղմունքի համար ընտրել նոր և բազմատեսակ նյութեր, վորոնք կբարձրացնեն հետաքրքրությունը դեպի բարելավման խնդիրները և կնպաստեն կուլտուր առողջապահական ունակությունների և կողմնորոշումների խորացմանը։ Այս տեսակետից պետք է օգտագործվեն բոլոր հնարավորությունները՝ գունեղ նկարները, մատչելի բովանդակություն ունեցող դիապոզիտիվները, կինո, գեղարվեստական պատմվածքը, նոր նյութերը, առողջապահական բովանդակություն ունեցող խաղերը. այս բոլորը կօգնի ամրապնդելու յերեխաների ունակությունները և լայնացնելու նրանց գիտելիքներն առողջապահության ասպարեզում։

Նկատի ունենալով, վոր այդ կազմակերպող մոմենտի ընթացքում ավագ խմբի յերեխաները ներգրավվում են ընտանիքում առողջապահական պայմաններ ստեղծելու գործի մեջ, ղեկավարը պետք է մեծ նախապատրաստական աշխատանք կատարի ընտանիքի հետ, ապա թե վոչ, կարող է պատահել, վոր մանկապարտեզի կողմից յերեխային

տրված առաջադրությունը հակառակ վերաբերմունքի հանդիպի ընտանիքում։ «Բերքի տոնը» ամբողջ Միության մեջ տոնվում ե հոկտեմբերի 15-ին։

Այդ որը հաշվի յեն առնում կոլտնտեսությունների բերքը. համեմատում անցյալ տարվա հետ և նշում այն նվաճումները, վոր ձեռք են բերվել մեքենայացրած աշխատանքի, սերմերի զտման, լավ խնամքի և կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ։

Առհասարակ այդ որը կազմակերպվում ե ցուցահանդես, ուր ցուցադրվում են ամենալավ հացահատիկների, մրգերի, բանջարեղենի և տեխնիկ բույսերի նմուշները։ Ցուցահանդեսին մասնակցում ե դպրոցը, վորը ցուցադրում ե փորձնական հողամասի բերքը։ Ցանկալի յե, վոր մանկապարտեզի յերեխաներն ել մասնակցեն բերքի տոնին. այդ մասնակցությունը ունի մեծ նշանակություն յերեխաների գիտելիքների, ունակությունների ամրապնդման և մտահորիզոնի լայնացման համար։

Յերեխաները վերհիշում են, թե ինչպես են ցանել և ինչ են հավաքել բանջարանոցից։ Մյուս տարվա համար հավաքում են սերմեր։ Ավագ խմբի յերեխաներն այդ ժամանակ փոխադրված են լինում դպրոց։ Տոնակատարությանը պատրաստվելու ժամանակ նրանք ել գալիս են մանկապարտեզ, ոգնում ցուցահանդեսի կազմակերպմանը, գրում են պլակատներ, ցուցանկարներ և մասնակցում յերթերին։

Այս կազմակերպող մոմենտը պետք ե ոգտագործել այնպես, վոր յերեխաներն իմաստավորեն բերքի նշանակությունն ամբողջ յերկրի համար. յերեխաներին պետք ե ծանոթացնել, թե ինչպիսի ոգնություն են հասցնում միմյանց բանվորները և կոլտնտեսականները։ Փոքրերը կիմանան, վոր կոլտնտեսականները քաղաքի բանվորներին տալիս են կաթ, միս, հաց, բանջարեղեն, իսկ բանվորները գյուղի համար գործարաններում պատրաստում են տրակտորներ, շարքացաններ, զանազան մեքենաներ, կտորեղեն, վառնաման և այլն։

Մեծ յերեխաները սրանից բացի կիմանան, վոր բանվորները ոգնում են կոլտնտեսականներին կառուցել և ամրացնել կոլտնտեսությունները, սովորեցնում են պայքարել կուլակների, տերտերների դեմ։ Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձը վառ նյութ ե տալիս ամրապնդելու և լայնացնելու հասարակական-քաղաքական կյանքի գաղափարները, յերեխաների մեջ զարգացնում դասակարգային դրույթները։

Ավագ խմբի յերեխաները վոչ միայն հուզականորեն, այլ ավելի գիտակցաբար կարող են վերաբերվել դեպի իրենց շրջապատի հասարակական-քաղաքական կյանքը։ Այս պատճառով ավագ խմբի յերեխաներին ներգրավելով Հոկտեմբերյան տոնի նախապատրաստական աշխատանքների մեջ, մենք նպատակ ենք դնում՝ ոգնել յերեխաներին

գիտակցելու, վոր բոլոր ազգերի յերեխաների և աշխատավորների կյանքի բարելավումը, շինարարության նվաճումները Հոկտեմբերի հաղթանակի արդյունքներն են, դաստիարակել և նրանց մեջ հակակրանք առաջացնել դեպի այն ամենն, ինչ վոր խանգարում ե Հոկտեմբերի հաղթանակների ամրապնդմանը։

Յերեխաներին տալ ուրախ և վառ ապրումներ կապված Հոկտեմբերի բանվորական տոնի հետ։

Տոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքում կարելի յե յերեխաների հետ կազմակերպել եքսկուրսիաներ դեպի փողոցները և կապ ստեղծել պիոներների հետ։ Այս բոլորը յերեխաներին տալիս են մի շարք վառ ապրումներ, կոնկրետ տպավորություններ և լայնացնում նրանց մտահորիզոնը։

Այս կազմակերպող մոմենտի հիմնական առանձնահատկությունը նրա քաղաքական բնույթն ե։ Այդ պատճառով անհրաժեշտ ե մտածված մոտենալ նյութի մշակմանը, վորպեսզի ծանրաբեռնում չստեղծվի. վերջինս վոչ կխորացնի և կճշտի յերեխաների ունեցած պատկերացումներն, այլ, ընդհակառակը, յերեխաների հասկացողությունների մեջ առաջ կբերի խառնաշփոթություն։ Այդ հաճախ պատահում ե այն ժամանակ, յերբ յերեխաներին բանավոր ուսուցման մեթոդով տրվում ե շատ նյութ առանց կապակցելու յերեխայի կյանքի կոնկրետ փաստերի և նրա ակտիվ գործունեյության հետ։ Այս պատճառով յերեխաների հասարակական-քաղաքական հասկացողությունները և պատկերացումներն անհրաժեշտ ե ճշտել և լայնացնել առորյա աշխատանքի պրոցեսում և կապել զանազան զբաղմունքների ու խաղերի հետ։

Տոնի համար յերեխաները պատրաստում են սենյակի զարդեր, բեմադրման հագուստ և այլն։

Պետք ե հիշել, վոր յերեխաները ներգրավվում են այդ աշխատանքների մեջ միայն այնքան, վորքան դա համապատասխանում ե դաստիարակչական նպատակներին։ Հիմնական և ավելի դժվար աշխատանքը կատարում են մեծերը։ Տոնակատարության ժամանակ յերեխաները ակտիվ մասնակցողներ են խաղերի, բեմադրման և այլն։ Բացի այդ, յերեխաների համար կարելի յե կազմակերպել յերաժշտական ունկնդրություն, ցուցադրել մանկական կինո։

Հինգերորդ կազմակերպող մոմենտը նպատակ ե դնում յերեխաների մեջ հետաքրքրություն զարթեցնել դեպի տեխնիկան, զարգացնել շինարարական ստեղծագործությունը, հետազոտական մոտեցում դեպի այն նյութերը, վորոնք ոգտագործվում են աշխատանքի ժամանակ. յերեխաներին սովորեցնել խնամքով պահել և ռացիոնալ կերպով ոգտագործել նյութերը, ճշտել գործիքների գործածության ունակությունը։

Մանկապարտեզի միջավայրը պետք է կազմակերպել այնպես, որ երեխան աշխատանքի համար գտնի նյութեր և բավարար քանակով բազմատեսակ գործիքներ։ Ավելի նպատակահարմար է երեխաների հիմնական աշխատանքային գործունեությունը կենտրոնացնել աշխատանքի սենյակում։

Այնտեղ, ուր հնարավոր չէ ունենալ աշխատանքային հատուկ սենյակ, կազմակերպում են աշխատանքի անկյուն։

Մանկապարտեզում կազմակերպվում է միայն մի աշխատանքի սենյակ, որից հերթով օգտվում են միջին և ավագ խմբերը։

Աշխատանքի սենյակում պետք է աշխատանք կազմակերպվի ամեն տեսակ նյութերի հետ՝ փայտ, ստվարաթուղթ. թիթեղ, թուղթ, և այլն։ Նյութերը պետք է դասավորված լինեն այնպես, որ երեխաները կարիք լեղած դեպքում հնարավորություն ունենան օգտագործելու դրանց, օրինակ՝ աշխատանքի անկյունում փայտե աշխատանքների համար անհրաժեշտ են ոչ միայն համապատասխան գործիքներ, այլ և ներկեր, որպեսզի կարիք լեղած դեպքում երեխան ներկի իր պատրաստած իրը։ Այս կազմակերպող մոմենտի ընթացքում երեխաներին կարելի չէ տանել էքսկուրսիա դեպի արտադրության որևէ պարզ ցեխ, ուր նրանք կարող են դիտել մեքենայի աշխատանքը։ Նպատակահարմար է էքսկուրսիան անցկացնել ընդմիջումի ժամանակ, որպեսզի երեխաները կարողանան դիտել մեքենան և տեսնել, թե ինչպես է նա շարժման մեջ դրվում։

Հասարակական մանկավարժական աշխատանքն աշնանային կվարտալում դնում է մի հիմնական նպատակ՝ կազմակերպել ընտանիքի դաստիարակչական ազդեցությունը երեխայի վրա։ Այդ նպատակով ծնողների համար կազմակերպում են մի շարք զեկուցումներ, ուսումնասիրում են երեխայի ընտանեկան միջավայրը, կազմակերպում են մի կոնսուլտացիա, անհատական զրույցներ։ Ծնողներին ներգրավում են մանկապարտեզի աշխատանքների մեջ, նրանք մասնակցում են տարվող կանպանիաներին և այլն։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 1.

«Հիմնարկի կյանքի կազմակերպումը» (1/IX — 22/IX — 19 աշխօր.)

1. Հասարակական-քաղաքական դաստիարակություն. Հասկացողություն այն մասին, որ տերտերները խաբում են մարդկանց ասելով, թե աստված կա։ Աստված գոյություն չունի։

Ամրապնդել ճիշտ փոխհարաբերություններ տարբեր ազգերի երեխաների և աղջիկների ու տղաների միջև։

2. Աշխատանքային դաստիարակություն. Ամրապնդել մուրճով աշխատելու ունակությունը. կարողանալ թուղթը կտրել, կպցնել և ծալել։ Սրբել փոշին, թրջել և մզել շորը, սեղանը սարքել և հավաքել։ Գիտենալ, որ տաք սապնաջուրը մաքրում է կեղտը, որ քամին շարժում է հողմաղացի ու փռանի թևերը և այլն։ Աշխատել միասին, համերաշխ, առանց իրար խանգարելու, օգնել իրար։ Գիտենալ, որ կոլեկտիվում ավելի հեշտ և լավ է աշխատել։

3. Բնագիտություն. Գիտենալ, որ յերկինքը օդ է, անձրևն ամպերից է, անձրևը ջրի կաթիլներ է, քամին օդի շարժումն է, որ աշնանը տերևները դեղնում են, որ բույսերն ունեն սերմեր և պտուղներ։ Ճանաչել յերկու տեսակ բանջարեղենի սերմեր (բոխկ, սխտոր) և մի տեսակ ծառի սերմեր (խողակաղին)։ Ճանաչել այն բանջարեղենները, որ ցանել են բանջարանոցում։ Ճանաչել իրենց ծաղկանոցի յերկու տեսակ ծաղիկները։ Իմանալ, որ թաց կավը մածուցիկ է, նրանով կարելի յե ծեփել, իսկ չոր կավը փխրուն է։

4. Ֆիզդաստիարակություն. Կարողանալ սենյակում պահպանել կարգ ու կանոն, իրերը դասավորել իրենց տեղը։ Ձեռներն ինքնուրույն կերպով լվանալ և լավ ցամաքացնել։ Հետևել քթի մաքրությանը։ Արտաքնոցում մաքրություն պահպանել։ Ինքնուրույն հագնվել և հանվել։

Շարժվելու ունակություններ՝ շարժվել շարքով մեկ-մեկ, բռնել միջակ մեծության գնդակը $1^1/_2$ մետր տարածության վրա, քայլել 20 սմ. լայնության նստարանի վրայով։

5. Երգ-յերաժշտություն. Յերգել առանց բղավելու։ Ուժեղ և թույլ ծափերով նշել ուժեղ և մեղմ նվագը։ Կազմել շարք՝ մեկ-մեկ։

6. Կերպարվեստ. Նկարչություն գունավոր մատիտներով կամ սանձանիկով։ Նկարի մեջ տալ առանձին առարկաների պատկերը։ Գիտենալ վեց գույների անունները (կարմիր, սպիտակ, դեղին, կանաչ, կապույտ, սև)։ Կարողանալ կանոնավոր օգտվել մատիտից։ Կավից ծեփել հասարակ առարկաներ։

7. Մաթեմատիկա. Հաշվի վարժություններ մինչև 6։ Տարբերել — բարձր-ցածր, ավելի բարձր-ավելի ցածր, մեջտեղը-շուրջը։ Տարբերել քառանկյուն, յեռանկյուն, շրջան։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

1. Զրույց միջին խումբ փոխադրվելու մասին։ Ղեկավարը հարցնում է յերեխաներին անցկացրած ամառվա մասին։ Յերեխաները հաղորդում են իրենց տպավորությունները։ Ղեկավարը հիշեցնում է, որ նրանք փոխադրվել են նոր խմբակ, հիմա ավելի մեծ են, պետք է ավելի լավ պահպանեն կարգ ու կանոն։

Ղեկավարը խոսում է այն մասին, վոր մանկապարտեզում ընդունվում են ամեն ազգի յերեխաներ։ Բոլորը պետք է միասին խաղան, աշխատեն, սովորեն։ Յերեխաները ղեկավարի հետ միասին դիտում են սենյակը և վորոշում՝ ինչպիսի անկյուններ պետք է կազմակերպեն իրենց աշխատանքի և խաղի համար։

2. **Նոր յերեխաների ընդունելությունը։** Յերեխաները նորեկներին ցույց են տալիս իրենց խաղալիքները և ծանոթացնում մանկապարտեզի կանոններին։ Ղեկավարը նորեկների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, վոր մանկապարտեզում բոլորը ապրում են համերաշխ, վոր կոլեկտիվում միասին ավելի հեշտ և լավ է աշխատել։ Ղեկավարի հետ ցույց են տալիս նորեկներին նրանց սրբիչների ու գոգնոցների տեղը կախարանի վրա։

3. **Գոգնոցների վերարկուների կախիչների նշաններ ընտրելը յեվ կպցնելը։** Ղեկավարը բերում է նշաններ — նկարներ։ Յերեխաներն ըստ ցանկության ընտրում են նկարը և կպցնում իրենց կախարանին։ Պատկերներն օգտագործվում են յերևան բերելու յերեխաների պատկերացումները։

4. **Լվացվելու անկյուն կարգի բերելը։** Յերեխաները լվանում են դարակները, կպցնում իրենց նշանը, լվանում բաժակներն ու սապոնի ամանները և դասավորում։ Աշխատանքի համար բաժանվում են խմբերի. օրինակ՝ մի խումբը լվանում է դարակները, մյուսը՝ բաժակները և այլն։ Բոլոր յերեխաները պետք է մասնակից լինեն աշխատանքին։ Աշխատանքի ընթացքում ղեկավարը ճշտում է յերեխաների պատկերացումներն այն մասին, թե լավ կազմակերպված անկյունն օժանդակում է մաքրության պահպանելուն։

4 **Յերեխաները ղեկավարի օգնությամբ կարգի յեն բերում բնության անկյունը։** Դասավորում են զբոսանքի ժամանակ հավաքած նյութերը՝ մամուռ, քարեր, խոզակաղին։ Ձկներին և գորտին տեղավորում են ակվարիումի և տերրարիումի մեջ, կողքին դնում նրանց կերը և կերակրում։ Ղեկավարը բացատրում է, թե ինչպես պետք է խնամել կենդանիներին։

6. **Սովորել աշխատանքային յերգ,** օրինակ՝ «Կոշկակար,» «Փոքրիկ Աշոտը» և այլն։ Սկզբից ղեկավարը մի յերկու անգամ ինքն է յերգում ամբողջ յերգը, հետո յերեխաները կամաց ձայնակցում են նրան, աստիճանաբար ըմռնելով յեղանակը և սովորելով բառերը։ Ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր յերեխաները յերաժշտական աշխատանքների ժամանակ սովորեն կարգապահություն։ Առանց աղմուկի վեր կենան, կամաց դասավորեն աթոռակները։

7. **Խաղի անկյուն կազմակերպելը.** Ղեկավարը բերում է անցյալ տարվա խաղալիքները։ Յերեխաները սրբում են թաց շորով, վորոշում են խաղի անկյան տեղը, տեղավորում են դարակները և նրանց վրա դասավորում խաղալիքները. դասավորելիս հաշվում են խաղալիքները (մինչև 6)։ Ղեկավարը բերում է խոշոր կառուցողական նյութ՝ չորս ձևից վոչ ավել — խորանարդներ, գլաններ, աղյուսներ, քառանկյունի փոքրիկ գերաններ։

Ազատ ստեղծագործական խաղ։ Խաղի համար տրվում են խթան հանդիսացող նյութեր՝ խոշոր կառուցողական նյութ, խողովակ, դրոշակ, տախտակներ, պարան և այլն։

9. **Նկարչություն։** Ղեկավարը տալիս է 6 գույնի գունավոր մատիտներ կամ սոսնձաներկ։ Ղեկավարը հետևում է, վոր նյութերը կանոնավոր օգտագործեն։

10. **Բնության անկյան յեվ սեղանատան համար հերթապահություն սահմանելը։** Ղեկավարը բերում է նախորոք պատրաստած տախտակ, վորի մի կողմը նկարած է բնության անկյուն, մյուս կողմը՝ սեղանատուն։ Պատրաստում է քարտեր - նկարներ հերթապահության համար։ Յերեխաները պայմանավորվում են, թե ով ում հետ պետք է հերթապահ լինի. որվա հերթապահների քարտերը կախում են տախտակին։ Հետագայում ղեկավարը հետևում է, վոր հերթապահությունը տարվի կանոնավոր։

11. **Նկարչության աշխատանքները պահելու համար ծրարներ պատրաստելը։** Ղեկավարը բերում է նախորոք պատրաստած ծրարները։ Յերեխաները պատրաստի շաբլոններով կտրտում են 6 գույնի թղթերից (կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, սև, սպիտակ) ձևեր՝ շրջան, յեռանկյուն, քառանկյուն։ Կտրած ձևերից կազմում մոզաիկ և զարդարում ծրարը (կպցնում)։ Հիշում են ձևերի անունները։

12. **Աշնանային տերևներ հավաքելը յեվ սենյակը զարդարելը։** Զբոսանքի ժամանակ յերեխաները հավաքում են տերևներ, նկատում, վոր տերևները սկսել են դեղնել և թափվել։ Հավաքում են խոզակաղին, սերմեր, շագանակ (նայելով տեղական պայմաններին)։

13. **Ղեկավարն առաջարկում է յերեխաներին կարգի բերել պահարանը։** Յերեխաները ղեկավարի օգնությամբ դասավորում են՝ մատիտները, ներկերը, վրձինները, սոսինձը, սպիտակ և գունավոր թուղթը (ամեն ինչ վերցնում են 6 գույնի)։

14. **Ընթերցանություն.** Ղեկավարը կարդում է մանկապարտեզի կյանքից մի գրքույկ։

15. **Կատարած աշխատանքի հաշվառում։** Յերեխաները դիտում են իրենց աշխատանքը, նշում, վոր ամեն ինչ կարգի յե բերված և վորոշում այդ կարգը միշտ էլ պահպանել։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Յեղանակը դիտել. *Յերեխաները նշում են յեղանակի փոփոխությունները՝ արև, ամպամած, անձրևային օրեր։ Զուգընթացաբար տարվում են հակակրոնական զրույցներ։*

2. *Բացօթյա կազմակերպված խաղեր։ Յերեխաները ղեկավարի օգնությամբ կազմակերպում են մի շարք խաղեր՝ «Գնացք», «Պիոներներ», շարժական խաղեր, գնդակ գցել, «Ձի» թռչել պարանի վրայով, քայլել 20 սմ. լայնություն ունեցող նստարանի վրայով։*

Ղեկավարը հետևում է յերեխաների շարժումների ճշտությանը։

3. Ազատ ստեղծագործական խաղ. *Խաղի համար տրվում են խոշոր կառուցողական նյութեր, բահեր, ավելներ, ջրացաններ, փոռան, հողմաղաց և այլն։ Ղեկավարը բացատրում է, վոր փոռանը և հողմաղացը շարժվում են քամու օգնությամբ, քամին օդի շարժումն է։*

4. Ծեփվածք. *Յերեխաներին տրվում է կավ ազատ ծեփվածքի համար, կավի հետ տրվում են ծառերի ճյուղեր, խեցիներ և այլն։ Ծեփվածքը, կազմակերպող մոմենտի ընթացքում, կարելի յե տալ 2 անգամ։*

5. Ազատ նկարչություն. *Յերեխաները նկարում են գունավոր մատիտներով։*

6. Ընթերցանություն կամ վոտանավոր *աշնան մասին։*

7. Յերգ-յերաժշտություն. *Յերգել համապատասխան յերգեր, քայլել, շարվել մի շարքի յերգի և նվագի տակ։ Գույների խաղը։*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. *Ծնողական ընդհանուր ժողով՝ ծնողական հանձնաժողովի և հասարակական ակտիվի մասնակցությամբ։ Ծնողական հանձնաժողովի վերընտրություն, յերեխաների ընտանեկան միջավայրի հետազոտման խնդիրը։*

2. *Ծնողական նոր հանձնաժողովի աշխատանքի պլանի հաստատում։*

3. *Խմբական կոնսուլտացիա ծնողների հետ՝ ընտանիքի ազդեցությունը մանկապարտեզի դաստիարակության հետ համաձայնեցնելու նպատակով։ Ծնողներին պարզաբանվում է, թե ընտանիքում յերեխայի նորմալ զարգացման համար ինչպիսի պայմաններ պետք է ստեղծել։*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 2.

«ԿԵՆՑԱՂԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄԸ»

(23/IX—13/X-*ի — 17 աշխ. օր).*

1. Հասարակական քաղաքական դաստիարակություն. *Կոլտնտեսությունը ունի շատ հողեր։ Այնտեղ բոլոր կոլտնտեսականներն աշխատում են միասին, վորովհետև միասին աշխատելը ավելի հեշտ է. կոլտնտեսությունները քաղաք են ուղարկում ալյուր, բանջարեղեն, միս և այլն։ Բանվորները տնտեսություններին տալիս են մեքենաներ, կտորեղեն և այլն։ Կոլտնտեսություններում աշխատում են բոլոր ազգերի աշխատավորները։*

2. Աշխատանքային դաստիարակություն։ *Ճանաչել և անվանել մի քանի տեսակի տեքստիլ նյութեր. բամբակ, թել, կտոր։ Իմանալ, վոր կտորը կարելի յե կտրել մկրատով, պատռել՝ ձեռքով։ Գիտենալ, վոր ծառերը կտրում են անտառում, նրանցից սղոցում են գերաններ և տախտակներ։ Գիտենալ, վոր բանջարեղենը յեփելուց փափկում է. ջուրը և կաթը տաքացնելուց յեռում են։ Յեռալուց ջուրը գոլորշիանում է։*

3. Բնագիտություն. *Ճանաչել յերեք տեսակի բանջարեղեն։ Գիտենալ, վոր աշնանը տերևները թափվում են և նրանց փոխարեն մնում են բողբոջներ։ Գիտենալ, վոր աշնանը կարելի յե տնկել ծառեր և թփեր, վոր նրանք ձմեռը չեն փչանա։ Գիտենալ, վոր չոր փայտը լավ է վառվում։ Իմանալ կովի տված օգուտը։ Գիտենալ, վոր կատուն մուկ է բռնում։ Գիտենալ, վոր մկները վնաս են տալիս, վոչնչացնում են մթերքները։ Գիտենալ, վոր կեղտը մաքրվում է տաք ջրով, վոր կեղտից և կավից ջուրը պղտորվում է։*

2. Ֆիզ-դաստիարակություն. *Կարողանալ կանոնավոր վողողել բերանը։ Գիտենալ, թե ինչու անհրաժեշտ է յեռացնել կաթը և մրգերն ու բանջարեղենը լվանալ յեռացած ջրով։ Ունենալ տարրական հասկացողություն վարակիչ հիվանդությունների և վարակի մասին։ Ի՞նչու չի կարելի խմել առվի ջուրը։*

5. Մաթեմատիկա. *Հաշվել մինչև 10՝ կոնկրետ առարկաներով։ Հասկացողություն կենտի, զույգի մասին, բարձր, ցածր, շուրջը, մեջտեղը։*

6. Կերպարվեստ. *Կարողանալ թուղթը կանոնավոր կտրել, կարտոֆիլի ալյուրից սոսինձ յեփել։ Աշխատանքի ժամանակ կարողանալ կանոնավոր կերպով վրձինով վերցնել սոսինձը և քսել թղթին։ Ճանաչել նարնջի գույնը։*

7. Յերաժշտություն. *Յերգի սկիզբը յերգել մեղմ և ապա ուժեղացնել։ Քայլել ուղիղ, գլուխը չծռել։*

Մեկ-մեկ շարվել 2-3 շարքի, աստիճանաբար արագացնել շարվելը։ Կիցքի ամենապարզ ձևեր՝ ձեռքերը մեջքին, ձեռքերի շարժումներ դեպի առաջ, վերև և աջ ու ձախ։ Գնդակ նետելը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Բժշկի զրույցը. *Բժիշկը կամ ղեկավարը յերեխաներին պատմում է, վոր բոլոր հիվանդությունները առաջանում են կեղտից։*

Առողջ լինելու համար անհրաժեշտ է իրան մաքուր պահել։ Հարցնում է յերեխաներին, թե կարող են նրանք լավ լվացվել, տանն այնպես են լվացվում, ինչպես մանկապարտեզում, ողողում են բերանը։ Հիշեցնում է, որ փոշին պետք է սրբել թաց շորով և այլն։

2. **Սենյակը մաքրելը.** Ղեկավարը և յերեխաները միասին հետազոտում են սենյակը, վորոշում թե ինչը պետք է մաքրել։ Յերեխաները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուրն ստանում է աշխատանք (փոշին սրբել թաց շորով, պահարանը կարգի բերել և այլն)։ Ղեկավարը գիտում է յերեխաների աշխատանքը և կարիք յեղած դեպքում օգնում։ Աշխատանքը վերջանալուց հետո յերեխաները լվանում են փոշու շորերը և չորացնում։ Ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, վոր տաք ջրով կեղտը շուտ է մաքրվում։

3. **Սանիտարական յերգ.** «Ջրի հետ դու հաշտ ապրի» կամ «դեռ արևը չծագած»։ Խաղ գունավոր դրոշակներով։

4. **Կազմակերպված ստուգում կուլտ-սանիտարական ունակությունների.** Լվացվելու ժամանակ ղեկավարը դիտում է, թե ինչպես են լվացվում յերեխաները, նրանց հետ նշում է, թե ինչպես պետք է լվացվել, վողողել բերանը։ Ուտելու ժամանակ հիշեցնում է, թե ինչպես պետք է կանոնավոր ծամել, մաքուր ուտել։

5. **Սանիտարական անկյուն կազմակերպելը.** Յերեխաները դիտում են ավագ խմբի յերեխաների իրենց անկյան համար բերած նյութերը՝ պլակատներ, լոզունգներ, սանիտարական պայուսակ, ու պահում են պահարանում, յերիզ և այլն։ Ղեկավարը յերեխաների հետ վերլուծում է պլակատների բովանդակությունը, խոսում է սանիտարական պայուսակի գործածության մասին։ Յերեխաները պլակատները փակցնում են պատերին, դեղորայքը դարսում են պայուսակի մեջ։

6. **Խաղալ լոտո։**

7. **Գոգնոցների ստուգումը.** Յերեխաները ղեկավարի հետ ստուգում են գոգնոցները, կոճակները, կախելու թելերը և պատռվածները ջոկում կարելու համար։ Կոճակները և կախելու թելերը կարող են կարել յերեխաները։ Կարկատելու համար ներգրավվում են ծնողները։

8. **Խոհանոց այցելելը.** Յերեխաները խմբով գնում են խոհանոց՝ տեսնելու համար թե նախաճաշի համար ինչպիսի բանջարեղեններ են գործածում։ Տնտեսավարը բացատրում է, վոր բանջարեղենն ամենից օգտակարն է։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գազարի վրա։ Նշել, վոր նա շատ օգտակար է առողջության համար, դիտել ձևը, նշել գույնը։ Յեփած բանջարից տնտեսավարը տալիս է ուտելու։ Յերեխաները դիտում են կաթի ու ջրի գոլորշիացումը։

9. **Մասնակցություն նախաճաշի պատրաստմանը.** Սեղանների վրա դնում են բանջարեղեններ, մրգեր, թասերի մեջ՝ տաք ջուր, ափսեներ։ Յերեխաները ղեկավարի հետ բանջարեղենը և մրգերը դարսում են հինգ հինգ և տասնյակներով։ Հաշվում, ջոկում են մի քիչ ու կտրում։ Աշխատանքի ժամանակ ղեկավարը խոսում է, թե ինչու պետք է լվանալ մրգերը, վորտեղից են բերում (տնտեսությունից), ինչպես են այնտեղ աշխատում, քաղաքն ինչ է տալիս տնտեսությանը։ Ղեկավարը ցույց է տալիս կոլտնտեսության կյանքից գեղեցիկ նկար։

10. **Ծեփվածք.** Յերեխաները ծեփում են բանջարեղեն՝ գազար, բողկ, վարունգ և այլն։ Չորանալուց հետո ներկում են։ Տրվում է նոր գույն — նարնջագույն։

11. **Պահեստ այցելելը.** Բոլորը գնում են պահեստ տեսնելու, թե այնտեղ ինչպես են պահվում մթերքները։ Ղեկավարը պատմում է, վոր մկները փչացնում են մթերքները, պետք է նրանց վոչնչացնել. կատուներն այդ բանում մեզ օգնում են։ Ղեկավարն առաջարկում է յերեխաներին տանը դիտել կատվին, թե ինչպես է նա շարժվում, ինչ է ուտում և պատմել ընկերներին։

12. **Ընթերցանություն առողջապահության մասին.** Կարդալ «Վարպետ Մկոյի սուլիչները» (Հոկտեմբերիկ ամսագիր 1930թ. №10) կամ «Նանի թանը» — Թարգմ. Սիմակի։

Մյուս որը ղեկավարը յերեխաներին առաջարկում է պատմել կատվի մասին։

13. **Յերեխաները մասնակցում են տան մաքրության անկյան համար իրեր պատրաստելուն,** ներկում են դարակները, գունավորում լոզունգները և այլն։

14. **Ազատ ստեղծագործական խաղ։** Խաղի համար տրվում է խոշոր կառուցողական նյութ, սանիտարական կապեր, պայուսակ, ոճառի կտորներ, շորեր, կեղևաթել (мочало), մանր ամաններ։ Ղեկավարը ուշադրություն է տալիս խաղին, կարիք եղած դեպքում մտցնում է նոր նյութեր։

Յերեխաները մասնակցում են ընդհանուր ցերեկույթին, ուր ցուցադրվում են տան սանանկյան համար շաբաթօրյակում պատրաստած իրերը։ Իրերի մի մասը հանդիսավոր կերպով հանձնում են շեֆ մանկապարտեզին, մյուսները տանում են տուն, յերգելով համապատասխան յերգեր։

16. **Նկարել** «Ինչ ենք մենք անում առողջ լինելու համար»։

Այդ նկարներից կարելի յե պատրաստել պատի թերթ։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Ջրույց կոլտնտնտեսության մասին։ Յերեխաները դիտում են նկարները, ղեկավարը ճշտում է յերեխաների պատասխանները։ Նկարները ցանկալի յե վերցնել այլ ազգի կոլտնտեսականների կյանքից։

2. Խաղալ «կոլտնտեսություն»․ Նյութերը՝ անիվներ, փայտեր, ավտոներ, սանձեր, կենդանիներ և մարդկանց ֆիգուրներ, կարմիր և գունավոր գլխակապեր, բանվորական զգեստներ, գոգնոցներ։

3. Ծեփվածք — 2—3 անգամ — ազատ (կազմակերպող մոմենտի ժամանակաշրջանում)։

4. Ազատ նկարչություն — գունավոր մատիտներով կամ սոսնձաներկով․ մտցվում է նարնջագույն ներկ։

5. Դիտել յեղանակի փոփոխությունները։

6. Դիտել կովի նկարը կամ տեսնել կովը գոմում։
Զրույց — ինչ օգուտ է տալիս կովը։

7. Յերգ — յերաժշտություն. Վերհիշել անցյալ տարվա յերգերից կատվի, կովի մասին յերգերը։ Յերգերի ժամանակ ճշտում են ուժեղ և թույլ ձայնը։ Յերգում են սոլո և խմբով, կամ բաժանվում են խմբերի․ մի խումբը սկսում է, հետո նրան միանում է մյուսը։

8. Խաղ — հաղորդակցության միջոցները քաղաքում և կոլտնտեսության մեջ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կապ հաստատել արտադրության, կոլտնտեսության, հասարակական կազմակերպությունների հետ կենցաղի բարելավման կամպանիային նրանց մասնակից դարձնելու համար։ Ընտրված ներկայացուցիչների հետ մշակել կամպանիան անցկացնելու աշխատանքի պլան։

2. Ամբակային ծնողական ժողով։ Լսել բժշկի զեկուցումը ֆիզդաստիարակության նշանակության մասին։ Բժիշկը կանգ է առնում կրոնի և կրոնական ծեսերի վնասների վրա՝ կապված յերեխաների դաստիարակության հետ։ Խոսում է բժշկական քննության արդյունքների մասին։

Ղեկավարը զեկուցում է ընտանեկան միջավայրի հետազոտման արդյունքների մասին։ Խոսվում է, թե ինչպես բարելավել յերեխայի կենցաղը տանը (ընտանիքում լվացվելու անկյուն կազմակերպելը)։

3. Կենցաղի բարելավման գծով ծնողական ընդհանուր ժողովի համար պատրաստել ցուցահանդես։ Ցուցահանդեսի համար պատրաստել պլակատներ և մակետներ հետևյալ հատվածներով՝ ա) ֆիզդաստիարակության նշանակությունը կոմդաստիարակության սիստեմում, բ) յերեխայի կյանքի ռեժիմը (սնունդը, քունը, զբոսանքը, հագուստը)։

4. Արտադրության պատի թերթին հոդվածներ տալ յերեխայի կենցաղի բարելավման ուղղությամբ։

5. Կազմակերպել նույն խմբի յերեխաների ծնողների մեջ սոցմրցում, յուրաքանչյուրն իր յերեխայի համար տանը առողջ պայմաններ ստեղծելու իմաստով։

6. Ծնողների միջոցով կազմակերպել շաբաթօրյակ լվացվելու անկյան համար անհրաժեշտ իրեր պատրաստելու համար։

7. Ընտանիքում սան — անկյուն կազմակերպելը։ Ղեկավարը խորհուրդներ է տալիս իր խմբի ծնողներին, թե տանն ինչպես պիտի սան — անկյուն կազմակերպել։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 3

«Բերքի տոնը» (14/X — 25/X — ի — 10 աշխ. օր). Ժամկետը յենթակա չէ փոփոխության — նայած տեղին).

1. Հասարակական — քաղաքական դաստիարակություն. Գիտենալ, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ հողերը գտնվում էին կուլակների և կալվածատերերի ձեռքին, գոյություն ունեին անհատտնտեսություններ։ Հեղափոխությունից հետո հողերն անցան պետության ձեռքը, որը կառուցել է կոլտնտեսություններ և խորհտնտեսություններ։ Կոլտնտեսություններում գյուղացիներն աշխատում են կոլեկտիվ կերպով, մեքենաներով։ Կոլեկտիվում ավելի հեշտ է աշխատել։ Բերքի հաջողությունը կախված է հարվածային աշխատանքից, լավ խնամքից (կանոնավոր մշակում, պարարտացում, մեքենայացում) և վոչ թե գոյություն չունեցող աստծուց։ Բանվորներն օգնում են կոլտնտեսության մեքենաներով, անհրաժեշտ ապրանքներով։ Կոլտնտեսություններն իրենց արտադրանքի մի մասը տալիս են քաղաքի բանվորներին։

2. Աշխատանքային դաստիարակություն. Գիտենալ, որ տախտակը ստացվում է գերանից, գերանը ծառի բնից։ Տախտակը սղոցում են սղոցով։ Կարողանալ նախորոք պատրաստած տախտակներից ծաղիկների համար շինել փոքրիկ արկղներ։ Բամբակից պատրաստում են թել և կտոր։ Կարողանալ սերմի համար կարել տոպրակներ։

3։ Բնագիտություն։ Տարբերել աշնան յեղանակի առանձնահատկությունները։ Գիտենալ, որ անձրևը թափվում է ամպերից։ Ճանաչել 1 — 2 տեսակ հացահատիկ՝ ցորեն, գարի։ Գիտենալ, թե ինչու թռչունները չվում են տաք յերկրներ։

4. Ֆիզ - դաստիարակություն։ Կարողանալ առօրյա կյանքում կիրառել առողջապահական կանոններ՝ հաճախակի չվերցնել կեղտոտ իրեր և աչքերը կեղտոտ ձեռքով չքսել, ներս մտնելիս վոտները մաքրել, սենյակում մաքրություն պահպանել, սենյակի իրերը դասավորել կանոնավոր, թաց շորով փոշին սրբել։

5. Մաթեմատիկա. Կարողանալ հաշվել բանջարանոցից բերած մրգերը և բանջարեղենը (10 — ի շրջանում)։ Կարողանալ միջավայրում գտնել յեռանկյուն, քառանկյուն, շրջան (կրկնողություն)։

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան

2015—2

Տարբերել արագը — դանդաղից, ավելի արագը — ավելի դանդաղից:

6. **Կերպարվեստ:** *Կարողանալ կավից պատրաստել միրգ և բանջարեղեն. ներկել համապատասխան գույներով: Կարողանալ ըստ առաջադրության տալ պարզ նկար: Կարողանալ գունավոր թղթից կտրել բանջարեղեն, մրգեր:*

7. **Գրագիտություն:** *Նախապատրաստական աշխատանք: Կարողանալ շաբլոններով գծել բանջարեղեններ, մրգեր, ծանոթ յերկրաչափական ձևեր և գծիկներով լցնել (շտրիխովկա):*

8. **Յերաժշտություն:** *Յերգելիս տարբերել ուժեղն ու մեղմը: Կոլեկտիվ կերպով արտասանել կարճ լոզունգ:*

1. **Եքսկուրսիա դեպի կոլտնտեսություն ու խորհտնտեսություն:** *Յերեխաների հետ դիտել, թե ինչպես են հավաքում բերքը՝ հացահատիկների ամբարները, բանջարեղենի, մրգերի, բամբակի հավաքը: Նշել, վոր կոլտնտեսության մեջ մեծ բերք են հավաքել, շնորհիվ կոլեկտիվ աշխատանքի և մեքենաների գործածության: Զուգընթացաբար ամրացնել քաշի, կշեռքի և կշռաքարերի մասին հասկացողությունը:*

2. **Զրույց այն մասին, վոր կոլտնտեսականները պատրաստվում են տոնելու բերքի տոնը:** *Պատմել, վոր բոլոր կոլտնտեսություններում հաշվի յեն առնում ստացած բերքը, մի մասը թողնում իրենց կարիքների համար, իսկ մի մասն էլ ուղարկում պետությանը՝ քաղաքի բանվորների համար, դրա փոխարեն քաղաքից ստանում մեքենաներ, կտորեղեն, կոշիկ և այլն:*

2. **Նկարներ դիտելը:** *Պահել լրագրերից, ամսագրերից կտրած նկարներով կարճ հաղորդումներ հացամթերման մասին, խորհրդային Միության կամ Հայաստանի շինարարության մասին: Բացատրել յերեխաներին, թե ինչ է նկարած և կպցնել մի ընդհանուր թերթի վրա:*

4. **Բանջարեղեն հավաքելը.** *Յերեխաները հավաքում են հողամասում մնացած բանջարեղենը, ծաղկանոցից հանում սենյակի ծաղիկները և փոխադրում կենդանի անկյուն: Պատրաստած թիթեռներին, միջատներին տեղավորում են ամանների մեջ՝ դիտելու համար:*

5. **Եքսկուրսիա դեպի կոլտնտեսություն կամ գյուղացու տան ցուցահանդես:** *Յերեխաները դիտում են ցուցադրված էքսպոնատները, ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է նրանց լավ վորակի վրա:*

Գյուղատնտեսը բացատրում է, թե վոր բանջարեղենն ավելի հաջող է յեղել և վոր լավ բերքը կախված է լավ խնամքից:

6. **Կազմակերպչական զրույց:** *Յերեխաները վերհիշում են, թե ինչ են տեսել ցուցահանդեսում, վորոշում են իրանք էլ կազմակերպել ցուցահանդես, պատրաստել ալբոմներ, պլակատներ:*

7. **Ընթերցանություն աշնան մասին:**

8. **Եքսկուրսիա դեպի անտառ կամ այգի:** *Յերեխաները հավաքում են տերևներ, մամուռ և այլն՝ ցուցահանդեսը զարդարելու համար:*

9. **Յերգ:** *«Բամբակի արտերը» — Գալիքյանի.*

10. **Ծեփվածք:** *Առաջարկել յերեխաներին կավից ծեփել մրգեր, բանջարեղեններ: Չորանալուց հետո յերեխաները ներկում են:*

11. **Փայտի աշխատանք:** *Մեծերին կարելի յե առաջարկել պատրաստել գյուղատնտեսական գործիքների մոդելներ: Աշխատանքի համար յերեխաներին պետք է տալ զանազան ձևերի տախտակներ, թիթեղի բանկաներ, թել, անիվներ, թիթեղի կտորներ, մուրճեր, սղոցներ, աքցաններ: Պատրաստած իրերը ներկել մյուս որը:*

12. **Վոտանավոր բերքի մասին:**

13. **Պատրաստել ալբոմ կամ պլակատ՝** *«Մեր բանջարանոցը» կամ «Գյուղ ու քաղաք»: Նկարները կտրել ամսագրերից: Նկարները մակագրում են պիոներները կամ ղեկավարը:*

14. **Նկարել ըստ առաջադրության** — *«Ի՞նչ ենք հավաքել բանջարանոցից» կամ կտրել գունավոր թղթերից:*

15. **Ազատ ստեղծագործական խաղ** — *«Կոլտնտեսություն»:*

16. **Ցուցահանդես կազմակերպել.** *Յերեխաները պիոներների և ղեկավարի օգնությամբ սենյակը զարդարում են ցուցահանդեսի համար: Պատերին փակցնում են պլակատներ, նկարներ, մամուռով և տերևներով զարդարած ափսեների վրա դնում են մրգեր և բանջարեղեններ: Ցուցահանդեսին հրավիրվում են ծնողներն ու արտադրության կամ կոլտնտեսության ներկայացուցիչը: Յերեխաները ցույց են տալիս իրենց պատրաստած խաղալիքները և այլն: Յերգում են և արտասանում:*

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. *Խաղ խոշոր շինարարական նյութով:*
2. *Դիտել թռչուններին, խնամել կենդանի անկյան կենդանիները և բույսերը:*
3. *Կատարել առողջապահական կանոնները:*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. *Հրավիրել ծնողական հանձնաժողով, դնել բերքի տոնին մասնակցելու խնդիրը:*
2. *Ծնողներին ներգրավել ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներին.*

3. Ցուցահանդեսին մասնակից դարձնել ռայոնի բնակչությանը:

4. Յեթե մանկապարտեզը պրիմիտիվ է, աշխատել ծնողների և հասկազմակերպությունների միջոցով անցկացնել միջոցների մոբիլիզացիա, պրիմիտիվ մանկապարտեզը դարձնելու ստացիոնար՝ բարելավելով աշխատանքի պայմանները:

5. Կոլտնտեսության մեջ ընթերցել լրագրեր: Տալ բացատրություն մթերման նոր օրենքների մասին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 4

«ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ»

(26 X-17 XI-ի — 20 աշխ. օր).

1. Հասարակական-քաղաքական դաստիարակություն

Խորհրդային յերկիրն ամրացնելու համար բանվորները կառուցում են շատ գործարաններ: Գործարաններում բանվորները պատրաստում են մեքենաներ և ապրանքներ: Բանվորների յերեխաների համար բացվում են շատ դպրոցներ, մանկապարտեզներ, մսուրներ: Պիոներներն ոգնում են մանկապարտեզի յերեխաներին աշխատել ու սովորել: Մեծ յերեխաները պատրաստվում են հոկտեմբերիկ դառնալ: Մենք աշխատում և սովորում ենք, վորպեսզի հոկտեմբերիկ և պիոներ դառնանք: Մեր գործարաններն առաջ պատկանում եյին բուրժուաներին: Բանվորները կռվում եյին բուրժուաների դեմ: Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ բանվորները հաղթեցին, գործարանները խլեցին բուրժուաներից, հողը՝ կուլակներից և իրենք սկսեցին կառավարել յերկիրը: Լենինը սովորեցնում է բանվորներին, թե ինչպես հաղթել բուրժուաներին:

Աշխատանքային դաստիարակություն: *Թղթի աշխատանք և ծանոթություն նրա մշակման հետ: Տարբերել թղթի տեսակները՝ հաստ թուղթ — գրքերի, տետրակների, շապիկի, պլակատների համար: Փափլուն թուղթը ջրից կակղում է: Կարողանալ նախատեսնված աշխատանքի համար ընտրել անհրաժեշտ թուղթ: Կարողանալ թուղթը կտրել: Ստվարաթուղթը հաստ է՝ դժվարությամբ է պատռվում ջրից կակղում է: Նրանից պատրաստում են լոտո, արկղներ: Կարել խոշոր պարզ ուրվագծեր: Կարողանալ ստվարաթղթի շերտերը մեխել տախտակին և կպցնել թղթին: Գիտենալ, վոր մանկապարտեզում յերեխաները պետք է աշխատեն վոչ միայն իրենց համար, այլ նաև պիտի իրենք պատրաստեն ամբողջ խմբի, փոքրերի համար: Տարրական հասկացողություն իրենց կցված արտադրության մասին. գիտենալ, թե ինչ են այնտեղ արտադրում, վոր բանվորները և բանվորուհիները սոցմրցման պայմանագիր են կնքում ավելի արագ և ավելի լավ աշխատելու համար:*

3. Բնագիտություն: *Գիտենալ, վոր ծառն ունի բուն, բունը ծածկված է կեղևով: Գիտենալ աշնան յեղանակի առանձնահատկությունները:*

4. Ֆիզ-դաստիարակություն: *Ինքնուրույն ոգտվել արտաքնոցից, լվանալ ձեռները և յերեսը: Սենյակում պահպանել կարգ ու կանոն. իրերը դնել իրենց տեղը, աղբը հավաքել խոզանակով: Քայլել և վազել վորոշ ուղղությամբ, ըստ ազդանշանի փոխել ուղղությունը:*

5. Մաթեմատիկա: *Քանակական ըմբռնում 4-5 սահմաններում: Ճանաչել հնգանկյունը:*

6. Կերպարվեստ: *Գիտենալ, վոր թաց կավը ծեփվում է: Կարողանալ ծեփել ցանկացած թեմայով: Կարողանալ ոգտվել ավելի մանր կառուցողական նյութից:*

7. Դրագիտություն: *Կարողանալ ոգտվել մատիտից: Նույնն, ինչ նախորդ մոմենտում:*

8. Յերգ-յերաժշտություն: *Կարողանալ կոլեկտիվ կերպով արտասանել վողջույն, լոզունգ:*

Զույգերից կազմել շարքեր և քայլել տեղում: Ուժեղ նվագի ժամանակ բարձրացնել դրոշակ, մեղմի ժամանակ՝ իջեցնել: Պարերի միջոցով արտահայտել ուժեղ և մեղմ յերաժշտությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Սոց-շինարարության վերաբերյալ նկարների դիտելը: *Ղեկավարը պատմում է, վոր մեր յերկրում կառուցվում են շատ գործարաններ, բանվորների յերեխաների համար կառուցվում են դպրոցներ, մանկապարտեզներ:*

2. Եկսկուրսիա դեպի իր կամ մոտակա արտադրությունը: *Ղեկավարը ընտրում է պարզ ցեխ: Կարելի յե պայմանավորվել, վոր բացատրությունը տա բանվորը կամ բանվորուհին:*

Յերեխաները տեսնում են, թե ինչ է արտադրում գործարանը: Ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է աշխատանքի ռացիոնալացման միջոցների վրա, մեքենաների վրա: Յերեխաներն իմանում են, վոր բանվորները սոցմրցման պայմանագիր են կնքում, աշխատում են հարվածային կերպով:

4. Կազմակերպել ռիթմիկ խաղ — «Գործարան» կամ «Շինարարություն»։ Ցանկալի է, վոր խաղն արտահայտի յերեխաների տպավորությունները։

4. Ցույց տալ կինո նկար — «Բանվորների պայքարը բուրժուաների դեմ և հաղթանակը Լենինի ղեկավարությամբ»։ Ղեկավարը բացատրում է, թե ինչպես էին ապրում բանվորներն առաջ և ինչպես են ապրում հիմա, ինչպես բանվորները հաղթեցին բուրժուաներին։ Ղեկավարը պատմում է, վոր շուտով Հոկտեմբերյան հեղափոխության տոնն է, վորի համար պիտի պատրաստվենք։

5. Ազատ ստեղծագործական խաղ։ Խաղի համար տրվում է խոշոր և մանր կառուցողական նյութ, փայտեր, դրոշակներ, ավտո, պատգարակներ, մեքենաների մասեր և այլն։ Ղեկավարն ուղղությունն է տալիս խաղին՝ ոգնում է, դժվարության դեպքում կանոնավորում է յերեխաների փոխհարաբերությունները, ճշտում է հասարակական-քաղաքական պատկերացումները։

6. Կազմակերպչական զրույց ավագ խմբի յեվ պիոներների հետ միասին Հոկտեմբերի տոնակատարության շուրջը։ Ավագ խմբի յերեխաները զեկուցում են, թե ինչ են տեսել պիոներների մոտ, ինչպես են նրանք պատրաստվում տոնին։ Հաղորդում են պիոներների առաջարկությունը՝ մանկապարտեզում կազմակերպել ցուցահանդես։ Յերեխաները պիոներների հետ վորոշում են, թե ինչ են պատրաստելու ցուցահանդեսի համար (պատի թերթ, դրոշակ, պլակատ-ալբոմ) և ինչպես են անցկացնելու տոնը։

7. Աշխատանքների ընտրություն ցուցահանդեսի համար։ Յերեխաներն առանձնացնում են նկարները և բնության վերաբերյալ աշխատանքները։ Կավե աշխատանքները ներկում են սոսնձաներկով (ծանոթ գույներով)։

Յերեխաներն աշխատում են խմբերով։ Մասնակցում են բոլոր յերեխաները։ Աշխատանքի ընթացքում ղեկավարը շեշտում է, թե, նրանք ինչ են անում մանկապարտեզում և ինչ են արդեն սովորել։

8. Ցուցահանդես պատրաստելը։ Յերեխաները բերում են իրենց աշխատանքները և դնում վորոշված տեղը։ Ցուցահանդեսը զարդարում են պիոներները։ Ղեկավարը նշում է, վոր պիոներներն ոգնում են մանկապարտեզի յերեխաներին, նրանց պատրաստում են հոկտեմբերիկների շարքերը մտնելու։

9. Յերեխաները սովորում են արտասանել 3-4 բառից բաղկացած կարճ լոզունգներ։ Յերգեր յերգում են ամբողջ խմբով միասին կամ սկիզբը յերգում է մի խումբ, շարունակությունը՝ մյուս խումբը, նայելով յերգի բնույթին։ Խաղում են «ցույց», բարձրացնում են դրոշակը և կանչում «ուռա»։

10. Մանկապարտեզի յեվ տան համար աստղեր կտրելը։ Յերեխաները շաբլոնով թղթի վրա գծում են աստղեր, կտրում և կպցնում են շրջանաձև ստվարաթղթի վրա։ Մի մասը թողնում են սենյակը զարդարելու համար, իսկ մյուսը տանում են տունը զարդարելու համար։ Աշխատանքի ընթացքում ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է թղթի հատկությունների վրա (փայլուն), նշում է, վոր ստվարաթուղթը պինդ է. ջրից կակղում է. նրանից պատրաստում են լոտո, արկղներ։

11. Բեմադրություն պատրաստելը։ Ղեկավարը դիտում է յերեխաների խաղերը և խորհրդակցում յերեխաների հետ բեմադրության բովանդակության մասին։ Յերեխաներին բաժանում է դերերը։

12. Դրոշակներ պատրաստելը։ Ղեկավարը նախորոք պատրաստում է փայտիկներ, կտրտում է կարմիր թուղթ և կտոր։ Յերեխաները կպցնում և մեխում են դրոշակները, ղեկավարը հետևում է, վոր մուրճը կանոնավոր բռնեն։ Դրոշակների մի մասը տալիս են կրտսեր խմբին։

13. Տոնը պատրաստելը։ Յերեխաներն իրենց սենյակը զարդարում են պլակատներով, դրոշակներով։ Զարդարում և կախում են Լենինի նկարը։

14. Զբոսանք փողոցով՝ դիտելու, թե ինչպես են նախապատրաստվում տոնի համար։ Նշում են, թե ինչպես բոլորն ուրախ են։

15. Յերեխաները դիմավորում են ցույցը, վողջունում են լոզունգներով։ Ղեկավարն ասում է, վոր ցույցին մասնակցում են բոլոր ազգի բանվորները, ուրախանում են, վոր նրանք շինել են շատ գործարաններ և այլն։ Ցույցի ժամանակ յերեխաները նշում են վառ մոմենտները (նվագ, կարմիր դրոշակներ և այլն։)

16. Մասնակցություն տոնակատարության. Յերեխաները մասնակցում են բեմադրությանը, խաղերին, յերգերին։ Յուրաքանչյուր խումբ հավաքվում է իր սենյակում։ Նրանք նվագի տակ կազմակերպված ձևով մտնում են դահլիճ։ Սկսում է բեմադրությունն, այնուհետև խաղեր, յերգեր և պարեր՝ հրավիրված յերեխաների և մեծերի հետ։

17. Նկարներ դիտելը։ Յերեխաները դիտում են ամսագրերի նկարները թե Հոկտեմբերյան տոնն ինչպես են տոնել Միության բոլոր ազգությունները։

18. Ազատ ստեղծագործական խաղ։ Զրույցի ժամանակ ղեկավարը նշում է, վոր բանվորները բացի գործարանից կառուցում են նաև մանկապարտեզներ ու դպրոցներ։ Տրվում են տոնի համար պատրաստված նյութերը՝ զգեստներ դրոշակներ և այլն։

19. Նկարչություն. Ղեկավարը տալիս է մեծ թերթիկներ և վառ գույներ, վերհիշում, թե ինչ են տեսնում տոնին և առաջարկում տոնի վերաբերյալ նկարել մի բան։

Հաջող նկարները ցույց է տալիս բոլորին։

20. Պատրաստել ալբոմ «Հոկտեմբերյան տոն» անունով։ *Ղեկավարը առաջարկում է զանազան նկարներից պատրաստել ալբոմ։*

Յերեխաները հաստ թղթի վրա կպցնում են նկարներ և թերթերը միացնում ժապավենով։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Չոր տերևներ հավաքելը յեվ այրելը։ *Աշխատանքի ժամանակ ղեկավարը բացատրում է, վոր տերևներն այրում են նրանց վրա մնացած վնասատուներին վոչնչացնելու համար։ Տերևներից ճանաչում են ծանոթ ծառերը։ Յերեխաները դիտում են տերևների այրվելը։ Ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, վոր այրվելուց ստացվում է ծուխ և մոխիր։ Յերեխաների հետ փորձում է կրակը հանգցնել ավազով, ջրով։ Գալիս են վորոշ յեզրակացության, թե ինչով են հանգցնում կրակը։*

2. Զբոսանքի ժամանակ ղեկավարը խորացնում է յերեխաների պատկերացումները աշնան յերևույթների մասին։

3. Խաղալ հաշվի լոտոյով 4—5 շրջանում։

4. Ղեկավարը տալիս է առարկաների յեվ պարզ յերկրաչափական ձեվերի խոշոր պարզ շաբլոններ։ *Յերեխաները գծում են ուրվագծերը և գծիկներով լցնում են։*

5. Ստեղծագործական խաղեր նյութերով։

8. Ազատ նկարչություն մատիտներով յեվ ռոնձաներկով։

9. Առողջապահական ունակությունների խորացում։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Մանկ. հիմնարկի մասնակցությունը կից արտադրության՝ Հոկտեմբերյան հեղափոխության տոնակատարությանը։ *Գործարանի կուսբջիջի և կուլտ սեկտորի հետ համաձայնության գալ Հոկտեմբերյան տոնակատարության պլանի մեջ մտցնել մանկ. հիմնարկի մասնակցությունը։*

2. Ծնողական հանձնաժողովի նիստ տոնակատարության առթիվ։ *Մշակել տոնակատարության պլանը, պարտականությունները բաշխել խորհրդի անդամների միջև, ձեռք բերել միջոցներ։*

3. Ընդհանուր ծնողական ժողով։ *Զեկուցում նախադպրոցական հասարակական քաղաքական դաստիարակության մասին։ Վորոշվում է, թե ինչպես անցկացնել տոնը։ Ծնողները ներգրավվում են տոնակատարության նախապատրաստական աշխատանքի մեջ։*

4. Զեկուցում արտադրությանը։ *«Ինչ է տվել Հոկտեմբերը յերեխաներին» կամ «Մեր նվաճումները նախադպրոցական դաստիարակության ասպարեզում։» Այդ զեկուցման հիման վրա առաջարկվում է նյութական միջոցների մոբիլիզացիա հիմնարկի նյութական բազան ուժեղացնելու նպատակով։*

5. Մասնակցություն արտադրության պատի թերթին։ *Տալ հոդված «Նախադպրոցականի հասարակական քաղաքական դաստիարակության մասին։»*

6. Տոնակատարություն։ *Ծնողների և պիոներների մասնակցությամբ անկազմակերպ յերեխաների համար կազմակերպել տոնակատարություն։*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 5

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

(19/XI — 15/XII — 22 աշխօր)

1 Հասարակական քաղաքական դաստիարակություն։ *Գործարանում աշխատում են բանվորները և իրենք են ղեկավարում գործարանը։ Նրանք պահպանում են մեքենաները և խնամքով վերաբերվում նրանց հետ։ Բանվորների յերեխաները պետք է մանկապարտեզում լավ աշխատեն և սովորեն։*

Բոլոր ազգերի յերեխաները մեր յերկրում սովորում և աշխատում են միասին։

Առաջ մեր յերկիրը կառավարում եյին դաշնակները, նրանց ժամանակ թուրքերի, հայերի և վրացիների մեջ միշտ կռիվներ եյին ծագում։ Կոմունիստները քշեցին դաշնակներին և իշխանությունը տվեցին բանվորներին և գյուղացիներին։ Հայաստանի խորհրդայնացման օրը տոնում ենք նոյեմբերի 29-ին։

2. Աշխատանքային դաստիարակություն։ *Գիտենալ, վոր ծառի բնից պատրաստում են գերաններ, գերաններից սղոցում են տախտակներ, փայտը մշակում են ատաղձագործը և հյուսնը. սղոցում, ռանդում են (պատկերացում նրանց աշխատանքի մասին)։ Տարբերել տախտակը, ֆաներան, չորսուն։ Կարողանալ սղոցել կանոնավոր և ոգտվել մուրճից։ Գիտենալ, վոր յերկաթից, մետաղից պատրաստում են գործիքների մասեր, մեխեր։ Գիտենալ, վոր զարկից մեխը ծռվում, կոտրվում, տափակում է։ Պատկերացնել, թե ինչպես են աշխատում բանվորները գործարաններում. գիտենալ, վոր անհրաժեշտ է խնամքով վերաբեր-*

ջել գործիքներին և նյութերին: Մանկապարտեզում ամեն ինչ ընդհանուր է՝ անհրաժեշտ է խրար զիջել նյութերը և գործիքները:

3. **Բնագիտություն:** *Գիտենալ, որ անձրևն ու ձյունը թափվում են ամպից, որ երբ ցրտում է՝ ջրի կաթիլները սառչում են և ձյուն դառնում:*

Գիտենալ, որ կրակը լուսավորում և տաքացնում է: Վառելուց փայտը դառնում է ածուխ, ապա մոխիր: Գիտենալ, որ ցրտից ջուրը դառնում է սառույց, գետերի և լճերի ջուրը սառչում է: Սառույցը կտրում և պահում են սառցատնում՝ մթերքները թարմ պահպանելու համար: Գիտենալ, թե որ յեղանակն՝ է անցնում այժմ և որն է գալու: Իմանալ, որ կավից պատրաստում են ամանեղեն, աղյուս: Աղյուսը գործածում են շենքերի համար:

4. **Ֆիզ-դաստիարակություն:** *Հետևել հագուստի մաքրությանը, սենյակի կարգ ու կանոնին: Գիտենալ, որ պարապմունքից առաջ պետք է օդափոխել սենյակը (նեխված օդի վնասը):*

5. **Մաթեմատիկա:** *Հաշիվ 10-ի շրջանում կոնկրետ առարկաներով: Գիտենալ թվանշանները մինչև 3: Ըմբռնել «նեղ» և «լայն» հասկացողությունները:*

6. **Գրագիտություն:** *Կարողանալ ճանաչել և գտնել իր անունը ուրիշ անունների մեջ: Կարողանալ ընդօրինակել իր անունը ձեռագրով: Գիտենալ, որ գրում են ձախից դեպի աջ: Կարողանալ ուղիղ նստել պարապմունքի ժամանակ:*

7. **Կերպարվեստ:** *Կարողանալ աչքի չափով կտրել քառակուսի, շրջան, յեռանկյունը: Կարողանալ կանոնավոր օգտվել վրձինից: Կարողանալ համապատասխան կաղապարով կավից պատրաստել շինարարական նյութ:*

8. **Երգ-յերաժշտություն:** *Քայլել շարքով մեկ-մեկ, դառնալ հակառակ կողմն ըստ ազդանշանի: Վազք տեղում: Կարողանալ բաժանել զույգերը մեկնած ձեռների տարածությամբ քայլել, օձապտույտ առարկաների միջև:*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. **Էքսկուրսիա դեպի մեքենայացված հյուսանոցը:** *Յեթե չկա մեքենայացված արհեստանոց, տանել գյուղի արհեստանոցը կամ ցույց տալ ծանրություններ բարձրացնող մեքենա: Յերեխաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ մեքենաները հեշտացնում են բանվորների աշխատանքը:*

Յերեխաները ստանում են դեն գցելու նյութերը (брос). *Նյութերը դասավորելիս յերեխաները նշում են, որ գործիքների մասերը և մեխերը պատրաստում են մետաղից:*

2. *Դիտել նկարներ, վորոնք պատկերացնում են մեքենաներ, շարժիչներ, ծանրություն բարձրացնող մեքենաներ, կտրվածքներ ամսագրերից:*

Նկարները տրվում են ամրացնելու համար յերեխաների՝ էքսկուրսիայի տպավորությունները և բարձրացնելու հետաքրքրությունները դեպի տեխնիկան: Նկարներից կարելի յե պատրաստել ալբոմ, վորով միշտ օգտվում են: Այդ նպատակի համար կարելի յե օգտածործել „СССР на стройке" *ամսագիրը:*

3. **Խաղ փայտե խոշոր կոնստրուկտորով:** *Սրա հետ կարելի յե տալ էքսկուրսիայից բերած դեն գցելու նյութերը:*

4. **Փայտի աղաս աշխատանք:** *Աշխատանքի ընթացքում ղեկավարը հետևում է յերեխաների իրանի ճիշտ դիրքին: Յերեխաների ուշադրությունը հրավիրում է կտրած տախտակի տարբեր ձևերի վրա՝ տախտակ չորսու, այն բանի վրա, որ անհաջող հարվածից մեխը ծռվում է և տափակվում:*

Աղեղնասղոցով աշխատելու սկզբնական ունակությունը: Աշխատանքից հետո յերեխաները բոլոր իրերը դասավորում են իրենց տեղերը:

5. **Դիտել նկար «Անտառ կտրելը»:** *Յեթե անտառը մոտ է կարելի յե գնալ էքսկուրսիա դեպի անտառ: Նկարը դիտելիս ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, որ ծառերից կտրում են գերանները, գերաններից սղոցում են տախտակներ, որ փայտը մշակում, սղոցում, ռանդում են: Նշվում են աշխատանքի գործիքներ՝ սղոց, կացին: Նկարը թողնում են սենյակում և կախում աշխատանքի անկյունում:*

6. **Զրույց ավագ խմբի հետ աշխատանքի սենյակ կազմակերպելու մասին:** *Մեծ յերեխաներից մեկը պատմում է, թե ինչպես են նրանք վորոշել կազմակերպել աշխատանքի սենյակը (անկյունը), վորպեսզի հեշտ լինի աշխատելը: Պայմանավորվում են, թե ինչպես կազմակերպել աշխատանքը:*

Միջակ խմբին հանձնարարում են պատրաստել կերպարվեստի անկյուն:

7. **Յերեխաները ղեկավարի հետ միասին հավաքում յեվ հաշվում են կերպարվեստի համար անհրաժեշտ նյութերը:** *Պայմանավորվում են, թե ինչ է պակաս, ինչ պետք է գնել, լրացնել:*

8. **Գնումներ:** *Յերեխաները գնում են կոոպերատիվ գնումներ կատարելու. առանձնանում է մի խմբակ՝ բաղկացած 4—5 հոգուց: Խըմբակը ղեկավարի հետ ընտրում է անհրաժեշտ նյութերը, վճարում է ստանում ապրանքը:*

9. **Կերպարվեստի անկյան կազմակերպումը:** *Ղեկավարը հասկացնում է յերեխաներին, որ աշխատանքի հարմարության համար ան-*

հրաժեշտ է իրերը դասավորել վորոշ կարգով։ Պայմանավորվում են նյութերն այնպես դնել, վոր յերեխաները կարողանան հեշտությամբ վերցնել՝ առանց կողմնակի ոգնության։ Բերում են հատուկ դարակ, սեղան։ Յերեխաները բաժանվում են խմբերի։ Մի խումբը ներկի փոշին լցնում են բաժակների մեջ, մյուսը վրձինները, մկրատը, սոսինձը՝ առանձին արկղներում։ Մի խումբ դասավորում է դարակի վրա սև և գունավոր մատիտները, նկարչական թուղթը։ Մյուսները հաշվում են տասական կավի տախտակները, դասավորում և այլն։ Ներգրավում են նաև պիոներները, վորոնք յերեխաների հետ պարապում են սոսնձաներկ։ Ղեկավարը հետևում է, վոր փոշին լուծեն կանոնավոր առանց գնդերի մնացորդների, վոր ներկը լավ խառնեն փոշու հետ։

10. Յերգ։ «Փոքրիկ Աշոտը» կամ այլ աշխատանքային յերգ։

11. Փաթեթի համար կավե տախտակներ պատրաստելը. Պիոներների ոգնությամբ յերախաները սղոցում են նախորոք ռանդած մի սանտիմետր հաստության տախտակները։ Ոգտվում են աղեղնասղոցով։ Պիոներները տախտակները ծակում են ծակիչով։ Յերեխաներն անցքից անց են կացնում թել, կապում հանգույց և հանձնում կրտսեր խմբին։

12. Ազատ խաղ կառուցողական նյութով յեվ կոնստրուկտորով.

13 Ազատ ծեփվածք. Յերեխաները նշում են, թե ինչպես հանգիստ է աշխատել աշխատանքային նոր սենյակում։

14. Ռիթմիկ խաղ. — «Հանելուկ» (բանվորներ) — բանվորներն ինչպես և ինչպիսի գործիքներով են աշխատում անտառում, հյուսնոցում (էքսկուրսիայի տպավորություններից)։

15. Ընթերցել «փոքրիկ կառուցողներ». (Հոկտեմբերիկ ամսագիր 30 թ. № 3), «Հյուսնոցում» (Նույն ամսագիր № 4)։

16. Զրույց Հայաստանի խորհրդայացման մասին. Ղեկավարը ցույց է տալիս համապատասխան նկար, պատմում է Հայաստանի դրության մասին մինչև խորհրդայնացումը, շեշտում է Կովկասի ազգերի միջև յեղած կռիվները և համեմատում ներկա դրության հետ։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Բնության յերեվույթներ դիտելը. Հարց ու պատասխանի միջոցով ղեկավարը յերևան է բերում յերեխաների տպավորությունները — յեղանակները ցրտել են, բոլորը հագել են տաք շորեր։ Նշում են, վոր ծառերը և գետինը ծածկված են ձյունով։ Ձյունը թափվում է ամպերից։ Տերտերները խաբում են, թե ձյունն աստվածն է ուղարկում։

2. Ազատ նկարչություն. Ղեկավարն ստուգում է, թե յերեխաներն ինչ չափով են յուրացրել գույները և նրանց անունները։

3. Յերեխաների անվանաթերթերն ամրացնել կախարաններին. Ղեկավարը յուրաքանչյուրին տալիս է իր քարտը (յերկու հատ), կարդում է վրան գրած անունը։ Յերեխաները կարդում են իրենց անունը և կախում սրբիչի ու վերնազգեստի կախարանին։

4. Կենդանի անկյան կենդանիների յեվ բույսերի սիստեմատիկ խնամքը.

5. Նկարների տակ իրենց անունը գրելը. Յերեխաները քարտից արտանկարում են իրենց ձեռագիր անունը։ Ղեկավարը հետևում է, վոր յերեխաները չկռանան, կանոնավոր բռնեն մատիտը, գրեն ձախից դեպի աջ։

6. Սենյակը կարգի բերելը. Ղեկավարը միշտ հետևում է, վոր յերեխաները պիտույքները, գործիքները և խաղալիքները դնեն տեղերը, շեշտում է, վոր խնամքով և խնայողաբար պետք է վերաբերվել գործիքներին և նյութերին։ Աշխատանքից հետո յերեխաների հետ նշում է, վոր ամեն ինչ սենյակում կարգին է և մաքուր, վոր աշխատանքից առաջ և հետո պետք է ոդափոխել սենյակը։

7. Ազատ բացօթյա խաղ. Տրվում են արկղներ, անիվներ, տախտակներ, պատգարակներ։ Հիշեցնել յերեխաներին, վոր չի կարելի գետնից կեղտոտ իրեր վերցնել։

8. Գունավոր թղթից զանազան ձևեր կտրելը. Յերեխաներն աչքի չափով փայլուն գունավոր թղթից կտրում են ձևեր՝ յեռանկյուն, շրջան և այլն, միաժամանակ ձևերը կպցնում են հաստ թղթին, ընտրում նրանց քանակին համապատասխան թվանշան, կպցնում կողքին։ Ղեկավարը ստուգում է աշխատանքը։

9. Յերաժշտական — ռիթմիկական աշխատանք. Ղեկավարը տալիս է այնպիսի շարժումներ, վոր յերեխաները բաժանվեն զույգերի։ Քայլում են մեկ-մեկ, նվագի ազդանշանով դառնալով դեպի յետ։

10. Դիտել նկարներ և նրանց բովանդակությունը պատմել պարզ և կարճ նախադասություններով։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Ծնողական հանձնաժողովի նիստ նվիրված աշխատանքային դաստիարակության խնդիրներին. Զեկուցումից հետո նախատեսնում են, թե ինչ կարելի յե անել աշխատանքի սենյակի կազմակերպման համար (նյութական միջոցներ գտնելը, կահավորումը պատրաստելը, դեն գցելու նյութերի հավաքման գործի կազմակերպումը, յերեխաների տան միջավայրի կազմակերպումը)։ Նշվում են խմբակային ժողովների աշխատանքային դաստիարակության վերաբերյալ զրույցի թեմաները։ Խորհրդի անդամներից մեկն ընտրվում է պատի թերթում հոդված գրելու համար։

2. Արտադրության կուլտ-հանձնաժողովում զեկուցում դնել նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության մասին:

3. Անհատական զրույցների միջոցով ղեկավարը ծնողներին խորհուրդներ է տալիս, թե տանն ինչպես կազմակերպել յերեխայի աշխատանքը:

ՁՄԵՌԱՅԻՆ ԿՎԱՐՏԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՎԱԳ ՅԵՎ ՄԻՋԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Ձմեռվա կվարտալի աշխատանքները կառուցվում են այն գիտելիքների և ունակությունների հիման վրա, վոր յերեխաները ստացել են I կվարտալում: Շարունակվում է ծանոթությունը սոց-շինարարության հետ:

Լենինի մահվան տարեդարձը և կարմիր բանակի օրն այնպիսի մոմենտներ են, վորոնք ունեն խոշոր նշանակություն յերեխաների հասարակական քաղաքական դաստիարակության համար:

Այդ մոմենտների հետ կապվում է և հետագա աշխատանքը՝ ինտերնացիոնալ դաստիարակության գծով: Ձմեռվա կվարտալում տարվում է նաև խոշոր հակակրոնական աշխատանք՝ կապված բնության հետազոտությունների, փորձերի և հակածննդյան կամպանիայի հետ:

Այս ժամանակամիջոցում յերեխաներն ստանում են բազմատեսակ նյութերի հետ աշխատելու գիտելիքներ և ունակություններ, և ամրացնում են անցածները: Տրվում են նոր գործիքներ և նյութեր (թիթեղ, կտորեղեն, ստվարաթուղթ, կնիքներ), մտցվում են նոր աշխատանքներ, վորոնք զարգացնում են յերեխայի ստեղծագործական ունակությունները (խաղալիքներ, ձմեռվա սարքավորում պատրաստելը):

Յերեխաները ծանոթանում են նոր արտադրության հետ: Այս կվարտալում մեծ նշանակություն ունեն խաղն և աշխատանքը հողամասում: Բնությունը դիտելը, փորձերը ձյունի և սառցի հետ, զանազան տեսակ կառուցվածքները լայնացնում են յերեխաների գիտելիքները ձմեռվա յերևույթների մասին, դաստիարակում են հետազոտական ունակությունները և հակակրոնական զրույցները: Յերեխաները ծանոթանում են ձյան և սառցի հատկություններին, պարզում են հալվելու և սառչելու պատճառները, դիտում են ձմեռող թռչուններին:

Սենյակում խաղալու համար տրվում է բազմազան կառուցողական, կոնստրուկտիվ նյութեր: Մեծ նշանակություն ունի խաղը ձյան հետ և նրանից կառուցվածքներ պատրաստելը:

Յերեխաների առողջության համար մեծ նշանակություն ունի բացօթյա ժամանցը:

Այդ պատճառով մեծ ուշադրություն պետք է դարձնել յերեխաների բացօթյա զբաղմունքների կազմակերպմանը: Ձմեռային կվարտալում յերեխաները ստանում են մի շարք շարժողական և առողջապահական ունակություններ:

Ձմեռվա կվարտալում նախապատրաստվում է չորս կազմակերպող մոմենտ՝

1. «Յերեխաների մասնակցությունը ձմեռվա կյանքի կազմակերպմանը»:
2. «Լենինյան օրերը»:
3. «Գրքի անկյան կազմակերպումը»:
4. «Կարմիր բանակի օրը»:

Ձմեռվա կվարտալի առաջին կազմակերպող մոմենտի նպատակն է զարկ տալ ֆիզ-դաստիարակությանը, լայնացնել յերեխաների գիտելիքները բնության յերևույթների վերաբերյալ, դաստիարակել հետազոտական ունակությունները, տալ հակակրոնական զրույցներ: Հողամասը հիմնականում նախորոք պատրաստում են մեծերը՝ ծնողների, կոմյերիտականների և պիոներների մասնակցությամբ: Յերեխաներն աշխատում են այնքան, վորքան թելադրում են կրթա-դաստիարակչական նպատակները, համաձայն այդ հասակի ֆիզիկական կարողությունների:

«Լենինյան օրերը» կազմակերպող մոմենտը լայնացնում է խորացնում է հասարակական-քաղաքական պատկերացումները և զրույցները: Լենինի մասին տալ պատկերացում, վորպես բանվորների առաջնորդի: Անթույլատրելի չե Լենինին պատկերացնել միայն իբրև պապի, վորը սիրում է յերեխաներին:

Կազմակերպող մոմենտի ամբողջ աշխատանքները, ինչպես Լենինին նվիրված ցերեկույթը պետք է անցնի կենդանի, առույգ: Յերեխաների ուշադրությունը դարձնել վոչ թե Լենինի մահվան, այլ կյանքի գործունեյության վրա:

Գրքի անկյան կազմակերպումն անմիջականորեն կապվում է Լենինի «սովորիր» պատգամի հետ: Այս մոմենտում յերեխաներին մոտեցնում ենք կուլտ-շինարարության խնդիրներին, նրանց մեջ առաջ բերում սովորելու ցանկություն և հետաքրքրություն ու խնամքով վերաբերմունք դեպի գիրքը: Այդ հետաքրքրությունը կարելի է զարթեցնել մանավանդ ավագ խմբի յերեխաների մեջ, վորպեսզի նրանց նախապատրաստենք դպրոցի համար:

Անկյունն անհրաժեշտ է հնարավորության սահմաններում սարքավորել գեղեցիկ: Ղեկավարը պետք է հետևի, վոր այդ անկյունում յերեխաները միայն կարդան, գրեն ու դիտեն նկարները: Ավագ խմբի

Այդ անկյունում կարելի չէ դասավորել և գրագիտության ու հաշվի դիդակտիկ նյութերը։ Անկյունում չպիտի շատ գիրք լինի, ժամանակ առ ժամանակ գրքերը փոխվում են, նոր գրքերը մտցվում են աստիճանաբար մեկ-մեկ։

«Կարմիր բանակի օրը» մոմենտով յերեխաները ծանոթանում են Կարմիր բանակին, իբրև սոց-շինարարության պաշտպանի։

Կարմիր բանակի հետ ծանոթանալը տալիս է մի շարք վառ ազդակներ մանկ. կոլեկտիվի կազմակերպվածությունը բարձրացնելու, ճարպկություն, քաջություն, տոկունություն դաստիարակելու, հետաքրքրություն զարթեցնելու դեպի ֆիզիկական զարգացումը։ Յերեխաներին պարզվում է, որ Կարմիր բանակը ուժեղ է շնորհիվ իր կազմակերպվածության և ձեռք բերած տեխնիկայի։ Անհրաժեշտ է ստեղծել յերեխաների մեջ առույգ, կենսուրախ տրամադրություն և համոզմունք Կարմիր բանակի ուժեղության նկատմամբ։

Այս մոմենտին լայն չափով ծավալվում է յերեխաների խաղը, թե դրսում և թե ներսում։ Ծնողների հետ նախորոք պետք է զրույց ունենալ ձմեռվա ռեժիմի, համապատասխան հագուստի, բացօթյա խաղերի և աշխատանքի անհրաժեշտության մասին։

Ծնողների հետ անհրաժեշտ է նաև մշակել հակակրոնական դաստիարակության խնդիրները, վորպեսզի նրանք պատրաստ լինեն պաշտպանելու այն դրույթները, վոր մանկապարտեզում տրվում են յերեխային։ Հակառակ դեպքում յերեխաները կարող են ընտանիքում հանդիպել բացասական վերաբերմունքի։

Շատ կարևոր է ագիտացիա տանել մանկական հանձնարարելի գրքը տարածելու համար։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 6

«ՁՄԵՌԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ»

(16/XII—10/I-ի—22 աշխ. օր)

1. **Հասարակական-քաղաքական դաստիարակություն.** *Բուրժուաները և տերտերները համոզում են բանվորներին, թե նրանք պետք է աշխատեն բուրժուաների համար և լսեն նրանց։ Բուրժուաներն և տերտերները խանգարում են սոց-շինարարությանը։*

Լենինը բանվորներին սովորեցնում էր կռվել նրանց դեմ։ Բանվորները և պիոներները անաստվածներ են։ Յեկեղեցիները փակվում են, նրանց փոխարեն բացվում են ակումբներ, դպրոցներ։ Յերեխաները պետք է ուրիշ յերեխաներին էլ բացատրեն, վոր աստված չկա։

2. **Աշխատանքային դաստիարակություն.** *Կարողանալ թիթեղի կտորը մեխել տախտակին՝ նախորոք ծակել թիթեղը։ Կարողանալ յերկաթալարը մեխով ամրացնել տախտակին։ Մկրատով կտրել բարակ լարը։ Գիտենալ թիթեղի և յերկաթալարի հատկությունները (ծալվում է, չի վառվում)։ Կարողանալ սկսած աշխատանքն ավարտել։*

Ընտանիքում ծանոթանալ էլեկտրականության գործածությանը (արդուկ, կաթսա, զանգ, սպիրալ)։ Գիտենալ, վոր էլեկտրականության գործածությունը հեշտացնում է մարդու աշխատանքը։

3. **Բնագիտություն.** *Ճանաչել 1-2 տեսակ ոգտակար թռչուններ և իմանալ, վոր նրանց պետք է պաշտպանել։ Ճանաչել վայրենի կենդանիներին (վագրի, նապաստակ, սկյուռ, արջ). իմանալ թե վորտեղ են ապրում և ինչով են կերակրվում։ Գիտենալ, վոր ջուրը ցրտից սառչում է, սառույցը տաքությունից ջուր է դառնում։ Գիտենալ, վոր յեղևնին և շամին տերևների փոխարեն ունեն փշեր։*

4. **Ֆիզ-դաստիարակություն.** *Գիտենալ, վոր բացօթյա խաղը, աշխատանքն ամրացնում են առողջությունը։ Հազալիս և փռշտալիս ծածկել բերանը։ Բերանը չտանել կեղտոտ իրեր՝ սառույց, ձյուն։*

5. **Մաթեմատիկա.** *Ճանաչել թվանշանները մինչև 5։*

6. **Գրագիտություն.** *Նույնը, ճանաչել ընկերների անունները։*

7. **Կերպարվեստ.** *Գիտենալ, վոր սոսնձաներկ պատրաստելուց առաջ փոշին պետք է լավ տրորել։ Կարողանալ ոգտվել վրձինից։ Կարողանալ ձյունից կառուցել շենքեր։*

8. **Յերգ-յերաժշտություն.** *Կարողանալ շարքից կազմել շրջան։ Տարբերել յերգի ռիթմը։ Յերգելիս ծափ տալ։ Կանգ առնել ըստ ազդանշանի։ Շարքից կազմել մի քանի շրջան և հակառակը — տեղում և քայլելով։*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ամեն օր զբոսանքի ժամանակ դիտել ձմռան փոփոխությունները (ծառեր ծածկված յեղյամով, ձյուն, արևի թույլ տաքացնելը և այլն)։

2. Ընթերցել գիրք կամ պատմել նկարի բովանդակությունը ձմռան մասին. *օրինակ. «Մանչուկն ու Կուչիկը» — Դմիտրիևայի, «Սկյուռի արկածները»։ Կապել զրույցի հետ, վոր առողջ լինելու համար, ձմեռը նույնպես պետք է զբոսնել։ Մարդիկ հիվանդանում են ապականված օդից, անհրաժեշտ է հաճախ օդափոխել սենյակը։*

3. Խաղ ձյունով — *ձնագնդի. ձնագնդով տիր խաղալ և զանազան առարկաներ վայր գցել։*

4. Կահավորման վերանորոգումը. *Հանել ձմեռվա հին սարքավորումը (սահնակներ, բահեր, ավելներ) հաշվել ջարդվածները, ջոկել վերանորոգելու համար, հարմարեցնել պահելու տեղը, վորոշել թե ինչը պետք է լրացվի։*

5. Աշխատանք. *Յերեխաները մեխում են, փայտե մասերը միաց-*

2015—3

նում են թիթեղով։ Ղեկավարը բաժանում է աշխատանքը յերեխաների մեջ, ցույց է տալիս աշխատանքի ձևերը։ Յերեխաներին ոգնում են պիոներները։

6. Սովորել ձմեռվա յերգ. «Սպիտակ փափուկ ձյուն»...

7. Խաղ յեվ աշխատանք ձյունով. Հողամասում ձյունից կառուցել տուն, գործարան, ձնամարդ և այլն։ Իբրև լրացուցիչ նյութ տալ փաներա, յերկաթալար, փայտեր, դրոշակներ, խաղալ ամեն որ։ Ղեկավարն ոգնում է աշխատանքներին, յերեխաների ուշադրությունը հրավիրում է ձյան հատկությունների վրա, լրացնում է անհրաժեշտ նյութերը կազմակերպում է կոլեկտիվ խաղեր, հետևում է, վոր յերեխաները գործիքները դասավորեն իրենց տեղերը, ոգնեն փոքրերին։

8. Նկարչություն. Կապույտ կամ մոխրագույն թղթի վրա՝ կավիճով և ածուխով

9. Եքսկուրսիա դեպի գետ կամ լիճը՝ տեսնելու, թե ինչպես ջուրը սառել է. գտնում են պատճառը (ցրտից, սառնամանիքից)։

10. Խաղ լոտոյով՝ ձմեռվա բովանդակությամբ։

11. Հետազոտել բակը սառցե բլրի տեղը վորոշելու համար։

12. Ոգնություն մեծերին սառցե բլուր պատրաստելու համար։ Մեծ յերեխաները ձյունը լցնում են արկղների մեջ և սահնակով տանում վորոշված տեղը։ Յերեխաները բաժանվում են կառապանների և բեռնակիրների, ստանում են տարբեր նշաններ։ Բլուրը պատրաստում են մեծերը (ղեկավարները, ծնողները, պիոներները)։ Յերեխաներն ոգնում են. միջին խումբը վերջացնում է աշխատանքը քիչ շուտ։ Աշխատանքի տևողությունը 20–30 րոպե։ Աշխատանքը շարունակվում է 3 որ։ Վերջում կազմակերպվում է ծնողական շաբաթօրյակ. ցանկալի է շաբաթօրյակը նշանակել ծննդի առաջին որը։

Շաբաթօրյակի ժամանակ պիոները պատմում է, վոր պիոներները չեն տոնում յեկեղեցական տոներ. դա Լենինի պատգամն է։ Յերեխաները վորոշում են այդ որն աշխատել և հետո տուն տանել համապատասխան պլակատ։ Զուգընթացաբար շենքում անց են կացնում հետևյալ զբաղմունքները (13. 14. 15)։

13. Գունավոր մատիտներով նկարել ձմեռվա զվարճություններ։

14. Պատրաստել տան համար հակակրոնական պլակատներ. Մեծերը նախորոք պատրաստում են պլակատներ։ Յերեխաները գունավորում և տանում են տուն։

15. Խաղալիք պատրաստել (սահնակներ յեվ բահեր)։ Ղեկավարը նախորոք պատրաստում է սահնակի մասերը։ Յերեխաները միացնում են մասերը մեխերով և թիթեղով։ Աշխատանքի ընթացքում յերեխաներն իմանում են, վոր թիթեղը ծալվում է, վիշը կտրում են մկրատով և կպցնում սահնակին։

16. Յերգ ձմեռվա զվարճությունների մասին — «Ահա յեկավ ձմեռը»...։

17. Դիտել ջրի սառչելը. Յերեխաները դիտում են, թե ինչպես են ջրում բլուրը և ինչպես է նա սառչում։

18. Եքսկուրսիա դեպի այգի։ Դիտում են թռչուններին, զրույց են անում, վոր նրանց պետք է պաշտպանել. Ցանկալի յե ցույց տալ փշատերև ծառեր։

19. Ընթերցել գիրք կենդանիների ձմեռվա կյանքի մասին՝ «Նապաստակը» «Արջը», «Սկյուռը», դիտել նկարները, խոսել, թե վորտեղ են ապրում, ինչով են կերակրվում։

20. Թռչունների համար կերի սեղան պատրաստել։ Սեղանը պատրաստում են ֆաներայից, տախտակի չորս անկյունները ծակում են, վիշն անցկացնում և կախում։ Յուրաքանչյուր որ հացի փշրանքներով կերակրում են թռչուններին և դիտում նրանց։

21. Խաղ՝ ստիմուլ տվող նյութերով։ Յերեխաներին տրվում է բամբակ, մարդկանց, կենդանիների, ծառերի ֆիգուրաներ, մամուռ, փայտիկներ։

22. Ծեփվածք ըստ առաջադրության՝ «Ձմեռն անտառում»։ Լրացուցիչ տրվում են փայտիկներ, յեղեվնու ճյուղեր։

23. Սովորել վոտանավոր ձմեռվա մասին։

24. Սղղալ սահնակներով (գնացք խաղալ)։

25. Փորձեր ձյան հետ — ա) յերեխաները ներս են բերում ամանը լիքը ձյուն և դիտում, ինչպես նա հալվում է, ուշադրություն են դարձնում, վոր շատ քիչ ջուր է ստացվել. բ) ջուրը դուրս են բերում և դիտում, թե ինչպես է սառչում։

26. Պատրաստել գունավոր սառույց յեվ զարդարել հողամասը։ Յերեխաները ջուրը ներկում են, լցնում ամանների մեջ, հաստ թելի կտորները ծալում են հանգույցի ձևով և դնում ջրի մեջ, տանում են դուրս՝ սառեցնելու։

27. Կազմակերպված վարժություններ հողամասում։ Հողամասը զարդարում են դրոշակներով, գունավոր ապակիներով, հրավիրում պիոներներին, ծնողներին։ Սահում են սառցե բլրից, սղղում և այլն։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Սղոց. շինարարական աշխատանք աշխատանքի սենյակում։ Զանազան նյութերով՝ փայտ, թիթեղ, վիշ, յերկաթալար, մեխ, ներկեր։ Ղեկավարը ցույց է տալիս աշխատելու ձևը, ոգնում և ցույց է տալիս, թե ինչպես գործածել գործիքները։

2. Ստեղծագործական խաղ կառուցողական նյութով. Յերեխաներին տրվում են ինքնաշեն խաղալիքներ, շուժիկներ։

6. Զրույց ավագ խմբի յեվ պիոներների հետ։ *Մեծերը պատմում են, թե ինչպես են նրանք կատարելու Լենինի պատգամները։ Միջին խմբին առաջարկում են նոր մանկական սենյակի համար խաղալիքներ պատրաստելու։ Դասավորում են աշխատանքն իրար մեջ։*

7. Խաղալիքներ պատրաստել: *Յերեխաները կարող են պատրաստել մոտավորապես հետևյալ խաղալիքները՝ ա) լոտո (կտրում և կպցնում են նկարներ նախորոք պատրաստված քարտերի վրա), բ) ավտոմոբիլ արկղից (անիվները պատրաստ են, խփում են սռնին, կցում անիվները, ներկում), գ) դարակ գրքերի համար (տախտակը պատրաստ է, յերեխաները միացնում են մասերը թելի կոճերով, վերջով և ներկում), դ) ինքնաշեն խաղալիքներ լուցկու տուփերից։ Աշխատանքը շարունակվում է 1-2 օր։ Բոլոր յերեխաներն աշխատում են միաժամանակ խումբ-խումբ։ Ղեկավարը նախորոք պետք պատրաստի նյութը. նա բաժանում է աշխատանքը յերեխաների մեջ, ցույց է տալիս, թե ով ինչ պետք է անի։ Աշխատանքի ժամանակ օգնում է յետ մնացողներին, շեշտում է, վոր իրերը պատրաստում են վոչ թե իրանց համար, այլ մանկական սենյակի։*

8. *Սովորել* Լենինին նվիրված վոտանավոր։

9. Աշխատանքից հետո յերեխաները *հաշվի յեն առնում իրենց կատարած աշխատանքը, ընտրում են յերկու ներկայացուցիչ խաղալիքները մանկական սենյակին հանձնելու համար։*

10. Պատրաստել պլակատ։ *Յերեխաները պլակատներից կտրում են Լենինի նկարը, շինարարության նկարներ և, ըստ ղեկավարի ցուցմունքի, կպցնում մեծ թղթի վրա։ Լենինի նկարի տակ խոշոր տառերով կպցնում են «Լենին». յերեխաները կարդում են գրածը։*

11. Զբոսանք։ *Յերեխաները դիտում են փողոցի զարդարանք, Լենինի նկարները, սգո զարդերը, դրոշակները։*

12. Լենինի նկարները կպցնել *թերթիկներին, տակը գրել «Լենին»։ Այդ պլակատները յերեխաները տուն են տանում։*

13. Հանդիսավոր նիստ։ *Մեծերից մեկը կամ ղեկավարը պատմում է Լենինի մասին, վորպես բանվորների առաջնորդի, տալիս է նրա պատգամներ։ Յերեխաները լսում են նվագը, պատմում են, թե ինչպես են իրենք իրագործում Լենինի պատգամները։ Արտասանություններ, ընդհանուր քայլերթ։ Յերեկույթից հետո յերեխաներին բաժանվում են Լենինի նշանները։*

14. Ազատ նկարչություն գունավոր մատիտներով։

15. Լենինի յեվ շինարարության մասին պատրաստել ալբոմ։ *Կարելի յե գնել ալբոմ և բացիկներ Լենինի մասին։ Յեթե այդ հնարավոր չէ, յերեխաները կարող են պատրաստել իրենք՝ հաստ թղթի թերթիկների վրա կպցնում են նկարներ, բացիկներ, գ՛ կավորի ոգնությամբ միացնում են թերթիկները ժապավենի միջոցով։*

16. Նկարները դիտելը: *Ղեկավարը զուգընթացաբար հարցերի միջոցով ստուգում է յերեխաների ստացած պատկերացումները Լենինի մասին։ Առաջարկում է գտնել «Լենին» բառը։*

17. Ազատ խաղ՝ *հայտնաբերելու համար յերեխաների տպավորությունները։ Յերեխաներին տրվում են նյութեր։*

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. *Նկարել և ապել ձյունի վրա։ Դիտել կենդանիների և թռչունների հետքերը և նրանց կերակրելը։*

2. *Պատրաստել սառցե գունավոր ապակիներ ձյունե շինությունների համար։*

3. Տալ „мой первый счет" *լոտո մինչև 5-ը։*

4. Մտցվում է հաճախման տախտակ յերեխաների անուններով։ *Յերեխաները կրկնում են ընկերների անունները։ Այս աշխատանքը կապված է հերթապահության տախտակի գործածության հետ։*

5. Շինարարական աշխատանքների *ընթացքում խորացվում են* վերեվ ներքեվ, լայն-նեղ *հասկացողությունները։*

6. Ծեփում: *Յերեխաները կավից պատրաստում են կառուցողական նյութ, կողքերը հարթում են տախտակներով, խորանարդից յեռանկյուն պատրաստելու համար վերջով կտրում են մեջտեղից, չորանալուց հետո ներկում և խաղում։*

7. Զբոսանք։ *Յերեխաների ուշադրությունը դարձնել տրամվայների, ավտոների շարժման վրա (ռելսեր)։*

8. Յերգ-յերաժշտություն։ *Յերգ փողոցի մասին «Բանակայինն է գնում» և այլն։ Ռիթմիկ խաղ «փողոցի շարժումը», կանգ առնել ըստ ազդանշանի։*

9. Բացոթյա խաղ։ *Յերեխաները ներկայացնում են ավտո, գնացք, սայլ, տրամվայ և այլն։ Խաղը կազմակերպում է ղեկավարը և ինքը մասնակցում։*

10. Սեղանի խաղեր — *«գունավոր դոմինո», «հաշվի լոտո», կոնստրուկտոր, կենդանիների, ծառերի ձևեր ֆաներայից։ Շարժիչներ՝ ավտո, տրամվայ և այլն։*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. *Լենինյան որերին կազմակերպել մանկական սենյակ՝ տրամադրության կանանց սպասարկելու համար։*

2. *Զրույցներ ծնողների հետ կոմ. դաստիարակության մասին։*

3. *Պիոներներին և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին հրավիրել մասնակցելու հանդիսավոր նիստին։*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 8.

«ԳՐՔԻ ԱՆԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ»

(31/I—15/II-ի. 14 աշխ. օր)

1. **Հասարակական — քաղաքական դաստիարակություն:** *Խորհրդային իշխանությունը կառուցում է բանվորների և նրանց յերեխաների համար ամենալավ դպրոցները, մանկապարտեզները, տպագրում է գրքեր։ Մեզ մոտ աշխատավորների ցանկությամբ յեկեղեցիները փակվում են, նրանց փոխարեն շինվում են դպրոցներ, ակումբներ, մսուրներ։ Դպրոցներում, մանկապարտեզներում և մսուրներում դաստիարակվում են բոլոր ազգերի յերեխաները.*

2. **Աշխատանքային դաստիարակություն:** *Կրկնել և ամրացնել թղթի, ստվարաթղթի և փայտի հետ աշխատելու ունակությունները։ Թղթից պատրաստում են տետրակներ, գրքեր, լրագրեր. ստվարաթղթից պատրաստում են լոտո և գրքերի կազմը։ Մեզ հարկավոր է շատ թուղթ՝ գրքեր և լրագրեր տպելու համար։ Կարողանալ ոգտվել էլեկտրականությունից և ջրմուղից։*

3. **Բնագիտություն.** *Ծանոթություն վայրենի կենդանիների մասին (վոզնի, աղվես, գայլ. վորտեղ են ապրում, ինչով են կերակրվում։ Ծանոթություն Հյուսիսային յերկրների կենդանիների (սպիտակ արջ, յեղջերու) և տաք յերկրների կենդանիների մասին (փիղ, վագր, կապիկ)։ Ցույց տալ նրանց նկարները, պատմել հետաքրքիր պատմություն նրանց կյանքից։ Հասկացողություն «ցերեկ» ու «գիշեր»։*

4. **Մաթեմատիկա:** *Հաշիվ մինչև 10 կոնկրետ առարկաներով։ Ճանաչել մինչև 5 թվանշանները։*

5. **Գրագիտություն:** *Կարողանալ կարդալ ընկերների անունները։ Կարողանալ գրել բացականների անունները (արտանկարել)։*

6. **Կերպարվեստ:** *Կարողանալ տարբերել հիմնական և լրացուցիչ գույները։ Թղթից և դեն գցելու նյութերից շինել ամենահասարակ խաղալիքներ։ Ոգտվել կարտոֆիլի, խցանի, կոճի կնիքներից։*

7. **Յերգ-յերաժշտություն:** *Կարողանալ ծափերով տալ յերգի ռիթմը։ Մի սյունաշարքից կազմել մի քանի փոքր սյունաշարքեր և հակառակը։ Առանց ղեկավարի ցուցումների քայլել ձեռների զանազան շարժումներով (շարժումների ֆելագրություն)։*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. **Զրույց մեծ յերեխաների մասնակցությամբ։** *Ղեկավարը հիշեցնում է յերեխաներին, վոր Խորհրդային իշխանությունը հոգ է տանում բանվորների և նրանց յերեխաների սովորելու մասին, կառուցում*

և դպրոցներ, բաց է անում գրադարաններ։ Մեծ յերեխաները պատմում են, վոր նրանք ուզում են կազմակերպել գրքի անկյուն և առաջարկում են միջակ խմբին էլ այդ կատարել։

2. **Գրքեր ստուգելը։** *3 ընկերները հավաքում են պատռված գրքերը՝ վերանորոգելու համար։ Յերեխաներից մի քանիսին ուղարկում են կրտսեր խումբը՝ նրանց գրքերը վերանորոգության վերցնելու համար։*

3. **Գրքերի վերանորոգում:** *Յերեխաները ղեկավարի ոգնությամբ ստուգում են գրքերի թերթիկները, կտրում են նեղ թղթեր, սոսնձում և կպցնում պատռած գրքին։ Ղեկավարը կարում է գիրքը։ Աշխատանքի ընթացքում նշվում է, վոր գիրքը թղթից է, կազմը՝ ստվարաթղթից։ Այս աշխատանքի ընթացքում յերեխաները բաժանվում են 3 4 հոգուց կազմված բրիգադների։ Յուրաքանչյուր բրիգադա ստանում է վորոշ առաջադրություն, որինակ՝ վերանորոգել 4-5 գիրք։ Ղեկավարը հետևում է յերեխաների աշխատանքին, ցուցումներ է տալիս։*

Աշխատանքից հետո սենյակը կարգի յեն բերում։

4. **Յերգ յեվ լոզունգների կոլեկտիվ արտասանություն:**

5. **Վիտրինա յեվ դարակ պատրաստելը:** *Վիտրինայի և դարակների մասերը նախորոք պատրաստում են մեծերը։ Յերեխաները մեխերով միացնում են տախտակները։ Բոլոր յերեխաները մասնակցում են աշխատանքին։*

6. **Անկյան կազմակերպումը:** *Ղեկավ. ըը պայմանավորվում է յերեխաների հետ, թե ինչպես պատրաստեն անկյունը. ընտրում են տեղը, դասավորում կահկարասին՝ սեղանը (ցանկալի է շրջանաձև կամ ձվաձև), աթոռակները, կախում են վիտրինան, դարակները։*

7. **Գրքերը դարակների վրա դասավորել:** *Ղեկավարը բաժանում է գրքերն ըստ թեմաների։ Յերեխաները կպցնում են թվանշանները գրած քառակուսի մանր թղթերի վրա, վորոնք նախորոք պատրաստել է ղեկավարը։*

8. **Դրամատիզացիա:** *Ղեկավարն առաջարկում է խաղալ այն, ինչ նկարագրված է ծանոթ գրքում (ընտրում է այնպիսի գիրք, վորը հարմար է դրամատիզացիայի համար)։ Խաղի համար մտցնվում են բովանդակությանը համապատասխան զգեստներ, առարկաներ, ինչպես նշված են գրքում և այլն։ Յերեխաները բաժանվում են խմբերի — մեկը ներկայացնում է, մյուսը դիտում։*

9. **Գրքի անկյան համար պլակատ պատրաստել:** *Յերեխաները կտրում են համապատասխան բովանդակության նկարներ և փակցնում մեծ հաստ թերթի վրա։ Պլակատի բառերը յերեխաները կարող են տպել շտամպով, ըստ ղեկավարի ցուցմունքի։ Յեթե յերեխաները մինչև պլակատ պատրաստելը չեն ոգտվել շտամպից, պետք է մի քիչ վարժեցնել։*

10. **Ղեկավարն ընտրում է 2 հերթապահ գրքի անկյանը հսկելու**

համար (1-2 րոպե)։ Պատմանավորվում է յերեխաների հետ նրանց պարտականությունների մասին։ Նրանք պետք է հսկեն կարգ ու կանոնին, սրբեն փոշին, հետևեն, որ գրքերը չպատռեն և դնեն տեղը։

11. Նոր գրքի ընթերցումը անկյունում։

12. Նկարչություն գունավոր մատիտներով (պատրաստել զարդ գրքի անկյան համար)։

13. Խաղ — կինո։ Ցույց տալ շարժումներ նվագի տակ։

14. Յերեխաները գնում են ավագ խմբի մոտ տեսնելու ստվերային թատրոն։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Մաթեմատիկա։ *Տալ* «Мой первый счет» *հաշվի լոտո։*

2. Գրագիտություն։ *Բարդացնել հաճախման տախտակի աշխատանքը։ Նշել ոչ միայն բացականերին, այլև ցուցակներ կազմել բժշկի, տնտեսավարի համար։ Աշխատանքը կատարվում է բացակաների անունները արտանկարելու միջոցով։*

3. Յերգ-յերաժշտություն՝ *կրկնություն ձմեռվա յերգերի և ռիթմիկ շարժումների։*

4. Դեն գցելու նյութերից պատրաստել ամենահասարակ խաղալիքներ։ *Յերեխաներին տրվում են կոճեր, թուղթ, ստվարաթուղթ, սոսինձ և այլն։ Խաղալիքները պատրաստվում են ինքնուրույն։ Ղեկավարն օգնում է այն դեպքում, յերբ յերեխաները խնդրում են. ինքը մտցնում է զանազան նյութեր նրանց ստեղծագործությանը զարկ տալու նպատակով։*

5. Կազմակերպված բացօթյա շարժական խաղ։

6. Դիտել կենդանիների նկարներ։ *Ղեկավարը բացատրություն է տալիս նրանց կյանքի վերաբերյալ։*

7. Սեղանի խաղեր — «*Գազանանոց*», «Мой первый счет», «*գույների լոտո» (զույգ գույներ)։ Յերեխաների ազատ օգտագործման համար տրվում են կենդանիների, թռչունների նկարներ ֆաներայի վրա (ֆիգուրներ), կառուցողական նյութ, մոզաիկա և այլն։*

8. *Կարիք յեղած դեպքում ղեկավարը առաջարկում է բաց անել ջրմուղի ծորակը, վառել էլեկտրականությունը, օգտագործել շտեպսելը։ Ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, որ էլեկտրականությունը և ջրմուղը հեշտացնում են մարդու աշխատանքը։*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմել միջին խմբի համար հանձնարարելի գրքերի ցուցակ։

2. Անհատական զրույցներ ծնողների հետ։ Բացատրել, թե ինչպիսի

գրքեր պետք է տալ յերեխային։ Շեշտել, որ գիրքը պետք է նախ և առաջ ստուգել և ապա տալ յերեխային, նշել հանձնարարված գրքերը։

3. Կազմակերպել մանկական գրքերի վաճառք։

Մանկապարտեզի ծնողական հանձնաժողովը և մանկ. կոլեկտիվը միասին գնում են հանձնարարելի մանկական և հանրամատչելի մանկավարժական գրականություն։ Կազմակերպվում է վաճառք, որի ժամանակ տարվում է ագիտացիա լավ գրքի համար։ Վաճառքը կազմակերպել այնպիսի ժամանակ, որ մասնակցեն բոլոր ծնողները։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 9

«ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՕՐԸ»

(16 II — 29 II 12 աշխ. օր.)

1. Հասարակական — քաղաքական դաստիարակություն։ *Կարմիր բանակայինները մեր յերկիրը թշնամիներից պաշտպանելու համար սովորում են հրացան, թնդանոթ արձակել, թռչել օդանավով։ Կարմիր բանակ ընդունվում են բոլոր ազգերի աշխատավորները։ Կարմիր բանակի օրը — բոլոր ազգերի աշխատավորների և նրանց տոնն է։*

2. Աշխատանքային դաստիարակություն։ *Փայտով, թիթեղով կատարվող աշխատանքների խորացում։ Թիթեղը և ստվարաթուղթը ձկվում, ծալվում են. գծացվում են։ Օգտագործել թիթեղ, փայտ, ռետին։ Կարողանալ պլանավորել կարճատև աշխատանքը։ Իրարու օգնելով միասին աշխատել։*

3. Բնագիտություն։ *Խորացնել ձմեռվա մասին պատկերացումները։ Գիտենալ, որ խիստ սառնամանիքների ժամանակ ձյունը դառնում է փխրուն։ Ճանաչել ծառերի 2 տեսակը ըստ կեղևի և բողբոջների։ Դիտել կենդանիների, թռչունների և մարդու հետքերը ձյան վրա։*

4. Ֆիզ. դաստիարակություն։ *Գիտենալ ֆիզիկական վարժությունների, խաղի և աշխատանքի օգուտն առողջության համար։*

5. Մաթեմատիկա։ *Քանակական և ըստ կարգի հաշիվ մինչև 10։ Հասկացողություն յեռանկյան, քառանկյան, հնգանկյան մասին։ Աջ, ձախ, շուրջը — կողմնորոշումներ։*

6. Գրագիտություն։ *Կարողանալ ինքնուրույն ստորագրել իր նկարի տակ կամ ծրարի վրա։ Ծրարները բաժանել ընկերներին ըստ նրանց վրա յեղած մակագրությունների։*

7. Յերգ — Յերաժշտություն։ *Կարողանալ կազմել սյունաշարք և վերակազմել շարքի* (шеренга)։ *Քայլելու ժամանակ յերկու ոտի վրա ցատկելով դառնալ։ Վազքից անցնել քայլի և հակառակը (ըստ նվագի կամ ազդանշանի)։*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիտել կառուցվող դպրոցների, գործարանների, մանկապարտեզների նկարներ: Զուգընթացաբար տարվում է զրույց, որ այդ բոլորը կառուցվում է բանվորների երեխաների համար։ Բուրժուաներն ուզում են խանգարել։ Տրվում է նկարներ՝ կարմիր բանակի վերաբերյալ։

2. Էքսկուրսիա դեպի զորանոց: Էքսկուրսիայի ժամանակ ուշադրություն դարձնել կարմիր բանակայինների կազմակերպվածության, զորանոցների կարգապահության վրա։

Երեխաները տեսնում են զենքեր (հրացան, թնդանոթ), ձիեր, զինվորական շներին (հետախույզ) և այլն։ Կարմիր բանակայինը պատմում է, որ կարմիր բանակում ընդունվում են բոլոր ազգերի աշխատավորները, չեն ընդունվում կուլակները և բուրժուաները։ Կարմիր բանակայիններն ուժեղ և առողջ լինելու համար շատ են սովորում և ֆիզկուլտուրայով զբաղվում։

3. Խաղալիքներ պատրաստելը: Ղեկավարը երեխաներին տալիս է դեն գցելու նյութեր՝ փայտ, թիթեղ նախորոք ծակած, ռետին և այլն, առաջարկում է պատրաստել զորանոցում տեսած զենքերից։

4. Ընթերցել պատկերազարդ գիրք կարմիր բանակի մասին:

5. Երգ կարմիր բանակի մասին:

Նվագի տակ խաղալ «Կարմիր բանակ»։ Երեխաները ներկայացնում են հեծելազոր, հետևակ, հրաձիգ՝ համապատասխան շարժումներով։ Արտասանել համապատասխան լոզունգներ։

6. Ազատ ստեղծագործական խաղ: «Կարմիր բանակայիններ»։ Տրվում են կարմիր բանակայինների, նավաստիների ֆիգուրներ, կառուցողական նյութ, արկղեր, խաղալիքների ժողովածու «Оборона СССР»։

7. Պլակատ (լուսատիպ)։ Երեխաները կտրատում են հին ամսագրերից բանակայինների, տանկերի, զենքերի, նավերի, սավառնակների նկարներ։ Ղեկավարը կազմում է պլակատ և հիշեցնում, որ կարմիր բանակն ունի հրաձիգ, հետևակ, հեծելազոր, օդաչու և նավատորմ։ Նկարներ դասավորում են լուսազգայուն թղթի վրա և դնում լույսի տակ։

Ղեկավարը երեխաների ուշադրությունը դարձնում է թղթի գույնի փոփոխվելուն և նկարների տեղերը գոյացած ստվերանկարների (силуэт) վրա։ Նկարներն ամրացնում է ղեկավարը՝ աղաջրով կամ հատուկ դեղով (ֆիկսաժ) երեխաները դիտում են։

8. Սենյակը զարդարելը: Ղեկավարը բերում է բանակայինների, շինարարության, Վորոշիլովի նախորոք պատրաստած խոշոր դեմքի նկարներ։ Երեխաները դիտում են նկարները և կախում պատերից։

9. «Կարմիր բանակի տոնը»։ Կարմիր բանակայինը ողջունում է երեխաներին, պատմում է կարմիր բանակի մասին, ասում է, որ երեխաներն էլ առողջ լինելու համար պետք է խաղան և աշխատեն բացօթյա, սովորեն կարմիր բանակայինների նման։ Ղեկավարը նախորոք պետք է պայմանավորվի բանակայինի հետ, որ ողջույնի խոսքը տևի 5 րոպեից ոչ ավել։ Երեխաները երգում են, քայլում, բեմադրություն տալիս, արտասանում լոզունգներ։ Այդ նյութերը նախապատրաստվում են նախորդ ազատ-ստեղծագործական խաղերի ժամանակ։ Ցանկալի է տոնակատարությունը անցկացնել բացօթյա։

10. Դիտել բանակայինների ֆիզ-կուլտ վարժությունների նկարներ։

11. Ազատ խաղ: Երեխաներին տրվում են զինվորական գլխարկներ, հրացաններ, դրոշակներ, թմբուկ, պարան, շինարարական նյութեր։

12. Նկարչություն «Կարմիր բանակը» թեմայով։

13. Աշխատանք դեն գցած նյութերով։ Տրվում են տախտակներ, ֆաներա, անիվներ, կոնսերվի բանկաներ, կարմիր թուղթ և այլն։

14. Ծեփվածք: Տրվում են լրացուցիչ նյութեր՝ թելի կոճ, փայտիկներ։

15. Ստվերային թատրոն: Երեխաներն ավագ խմբի հրավերով կազմակերպված ձևով գնում են ավագ խումբը՝ տեսնելու նրանց ստվերային թատրոնը։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Դիտել պատկերազարդ գիրք ձմռան յեղանակի և կենդանիների մասին։

2. Լուսատիպ: Երեխաներին տրվում են յերկրաչափական ձևեր և լուսազգայուն թուղթ։ Երեխաները թղթի վրա շարում են այդ ձևերը։ Ղեկավարն աղաջրով կամ հատուկ հեղուկով ամրացնում է նկարը։

3. Ծանոթ յերգեր յերգելը յեվ ռիթմիկ շարժումներ:

Խաղ «կինո», (տպավորություններ ավագ խմբում տեսած ստվերային թատրոնից)։

4. Ազատ նկարչություն գունավոր մատիտներով:

5. Սեղանի խաղեր.

6. Ներս բերել ուռենու ու բարդու ճյուղերը և դնել ջրով լիքը շշերի մեջ՝ դիտելու համար։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կապ հաստատել զինվորական մասի հետ։ Պայմանավորվել երեխաների դեպի զորանոց էքսկուրսիայի մասին և կարմիր բանակայինները մանկապարտեզ այցելելու մասին։

2. Ներգրավել ծնողներին և մանկավարժական կազմը Պաշավիաքիմի ու Կարմիր Խաչի խմբակներում։

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿՎԱՐՏԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ (6 ՏԱՐ.) ՑԵՎ ԱՎԱԳ (7 ՏԱՐ.) ԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Գարնան սեզոնի ընթացքում շրջապատող բնության մեջ զգալի փոփոխություններ են կատարվում և երեխաների մաքուր օդում մնալու ժամանակամիջոցն երկարում է։ Այդ ժամանակամիջոցում անցնում են Մարտի 8-ի և Մայիսի 1-ի տոնակատարությունները՝ հագեցած ուրախ տպավորություններով և հասարակական-քաղաքական մոմենտներով։ Այս բոլորը նպաստում է էլ ավելի լայնացնելու մանուկների դիտողությունների ծավալը թե բնության երևույթների և թե հասարակական-քաղաքական մոմենտների շուրջը։

Մյուս կողմից, շնորհիվ եղանակների տաքանալուն և այն հնարավորություններին, որ մաքուր օդում կարելի է մի շարք պարապմունքներ կազմակերպել, նպաստավոր պայմաններ են ստեղծվում երեխաների հետ առողջացման խնդիրները խորացնելու համար։ Այս խնդիրներն իրականացնելու համար պետք է երեխաների խաղերն ու պարապմունքներն անհապաղ կազմակերպել բացօթյա բակում, օգտագործելով երեխաների բնական հետաքրքրությունը դեպի բնության երևույթները, շրջապատող հասարակական կյանքը, որոնց հետ երեխաների համար համեմատաբար հեշտ կլինի ծանոթանալը։

Հողամասում հետաքրքիր աշխատանքների ձևերի կազմակերպումը, վերակենդանացող բնությունը դիտելը, երեխաների էքսկուրսիաներն և զբոսանքներն՝ այս բոլորը պետք է խթան հանդիսանան բնագիտական աշխատանքները խորացնելու և ընդլայնելու թե դաշտում և թե հիմնարկի ներսում. բնության անկյունում։

Երեխաների առողջացման խնդրում ղեկավարի աշխատանքը գլխավորապես պիտի լինի այն, որ որքան կարելի է երկարացնի և հետաքրքիր դարձնի երեխաների մաքուր օդում մնալու ժամկետը։

Անհրաժեշտ է թե երեխաների և թե ծնողների հետ աշխատանք տանել, երեխաների հագուստի թեթևացման և ռացիոնալ լինելու վերաբերյալ, որպեսզի հագուստը խաղերի և աշխատանքի ժամանակ չխանգարի երեխաների շարժումներին և չքրտնեցնի։

Գարնան սեզոնը լայն հնարավորություններ է տալիս, երեխաների հետ անց կացնել հասարակական-քաղաքական դաստիարակության աշխատանքները։

Մայիսի 1-ի տոնակատարությունը, որն առանձին տեղ է գրավում գարնան կվարտալի աշխատանքներում, պետք է երեխաների հետ տարվելիք մանկավարժական աշխատանքների մեջ արտացոլվի մեծ չափով։

Մայիսի 1-ի տոնակատարության կապակցությամբ պետք է երեխաների հետ տանել ինտերնացիոնալ բնույթ կրող աշխատանքներ, հարստացնել նրանց ունեցած գաղափարները մյուս երկրների տարբեր ազգերի աշխատավորների աշխատանքի և պայքարի մասին։

Բնագիտական աշխատանքը մեծ հնարավորություններ է տալիս երեխաների մտահորիզոնը լայնացնելու գյուղատնտեսական աշխատանքների շրջանում, ծանոթացնելով նրանց ցանքի հիմնական ձևերին, սածիլման, բույսերի խնամքին նաև նախնական գաղափարներ է տալիս գյուղատնտեսության մեջ գիտության և տեխնիկայի ունեցած դերի մասին։

Բացի վերոհիշյալից այս ժամանակամիջոցը լայն հնարավորություններ է տալիս երեխաների աշխատանքներում կազմակերպելու հետաքրքիր և ստեղծագործական նոր ձևեր, կապված անկյան կազմակերպման, Մայիսմեկյան տոնակատարության պատրաստության, խաղալիքների և զանազան տեխնիկական հարմարությունների պատրաստության և խաղերի ու հողամասում տարվող աշխատանքների հետ։

1. **Գարնանային աշխատանքներ.** Այս կազմակերպող մոմենտի հիմնական խնդիրն է բնության մեջ երեխաների կատարած աշխատանքի միջոցով, երեխաներին հասկացողություն տալ երևույթների և նրանց միջև եղած պատճառական կապի մասին։ Երեխայի մեջ զարգացնելով և խորացնելով հետազոտական ունակությունները և հետաքրքրությունը դեպի բնության երևույթները։ Նրանց դաստիարակում ենք բացասական վերաբերմունք ունենալու դեպի զանազան տեսակի սնոտիապաշտությունները և ամրացնում հակակրոնական դրույթները։

Երեխաները մասնակցելով գարնանային մի շարք աշխատանքների, որոնք նշված են տվյալ մոմենտում, իմանում են բնության մեջ մարդու կատարած աշխատանքի նշանակության մասին։ Բնության անկյունում երեխաների կատարած հետազոտական աշխատանքները պետք է նպաստեն հակակրոնական դրույթների ամրացմանը։ Օրինակ՝ դիտելով ստվերոտ և արևոտ տեղերում ցանած զանազան սերմերի աճման պրոցեսը երեխան փորձի միջոցով եզրակացնում է, որ

Լույսը և ջերմությունը (արևը) բույսի աճման համար ունեն խոշոր նշանակություն։

Ղեկավարի դերն է խորացնել յերեխաների փորձից հանած յեզրակացությունները։ Ղեկավարը պետք է այնպես կազմակերպի և հետաքրքիր դարձնի բնության յերևույթների դիտողական աշխատանքը, վոր միօրինակ և ձանձրալի չլինի յերեխաների համար։ Կազմակերպող մոմենտի տևողության ժամանակաշրջանում պետք է հիմնավորել յերեխաների ունեցած գաղափարները կոլտնտեսության, գործարանի, գյուղի մասին. այդ նպատակի համար օգտագործել յերեխաների հետ ունեցած զրույցները, նկարները։

Ղեկավարը, յերեխաներին ծանոթացնելով կոլտնտեսության աշխատանքներին, պետք է նաև գաղափար տա խորհրդային Միության մեջ ապրող մյուս ազգերի տնտեսությունների մասին ու դրանով խորացնի ու ընդլայնի ինտերնացիոնալ զրույցները։

Այս կազմակերպող մոմենտի հետ զուգընթաց պետք է տանել նաև Մարտի 8-ի հետ կապված աշխատանքները։ Մարտի 8-ը պետք է ծանոթացնի յերեխաներին կանանց արդյունաբերության և սոցշինարարության մեջ ունեցած մասնակցությանը և ամրացնի ճիշտ փոխհարաբերություն տղաների և աղջիկների միջև։ Մարտի 8-ի համար առանձին կազմակերպող մոմենտ չենք մշակում։

Յելնելով Համ Կ (բ) Կ Կենտկոմի սեպտեմբերի վորոշումներից՝ նոր ծրագրում կատարված է հասարակական-քաղաքական բնույթ կրող կազմակերպող մոմենտների կրճատում, բայց դա դեռ չի նշանակում, թե բոլորովին չպետք խոսել Մարտի 8 ի նշանակության և դերի մասին. այդ աշխատանքները պետք է զուգընթաց տանել տվյալ կազմակերպող մոմենտի հետ։

Յերեխաների խաղերի յեվ զբաղմունքների միջավայրի կազմակերպումը մանկապարտեզում յեվ տանը.

Տվյալ կազմակերպող մոմենտի մանկավարժական աշխատանքների խնդիրներն են յերեխաներին մանկապարտեզում և տանը տալ խաղերի և զբաղմունքների համար վառ շարժառիթներ։ Խաղերի և աշխատանքի պրոցեսում, տարբեր նյութերով լայնացնել յերեխաների գիտելիքների պաշարը, կարողությունները, ինքնագործունեությունը, ստեղծագործությունը. բացօթյա տարվող խաղերը և զբաղմունքներն օգտագործել բնագիտական դիտողությունների, կոլեկտիվիստական ունակությունների ամրացման համար։

Ղեկավարը շատ մտածված պետք է մոտենա միջավայրի կազմակերպմանը, անհրաժեշտ է տվյալ շրջանում տալ գունեղ, ցայտուն նյութեր, նոր խաղալիքներ, վորոնք խթան կհանդիսանան յերեխայի

ստեղծագործական գործունեությանը։ Խաղերի համար պետք է պայմաններ կազմակերպել նաև ընտանիքներում. յերեխաները կարող են պատրաստել խաղալիքներ տան անկյան համար։ Պետք է ծնողների համար կազմակերպել ցուցահանդես՝ ցուցադրելով հանձնարարվելիք գրքերն և խաղալիքները։ Այս կազմակերպող մոմենտի գլխավոր խնդիրն է յերեխայի ընտանիքում կազմակերպել ժամանցի անկյուն, ուր յերեխան հնարավորություն ունենա խաղալ և աշխատել արդյունավետ կերպով։

3. Մայիսի մեկի տոնակատարությունը. Մայիսի 1-ի կազմակերպող մոմենտը լի յե հասարակական-քաղաքական մոմենտներով, հուզական վառ ապրումներով. նա յերեխաներին տալիս է հարուստ նյութ և կյանքի փորձ՝ հասարակական-քաղաքական դաստիարակության տեսակետից։

Մայիսի 1-ի տոնը պետք է հակադրել զատկին։ Անհրաժեշտ է, վոր յերեխաների համար պարզ լինի, թե զատիկը բուրժուաների և տերտերների տոնն է, իսկ բանվորների տոնը Մայիսի 1-ն է։

Տոնակատարությունը պետք է մանկավարժորեն և խելացիորեն կազմակերպել, վոր յերեխաներն զգան վառ տպավորություններ և տանան հուզական ապրումներ։ Պետք է յերեխաներին ցույց տալ, թե հիմնարկներն ինչպես են պատրաստվում տոնին, ինչ նշանաբանի տակ են տոնում սույն թվի Մայիսի 1-ը։

Յերեխաներին պետք է դուրս բերել փողոց՝ դիտելու զարդարելու աշխատանքները, նույնիսկ շքերթը, առանց հոգնեցնելու նրանց ուղեկը բազմաթիվ տպավորություններով և անվերջ քայլերթով։ Յերեխաների ստացած տպավորությունները պետք է օգտագործել նրանց հետ տարվելիք ամբողջ աշխատանքների ընթացքում, խորացնելով հասարակական-քաղաքական դաստիարակությունը։

Ղեկավարը պետք է ցույց տա խորհրդային Միության բոլոր ազգերի աշխատավորության մասնակցությունը սոցիալիստական շինարարությանը և այդպիսով խորացնի յերեխաների մեջ ինտերնացիոնալ դաստիարակության զրույցները։

Անհրաժեշտ է, վոր տարբեր ազգերի աշխատավորության մասին յերեխաների ստացած գաղափարներն ամրապնդեն յերեխաների մեջ թե մանկապարտեզում և թե տանը ճիշտ ընկերական վերաբերմունք դեպի տարբեր ազգերի յերեխաները։

4. Տարվա աշխատանքների ամփոփումը յեվ հրապարակի կազմակերպում.

Այս կազմակերպող մոմենտում հաշվառման են յենթարկվում ամբողջ տարվա աշխատանքները և նվաճումները, տարվում է նաև անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք մեծ յերեխաներին դպրոց հանձնելու ուղղությամբ։ Այդ առթիվ կազմակերպվում են մի շարք զբաղմունքներ յերեխաների հետ, դրսևորելու հիմնարկի բացերը և

նվաճումները։ Ի հարկե, վոչ մի դեպքում չպետք ե թույլ տալ, վոր այդ զբաղմունքները կրեն «քննության» ձև։ Յերեխաները պետք ե շահագրգռված լինեն տեսնելու իրենց աշխատանքի արդյունքը. նրանք ընտրում են իրենց լավագույն աշխատանքները տարեվերջի հաշվետու հանդեսի համար. վերջինիս միջոցով պետք ե արտացոլվեն ամբողջ տարվա ընթացքում կատարված աշխատանքները ցուցադրելով ծնողներին և հասարակության ներկայացուցիչներին։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 10

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

(1/III — 20/III — 17 աշխատանքի օր)։

1. **Հասարակական-քաղաքական դաստիարակություն.** Իմանալ, վոր բերքը կախված ե մարդու աշխատանքից և գիտությունից և վոչ թե գոյություն չունեցող աստծուց, վոր լավ աշխատելու համար պետք ե սովորել, վոր կոլտնտեսության մեջ հեշտ ե և ավելի լավ ե աշխատել, վոր կուլակները և տերտերները խանգարում են գարնանացանը, խանգարում են գյուղացիներին կոլտնտեսության մեջ մտնել, վոր կոլտնտեսությունները մեքենաներ, տրակտորներ ունեն, վոր բանվորները բրիգադներ են ուղարկում գարնանացանի աշխատանքներին օգնելու համար, վոր տերտերներն ու կուլակները կոլտնտեսության թշնամիներն են։ Գիտենալ, վոր քաղաքներում և կոլտնտեսություններում կազմակերպում են մանկապարտեզներ, մսուրներ, մանկահրապարակներ։ Գաղափար տալ, վոր այդ հիմնարկների շնորհիվ մայրերն ազատագրվում են յերեխաների հոգսից և հնարավորություն ստանում աշխատելու և սովորելու։

Գաղափար տալ Մարտի 8-ի, վորպես աշխատավոր կանանց որվա մասին։ Խորհրդային յերեխաները, աղջիկները և տղաները պետք ե միասին աշխատեն և խաղան։

2. **Աշխատանքային դաստիարակություն.** Փայտի, ստվարաթղթի և թղթի աշխատանքներում ձեռք բերած ունակությունների խորացում։ Առաջին անգամ աշխատանքների մեջ մտցնել աքցանի գործածությունը։ Յերեխաներին սովորեցնել աքցանով հանել վոչ շատ մեծ մեխեր. գաղափար տալ, թե մայրերը գործարաններում ինչ են անում։ Կարի գործարանում մեքենաներով հագուստներ են կարում։ Ջուլհականոցում մեքենաներով թել են մանում։

Հիմնարկին կից արտադրության մասին ունեցած գաղափարները ճշտել։

Գործարաններում պատրաստում են մարդկանց համար անհրաժեշտ իրեր։

Բանվորները և բանվորուհիները միասին են աշխատում։ Գաղափար տրակտորի մասին, տրակտորը գյուղատնտեսության մեջ փոխարինում ե լծկան ուժին։ Տրակտորի շնորհիվ հեշտ և ավելի շատ հող կարելի յե մշակել։

3. **Բնագիտություն.** Գիտենալ, վոր ձմռանից հետո գալիս ե գարունը։ Դիտել բնության մեջ կատարվող փոփոխությունները. (յեղանակների տաքանալը, ձյան հալվելը, որերը յերկարելը)։ Գիտենալ, վոր բույսն առաջանում ե սերմից և վոր ցանելուց առաջ սերմերը պետք ե զտել։

4. **Ֆիզ-դաստիարակություն.** Խորացնել և զարգացնել անձնական մաքրության վերաբերյալ ունակությունները։ Ինքնուրույն կերպով հագնվել և հանվել։ Գիտենալ աղիքային վորդերի և նրանց տված վնասների մասին։ Ինչպես պաշտպանվել նրանցից.

Հետևել իր հագուստի և սպիտակեղենի մաքրությանը և ժամանակին մտածել հագուստ լվանալու, փոփոխելու և կարկատելու մասին։

5. **Գրագիտություն.** Ճանաչել «Գարուն» բառը և ընդորինակել։

6. **Յերգ-յերաժշտություն.** Ճիշտ կերպով վերհիշել յերգի մելոդիան և յերգել փոքրիկ խմբակներով (3-6 հոգով). յերեխաների զույգերից կազմել 1-2 շրջան։

7. **Մաթեմատիկա.** Խորացնել մինչ այժմ ձեռք բերած ունակությունները.

Գիտենալ յեռանկյան, քառանկյան, հնգանկյան և կիսաշրջանի ձևեր։

Գաղափար այսոր, վաղը, յերեկ-ի մասին։ Ծանոթանալ դրամներին։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. **Աշխատանք հողամասում.** Յերեխաներն իրենց հողամասը կարգի յեն բերում, ձյունը հավաքում և տանում ցրում են արևի տակ, վորպեսզի ավելի շուտ հալվի։ Այս աշխատանքի ժամանակ յերեխաները բաժանվում են առանձին խմբերի, կատարում են աշխատանքի բաժանում։

Յերեխաների մի մասը ձյունը լցնում ե պատգարակների վրա, մյուս մասը տանում լցնում ե արևոտ տեղ, իսկ յերրորդ մասը ձյունը ցրում ե շուտ հալվելու նպատակով։

Աշխատանքի պրոցեսում նշում են, վոր ձյունն ավելի շուտ ե հալվում արևի տակ և ցրված, նոսրացած վիճակում, քան ստվերի տակ և կուտակված ձևով։

Ջրի հոսանքի համար մաքրում են առուները։

2. **Գյուղատնտեսական գործիքների վերանորոգում և լրացում.** Յերեխաներն ստուգում են իրենց ունեցած գործիքները, բահերը, փոց-

խերը, պատգարակները, առանձնացնում են վերանորոգման կարիք ունեցողները:

Ղեկավարի օգնությամբ կազմում են անհրաժեշտ գործիքների ցուցակ. այնուհետև աշխատանքային սենյակում պիոների և ղեկավարի օգնությամբ սկսում են վերանորոգման աշխատանքները:

3. **Արկղներ պատրաստելը.** *Յերեխաները նախապատրաստական աշխատանքներ են տանում ցանքի համար: Իրենց արհեստանոցում պատրաստում են արկղներ:*

Արկղներ պատրաստելու համար պետք է օգտվել առաջուց սղոցած պատրաստի տախտակներից: Մյուս յերեխաները լվանում են ծաղկամանները: Ղեկավարն աշխատանքային գործիքների մեջ մտցնում է աքցանը և ցույց տալիս թե ինչպես պետք է գործածել:

4. **Նկարչություն սոսնձաներով.** *Յերեխաներին տրամադրել սոսնձաներկեր, գարնանն իրենց ստացած տպավորությունները նկարելու:*

Ղեկավարի դերն է ճիշտ կերպով կազմակերպել մանկավարժական պրոցեսը (միջավայրի կազմակերպում և նյութերի հավաքում աշխատանքից հետո):

5. **Էքսկուրսիա դեպի ջերմոց.** *Էքսկուրսիայի ժամանակ յերեխաները դիտում են ջերմոցի աշխատանքները, թե ինչպես են այնտեղ չիթիլում: Յեթե հնարավոր է, ջերմոցում մանկապարտեզի համար գնում են փոքրիկ ծաղկամաններ և հող: Գնման ժամանակ ծանոթանում են 1, 2, 3, 5, կոպեկներին:*

6. **Երգ-յերաժշտություն.** *Սովորեցնել գարնան համապատասխան յերգեր օրինակ՝ «Շուտ արի գարուն», «Գարնանացան» և այլն:*

7. **Եղանակացույց պատրաստելը.** *Յերեխաներն այցելում են մեծերի խմբակը և ծանոթանում նրանց պատրաստած յեղանակացույցներին. վորոշում են, վոր իրենք էլ պատրաստեն յեղանակացույց: Վերցնում են գարնան համապատասխան նկար, վորը բերում է ղեկավարը: Յերեխաները վերցնում են իսկական օրացույցի մեծությամբ թղթեր և ամրացնում նկարին: Այնուհետև ամեն օր դիտում են յեղանակը և նկարի միջոցով արտահայտում յեղանակացույցի թերթիկների վրա, իսկ ղեկավարը յերեխաների տված բացատրությունները բնության դիտողությունների վերաբերյալ, գրում է նկարածի տակ: Կարելի յե ամեն օր չգրել, բայց աչքի ընկնող մոմենտները պետք է գրանցել: Յեղանակացույցի այդ թերթիկները հավաքելով կարելի յե պատրաստել ալբոմ կամ գրքույկ:*

8. **Զրույց կոլտնտեսության յեվ գարնանացանի նախապատրաստական աշխատանքների մասին.** *Նայած տեղի պայմաններին՝ զրույցը կարելի յե փոխարինել էքսկուրսիայով դեպի կոլտնտեսություն: Զրույցի ժամա-*

նակ ղեկավարը պատմում է, վոր կոլտնտեսություններում աշխատում են մեքենաներով, համերաշխ, բոլորը միասին:

Ղեկավարը պատմում է իր տպավորություններն այն կոլտնտեսության մասին, վորը տեսել է ինքը բրիգադի հետ շեֆ գյուղ գնացած ժամանակ:

Կուլակները և տերտերները խանգարում են ցանքը:

Կուլակները և տերտերներն աշխատավորության թշնամիներն են:

Գարնանացանին օգնելու համար բանվորները բրիգադներ են ուղարկում գյուղը: Ուղարկում են նաև տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ: Հողը տրակտորով ավելի լավ և շուտ է մշակվում: Ցույց տալ տրակտորի նկարը, իսկ հնարավորության դեպքում իսկական տրակտորը:

9. **Բույսերի աճման պրոցեսի դիտումը.** *Յերեխաներին տալ լոբու, գարու, ցորենի և սիսեռի սերմեր: Սերմերը տեսակավորել, ցանել զանազան տեսակ հողի վրա և առանց հողի, սերմերը թրջած և առանց թրջելու: Դիտել աճման պրոցեսը: Հանել յեզրակացություններ, վոր բույսն առաջանում է սերմից:*

10. **Ծաղիկներ ցանելը.** *Յերեխաներին տրվում են զանազանատեսակ ծաղիկների սերմեր. օրինակ՝ մարգարիտ, նարգիզ — խառն դրությամբ: Յերեխաները տեսակավորում են սերմերը և իրենց պատրաստած արկղներում ցանում, ջրում և դնում տաք տեղ:*

11. **Աշխատանք բնության անկյունում:** *Յերեխաները կարգի յեն բերում բնության անկյունը. մաքրում են բույսերի տերևների փոշին, փոխում են ակվարիումի ջուրը, ջրում են ծաղիկները, կերակրում են կենդանիներին և այլն:*

Այսպիսով խորացնում են իրենց ունակությունները և գիտելիքները դիտողությունների և փորձերի միջոցով:

12. **Կավ:** *Յերեխաներին տրամադրել ծեփելու կավ իրենց տպավորություններն ազատ արտահայտելու համար:*

13. **Ապլիկացիոն աշխատանքներ:** *Ապլիկացիոն աշխատանքների համար տրամադրել կանաչ թղթեր և մկրատներ: Տալ բնության տեսարաններ:*

14. **Երգ-յերաժշտություն:** *Կրկնել գարնան վերաբերյալ սովորած յերգեր: Սովորել Մարտի 8-ի առթիվ «բանվորուհու յերգը» և «Յեկեք վողջունենք»: Կարելի յե նաև կազմակերպել մասսայական պարեր:*

15. **Զրույց Մարտի 8-ի մասին:** *Հարցերի միջոցով հայտնաբերել յերեխաների ունեցած գաղափարը Մարտի 8-ի մասին.*

Ճշտել և լրացնել այդ գաղափարները:

Ղեկավարը պատմում է, վոր մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ թե քաղաքներում և թե կոլտնտեսություններում կազմակերպում են

մսուրներ, մանկհրապարակներ, մանկապարտեզներ, վորպեսզի կանայք կարողանան աշխատել և սովորել։ Յերեխաներին ցույց է տալիս այնպիսի նկարներ, վորոնք արտահայտում են կնոջ աշխատանքն արտադրության և կոլտնտեսության մեջ. բացի դրանից ամսագրերից ցույց է տալիս նկարներ տեքստիլ գործարանի կյանքից և յերեխաների ուշադրությունը հրավիրում այն հանգամանքի վրա, թե ինչքան շատ կանայք են աշխատում գործարանում, բանվորների հետ միասին։ Նրանք պատրաստում են կտոր, հագուստեղենի համար։ Կարելի յե ընթերցել նաև, «միտինգ մինի» («Հոկտ.» 29 թ. № 1), «Մարտի 8-ը» («Հոկտ.» 30 թ. № 3).

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Հասկացողություն այսոր, վաղը, յերեկ-ի մասին։ *Աշխատանքների պրոցեսում յերեխաների հետ ունեցած զրույցների միջոցով ճշտել այսորվա, վաղվա, յերեկվա գաղափարները (որինակ՝ յերեկ մենք գնացել էյինք ջերմոցը, այսոր մենք կարգի բերեցինք մեր հողամասը, վաղը մենք պետք է սերմերը ցանենք)։*

2. Աղիքների վորդերի վնասները յեվ նրանց դեմ պայքարելու միջոցները։ *Բժշկի կամ ղեկավարի զրույցից յերեխաները իմանում են աղիքների վորդերի վնասների մասին, վորդերով վարակվում են բերանի միջոցով։ Յերեխաների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, վոր զուգարանից ոգտվելուց և կատվի ու շան հետ խաղալուց հետո պետք է ձեռքերը լվանալ։ Պետք է յեղունգները կարճ պահել և մատները բերանը չտանել։*

3. Զբոսանք դեպի մոտակա այգին՝ դիտելու բնության մեջ կատարվող փոփոխությունները։ *Զբոսանքի ժամանակ յերեխաների ուշադրությունը դարձնել ձյան և սառույցի լուլաների հալվելու վրա։ Ցույց է տրվում 2 տեսակի ծառ, վորոնց վրա կան բողբոջներ. Նրանք մնացել են ամբողջ ձմեռվա ընթացքում։*

Յերեխաները բաժակում և շշերի մեջ տնկում են ծառերի ճյուղեր, իսկ արկղում՝ սոխ և հետևում նրանց աճմանը։

4. Էքսկուրսիա դեպի արտադրություն (ուր գերակշռում է կանանց աշխատանքը)։ *Ղեկավարն էքսկուրսիայի համար նախորոք պայմանավորվում է ջուլհականոցի կամ տեքստիլ գործարանի վարչության հետ։*

Համաձայնություն է գալիս նրանց հետ, վոր բանվորուհին մատչելի լեզվով զրույցի և բացատրի յերեխաներին գործարանի աշխատանքների մասին։ Էքսկուրսիայի համար ընտրել ամենահեշտ ցեխը։ Էքսկուրսիայի ընթացքում յերեխաների ուշադրությունը դարձնել այն խնդրի վրա, վոր արտադրության մեջ աշխատում են թե կանայք և թե տղամարդիկ։ Կանայք նույնպես աշխատում են հարվածային կերպով, վորպեսզի շատ և լավ իրեր պատրաստեն մարդկանց համար։

5. Պատմել գարնանացանի յեվ գյուղատնտեսական մեքենաների մասին։ *«Փոքրիկ կոլխոզնիկներ» («Հոկտ.» . . . 30 թ. № 3) «տրակտորը» («Հոկտ.» 30 թ. № 3)։*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմակերպել բրիգադ, շեֆ գյուղի կոլտնտեսություն գնալու համար։ Բրիգադի կազմի մեջ պետք է մտնեն մանկապարտեզի ղեկավարը, կից արտադրության և ծնողական խորհրդի ներկայացուցիչները։

2. Բրիգադան ոգնում է կոլտնտեսությանը նախադպրոցական հիմնարկ կազմակերպելու գործում։ Ընտրում է շենք, կազմում է նախահաշիվ և զեկուցում նախադպրոցական դաստիարակության նշանակության մասին։

3. Ակտիվ մասնակցություն ցույց տալ նախադպրոցական կարճատև կուրսերի կազմակերպմանը՝ ընդգրկելով կոլտնտեսականի կանանց։

4. Այցելել յերեխաների տները, գլխավորապես այն յերեխաների, վորոնց ընտանիքներում դեռ ևս չեն վերացել կրոնական սնոտիապաշտությունները։ Հակակրոնական դաստիարակության ուղղությամբ ընտանիքներում տանել աշխատանք։

5. Տվյալ կազմակերպող մոմենտ հաջող անցկացնելու համար, նյութեր պատրաստելու գործում մասնակից դարձնել ծնողներին։ Որինակ՝ բերել զանազան սերմեր բանջարեղենի, ծաղիկների, ոգնել յերեխաներին արկղների համար տախտակներ կտրելու գործում։

6. Կազմակերպել արտադրության կից կամ կոլտնտեսությունում մանկական անկյուն կամ մսուր։

7. Ծնողական խորհրդի հետ միասին յերեխաներին ճամբար և սանատորիա ուղարկելու ուղղությամբ տանել նախապատրաստական աշխատանքներ։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 11

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԽԱՂԵՐԻ ՅԵՎ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՅԵՎ ՏԱՆԸ

(21/III — 11/IV *19 աշխատանքի որ*)

1. Հասարակական — քաղաքական դաստիարակություն։ *Գիտնալ, վոր քաղաքներում և կոլտնտեսություններում կազմակերպում են մանկապարտեզներ, մանկհրապարակներ, մսուրներ։ Գաղափար տալ, վոր*

այդ հիմնարկների շնորհիվ մայրերն ազատագրվում են յերեխաների հոգսից և հնարավորություն ստանում աշխատելու ու սովորելու: Մսուրներում, մանկապարտեզներում, մանկ. հրապարակներում և դպրոցներում մենք ընդունում ենք բոլոր ազգի յերեխաներին (հայ, թուրք, ասորի, ռուս և այլն): Աշխատավորների յերեխաները պետք ե ապրեն համերաշխ, միասին աշխատեն և խաղան:

2. Աշխատանքային դաստիարակություն: Փայտի աշխատանքների վերաբերյալ ունակությունների խորացում և ամրացում, (կարողանալ ճիշտ ոգտագործել մուրճը, սղոցը, աքցանը): Գիտենալ, վոր ջրի ուժը գործադրում են մեքենաներ բանեցնելու համար (ջրաղաց): Ծանոթություն տալ ջրային փոխադրական միջոցների մասին (նավ, շոգենավ):

3. Բնագիտություն: Ճանաչել գարնան առաջին նշանները: Գիտենալ, վոր սառույցը ջրի վրա լողում ե, վոր գետերը վարարում են, վոր ջուրը կեղտից պղտորվում ե: Կարողանալ հողը նախապատրաստել ցանքի համար: Կարողանալ ճիշտ ցանել, ջրել: Գիտենալ, վոր թռչունները գարնանը վերադառնում են և վոր պետք ե պաշտպանել թռչուններին: Ճանաչել թռչուններին՝ (արագիլ, ծիծեռնակ): Ճանաչել գարնան առաջին ծաղիկները (ձնծաղիկ, մանուշակ):

4. Ֆիզ — դաստիարակություն. Գիտենալ, վոր անկանոն սնունդը, անկանոն քունը, մաքուր ոդում քիչ մնալը, քիչ շարժումները թուլացնում են որգանիզմը և իջեցնում նրա աշխատունակությունը տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարելու գործում: Առողջ լինելու համար անհրաժեշտ ե ամեն որ աշխատել, լավ սնվել, սիստեմատիկ կերպով հանգստանալ, հետևել հագուստի մաքրությանը, կարգ ու կանոնին, ամեն ինչ դնել իր տեղը, փոշին մաքրել թաց շորով և շինանյութը լվանալ:

5. Մաթեմատիկա: Ճանաչել մինչև 5-ը թվանշանները: Հաշվել մինչև 10-ը: Գաղափար գիշեր և ցերեկի մասին:

6. Գրագիտություն: Աշխատանքների և զբաղմունքների ընթացքում ծանոթանալ իր և ընկերների անուններին: Ճանաչել և ընդորինակել գարի, ցորեն և սոխ բառերը:

7. Կերպարվեստ: Աչքի չափով կտրել քառակուսու, քառանկյան, յեռանկյան, շրջանի և նեղ թղթերի ճիշտ ձևերը: Լրացուցիչ գույների ամրապնդում (նարնջագույն մանիշակագույն):

8. Յերգ — յերաժշտություն: Յերգել առանձին փրազներով (նախադասություններով): Մի նախադասությունը յերգում ե ղեկավարը, իսկ մյուս նախադասությունները՝ յերեխաները: Կատարել թռիչքներ: Անցած շարժումների կրկնողություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Զրույց յերեխաների հետ, մանկապարտեզում խաղերի անկյուն կազմակերպելու առթիվ: Յերեխաները ղեկավարի հետ միասին շրջում են իրենց սենյակը: Հաշվի յեն առնում իրենց խաղալիքները և նշում, վոր իրենք շատ քիչ խաղալիքներ ունեն, ունեցածն ել թափթփված ե: Համաձայնության են գալիս կազմակերպելու խաղերի անկյուն: Վորոշում են տեղը և թե ինչ պետք ե անել:

2. Ունեցած խաղալիքների վերանայում և վերանորոգում: Յերեխաները վերանայում են իրենց ունեցած խաղալիքներն, առանձնացնում վերանորոգման կարիք ունեցող խաղալիքները և նշում են, թե ինչպես պետք ե վերանորոգեն: Վերանորոգման ժամանակ յերեխաները կարող են բաժանվել մի քանի բրիգադների, որինակ՝ մի մասը տուփերն ե իրար ամրացնում, մյուսներն անիվները, յերրորդ բրիգադի յերեխաները ներկում են գունավոր խաղալիքները:

3. Յերգ — յերաժշտություն: Վերհիշել սովորած յերգերը: Սովորել «Սովետի յերկրում» և այլն: Բացի այդ կարելի յե ոգտվել Մ. Միրզոյանի «Խաղերի և յերգերի ժողովածու»-ից:

4. Խաղերի անկյան համար խաղալիքների պատրաստելը: Խաղալիքներ պատրաստելու համար ոգնության են հրավիրում կցված պիոներներին: Յերեխաները կարող են պատրաստել մոտավորապես հետևյալ խաղալիքները: Կոնսերվի տուփերից դույլեր, ափսեներ, կշեռք, կարուսել, կինո, նավակներ, ջրաղաց և այլն: Յերեխաները թիթեղը մեխում են փայտին: Վերոհիշյալ խաղալիքները պատրաստում են 2—3 պարապմունքի ընթացքում:

Կարելի յե պատրաստել նաև մաթեմատիկայի վերաբերյալ խաղեր թվանշաններով (լոտո) 5—ի սահմանում:

Ղեկավարը կազմակերպում ե աշխատանքը, ցույց ե տալիս աշխատանքի ձևերը և հետևում, վոր տղաները և աղջիկները հավասար չափով աշխատեն:

5. Զբոսանք: Զբոսանքի համար պետք ե ընտրել չոր, արևոտ յեղանակ: Զբոսանքի ժամանակ յերեխաների ուշադրությունը հրավիրել յեղանակների տաքանալու, ձյան հալի, առվակներ գոյանալու վրա: Դիտել փողոցում կատարվող աշխատանքները, ձյան հավաքելը, կտուրների ձյուն մաքրելը:

6. Խաղալիք — ջրաղաց և նավակներ պատրաստելը: Ղեկավարը յերեխաների ուշադրությունը դարձնում ե մեծերի խմբակի աշխատանքների վրա, թե նրանք խաղալու համար ինչպես և ինչ են պատրաստում բակում: Դիտելուց հետո յերեխաները պիոներների և ղեկավարի ոգնությամբ պատրաստում են ջրաղաց և նավակներ, նավակները

թղթից, իսկ ջրաղացը ստվարաթղթից, ֆաներից: Պատրաստած նավակների մի մասը նվիրում են փոքրերին:

7. **Խաղերի անկյան համար խաղալիքներ գնելը:** Խաղալիքներ գնելու համար ընտրում են մի խմբակ՝ 5-6 յերեխա, վորոնք մեծ յերեխաների հետ պետք է գնումներ կատարեն: Ցանկալի է գնել հոլեր, շարժիչներ, կոնստրուկտոր (փայտի) մոզայիկա, զանազան լոտոներ, հաշվիչ տարբերակներով դոմինո, գնդակներ և սանձեր: Յերեխաները դասավորում են խաղալիքները և մի մասը նվիրում փոքրիկներին:

8. **Բակում խաղեր ջրի հետ:** Դուրս գալով բակը, յերեխաները դուրս են բերում իրենց պատրաստած խաղալիքները՝ ջրի հետ խաղալու համար: Ջուրը բաց են թողնում առվակների միջով և գործադրում իրենց պատրաստած խաղալիքները: Դիտում են ջրի հոսանքը և այլն: Ղեկավարը զրույցի միջոցով բացատրում է ջրի ուժը, վոր մարդիկ ջրի ուժն օգտագործում են մեքենաներ բանեցնելու համար:

9. **Խաղեր նոր խաղալիքներով:** Նոր գնած խաղալիքները տրվում են յերեխաներին ազատ խաղալու. ղեկավարը կազմակերպում է կոլեկտիվ խաղեր:

10. **Խաղերի անկյան կազմակերպում յեվ խաղալիքների դասավորում:** Յերեխաները ղեկավարի և տեխնիկական աշխատակցի հետ միասին դասավորում են սենյակի իրերը, լվանում են կառուցողական նյութը, դասավորում են կարգով, ծաղիկների տերևները մաքրում են փոշուց, անկյունում դնում են սեղան և պատից ամրացնում դարակներ, վորոնց վրա դասավորում են իրենց պատրաստած, վերանորոգած և գնած խաղալիքները: Դասավորած խաղալիքները հաշվում են և համաձայնության գալիս ղեկավարի հետ, թե ինչպես պետք է օգտագործեն:

11. **Խաղերի անկյան համար պլակատ պատրաստելը:** Ղեկավարը յերեխաների հետ միասին նախորոք նայում է խաղերի անկյունը և գտնում, վոր անկյունը կարելի է զարդարել պլակատներով: Մտածում են համապատասխան պլակատ գտնելու և ձևակերպելու մասին: Տառերն առաջուց կտրում է ղեկավարը կամ պիոները: Յերեխաների մի մասը տառերին սոսինձ է քսում, իսկ ղեկավարը կպցնում: Մյուս յերեխաները զարդարելու համար կտրում են յերկրաչափական ձևեր:

12. **Խաղերի անկյան բացումը:** Յերեխաները գնում են փոքր խմբակը, նայում նրանց անկյունը և նրանց հետ միասին գնում բարձր խմբակը. բոլոր խմբերը նայելուց հետո հավաքվում են դահլիճ, յերգում, արտասանում կամ դիտում ստվերային թատրոնը:

13. **Եքսկուրսիա դեպի գետը:** Դիտում են գետը և նշում, վոր գետը բարձրացել է և պղտորել է, իսկ դա առաջացել է ձյան հալվելուց: Եքսկուրսիայի ժամանակ ղեկավարը պատմում է, վոր վարարած

գետերն ահագին վնասներ են տալիս մարդկանց, բայց մարդիկ կարող են պայքարել նրանց դեմ ամրացնելով գետափերը:

14. **Պատմել պատմություն վարարած գետի մասին:** Պատմությունը պետք է կրի հակակրոնական բնույթ, վոր գետերի վարարելը կախված է վոչ թե գոյություն չունեցող աստծուց, այլ բնության յերևույթների փոփոխություններից, վորոնց դեմ մարդիկ կարող են պայքարել: Կարդալ «Մեր գետը» Հ. Հայրապետյանի. «Փոքրիկ ձկնորսը» (Հոկտ. 29 թ. № 6):

15. **Յերեխաների խաղի անկյունում:** Յերեխաները բաժանվելով խմբերի, խաղում են զանազան խաղալիքներով կոլեկտիվ և անհատապես:

16. **Զրույց՝ տանը խաղերի անկյուն կազմակերպելու մասին:** Զրույցի միջոցով պարզել, թե ով տանն ունի առանձին անկյուն, խաղերի և զբաղմունքների համար և ինչպիսի խաղալիքներ: Յերեխաները նշում են, թե ինչ կարող են պատրաստել տան անկյան համար:

17. **Տան անկյան համար խաղալիքներ պատրաստելը:** Յերեխաները պատրաստում են խաղալիքներ, տանում տուն ու դասավորում իրենց անկյուններում:

18. **Կավ:** Յերեխաներին տրվում է կավ իրենց ստացած տպավորությունները հայտաբերելու, տրվում են նաև լրացուցիչ նյութեր (գունավոր թուղթ, փայտիկներ, բնական նյութեր): Տուն գնալիս յերեխաներին պետք է տալ մի քիչ կավ և տախտակներ՝ տանն իրենց անկյան համար խաղալիքներ պատրաստելու:

19. **Զրույց տան անկյան մասին:** Մի քանի օրից հետո կազմակերպել զրույց, թե իրենց տանն ինչպես են կազմակերպել իրենց անկյունը. ինչպես են խաղում, ում հետ և արդյո՞ք ամեն ինչ իրենց տեղն է թե վոչ:

20. **Թռչունների վերադարձի դիտումը:** Զբոսանքի ժամանակ դիտել թռչունների վերադարձը և նրանց աշխատանքը բներ պատրաստելիս:

21. **Թռչունների բներ պատրաստելը:** Աշխատանքային սենյակում յերեխաները պիոներների օգնությամբ թռչունների բներ են պատրաստում և դնում համապատասխան տեղ: Այդ նպատակի համար ղեկավարը տրամադրում է նյութեր և գործիքներ:

22. **Զրույց** թռչունների տված օգուտների մասին և վոր պետք է թռչուններին պահպանել:

23: **Ապպլիկացիա:** Կտրել թռչունների սիլուետներ:

24. **Յերգ — յերաժշտություն:** Նվագի տակ կատարել ձնծաղկի ծաղկելը, մանուշակ հավաքելը և այլն:

25. **Սովորել համապատասխան վոտանավորներ, պատմել պատմություններ օրինակ՝** «Ծիտիկները յեկել են» («Հոկտ.» 29 թ. № 1)
«Սարյակների գալը» («Հոկտ.» 29 թ. № 2):

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Բացօթյա խաղեր**: *Նայած տեղի պայմաններին և եղանակներին, ավելի նպաստավոր եղանակներին խաղերն անցկացնել բացօթյա, խաղալիքային նյութերով. (սանձեր, ցատկիչներ, թռչելու պարաններ): Պարանի վրայից թռչել թույլատրվում է ոչ բարձր, քան 20 սանտիմետր:*

2. **Աշխատանք բնության անկյունում**: *Աշխատում են բնության անկյունում, դիտում են շերեփուկի ձևափոխությունները ակվարիումի մեջ: Հողամասում աշխատելու ժամանակ հողը փխրացնելու պրոցեսում դիտում են անձրևորդը: Նախապաշարումների ու սնոտիապաշտությունների դեմ պայքարելու համար տրվում են ճիշտ պատկերացումներ այն մասին, վոր միայն պայքարով կարելի յե վոչնչացնել վնասատուներին և վոչ թե աղոթքներով, սուրբ ջրով, իսկ օգտակար միջատներին պետք է պահպանել:*

3. **Դնել գրենա յեվ դիտել շերամի վորդի զարգանալը:**

4. **Խաղ — լոտոյով**: *Յերկրաչափական ձևերի վերաբերյալ յերեխաներին տալ խաղալու լոտո: Բացի շրջանից, յեռանկյունուց և քառանկյունուց գաղափար տալ նաև կիսաշրջանի հնգանկյան մասին:*

5. **Ներկեր պատրաստելը**: *Յերեխաները ղեկավարի հետ միասին հաշվի յեն առնում իրենց գործածած ներկերը և գտնում, վոր չունեն նարնջագույն և կանաչ. վորոշում են պատրաստել այդ գույները — դեղին կարմիր գույներից: Յերեխաները թղթի վրա փորձում են նոր պատրաստած ներկերը և նկարում:*

6. **Հողամասը կարգի բերելը**: *Հողամասը կարգի բերելու սկզբնական և դժվարին աշխատանքն արդեն կատարված պետք է համարել ծնողների շաբաթօրյակի միջոցով: Յերեխաներին մնում է միայն թեթև կերպով բահերով, փոցխերով, հավաքել մնացածը՝ այսինքն չոր խոտերը, տերևները, փոքրիկ քարերը և այլն:*

7. **Էքսկուրսիա դեպի օրինակելի թռչնաբուծարանը**: *Ղեկավարը յերեխաներին հայտնում է, վոր շուտով մանկապարտեզն ունենալու յե հավեր: Առաջարկում է օրինակելի թռչնաբուծարան գնալ տեսնելու թե ինչպես են պահում և խնամում հավերին և սովորել, թե ինչպես է հարկավոր նրանց խնամել: Էքսկուրսիայի ընթացքում ղեկավարը յերեխաների ուշադրությունը հրավիրում է թռչնանոցի վրա, վորտեղ ապրում են հավերը, կերակրամանի և նրանց սննդի վրա: Դիտում են հավերի արտաքին տեսքը: Թռչնաբուծարանի աշխատակիցը յերեխաներին բացատրություններ է տալիս ինկուբատորի մասին և ցույց տալիս, թե ինչպես են ապրում ինկուբատորով բազմացրած ձագերը:*

8. **Հավերի խնամքը**: *Հավաբունը մաքրելիս օգնում են մեծերին, պատգարակով ավազ են բերում և ցանում հավաբնի հատակին: Կեր են պատրաստում, կերակրամանի մեջ կեր են լցնում, օգնում են կերակրամանները լվանալիս:*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կատարել մի քանի յերեխաների ընտանեկան միջավայրի ուսումնասիրություն (այն յերեխաների, վորոնք առանձին անկյուն չունեն):

2. Ծնողներին օգնել յերեխաների համար առանձին անկյուն կազմակերպելու գործում:

*3. Ծնողներին կազմակերպել շաբաթօրյակի միջոցով յերեխաների համար խաղալիքներ պատրաստելու և թափթփուկ (*Бросовый материал*) նյութեր հավաքելու ուղղությամբ:*

4. Ծնողների համար կազմակերպել ցուցահանդես. ցուցադրել հանձնարարելի խաղալիքներ և գրքեր:

5. Կցված արտադրության պատի թերթին տալ յերեխաների ժամանցը կազմակերպելու վերաբերյալ նյութեր:

6. Հրավիրել ծնողական ընդհանուր ժողով: Կազմակերպել զեկուցում, յերեխայի ժամանցի մասին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 12

ՄԱՅԻՍԻ 1-Ը

(13/IV — 5/V 19 աշխատ. օր)

1. **Հասարակական — քաղաքական դաստիարակություն**: *Գիտենալ, վոր մեր յերկրում գործարանները պատկանում են բանվորներին, իսկ կապիտալիստական յերկրներում՝ բուրժուաներին: Մինչև հեղափոխությունը մեզ մոտ էլ գործարանները պատկանում էյին բուրժուաներին: Ներկայումս մեր յերկրում բանվորներն աշխատում են հարվածային կերպով և կառուցում շատ գործարաններ ու հիմնարկներ: Յերեխաները պետք է սովորեն և աշխատեն, վորպեսզի օգնեն բանվորներին: Լենինը տարբեր ազգերի աշխատավորներին սովորեցնում եր, վոր պետք է միանալ և միմյանց օգնել բուրժուաների դեմ պայքարելու խնդրում: Խորհրդային Միության մեջ բոլոր ազգերի աշխատավորները միասին եյին պայքարում բուրժուաների դեմ, հիմա նույնպես միասին են աշխատում և կառուցում նոր գործարաններ, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ:*

Կարմիր բանակը պաշտպանում է մեր սոցշինարարությունը

բուրժուաներից։ Մայիսի 1-ի տոնը բոլոր ազգերի աշխատավորության տոնն է։ Պատրաստվեք նրանց հետ միասին տոնելու մայիսի 1-ը։ Մենք խորհրդային Միության մեջ, մայիսի 1-ը տոնում ենք ազատ և ուրախ, իսկ կապիտալիստական երկրներում բանվորներին թույլ չեն տալիս ազատ տոնելու Մայիսի 1-ը։ Այնտեղ հետևում են բանվորներին, ցրում ցույցերը և բանտարկում ցուցարարներին (նկարների միջոցով)։ Մենք չենք տոնի բուրժուաների և տերտերների տոնը, այլ կտոնենք բոլոր ազգերի աշխատավորների — բանվորների որը՝ կարմիր Մայիսը։

2. Աշխատանքային դաստիարակություն։ Գիտենալ, թե ինչպիսի և ինչ շինարարական նյութերից են կառուցում տները, գործարանները (գաղափար քարի, աղյուսի, ավազի, տախտակի, թիթեղի, ապակու մասին)։ Աշխատանքը թեթևացնելու համար ինչպիսի ռացինալ միջոցներ կան շենքերի կառուցման վայրում (քար բարձրացնող և ջարդող մեքենաներ)։

Գաղափար ռադիոյի մասին։ Մարդիկ ռադիոյի միջոցով խոսում են միմյանց հետ և վորոշ տարածության վրա լուրեր հայտնում, լսում են համերգներ։ Ռադիոներ կան տներում, փողոցներում, հրապարակներում, ակումբներում։ Ռադիոյի միջոցով մարդիկ իմանում են, թե ինչ է կատարվում Խորհրդային Միության մեջ և մյուս երկրներում։ Դաստիարակել հասարակական հանրօգուտ աշխատանքի գրույթներ, վոր երեխաներն աշխատում են վոչ միայն իրենց համար, այլև կարող են զարդարանքներ պատրաստել (դրոշակներ, պլակատներ) տան համար, կոլտնտեսության մանկապարտեզի համար։

3. Բնագիտություն։ Գիտենալ, վոր ձմռանը հաջորդում է գարունը, գարնան մերձեցման նշանները, ձյան հալոց, բնության երևույթների փոփոխվելը (կրկնություն), գարնանը գետերի հորդանալը, ծառերի բողբոջելը, ծաղկելը և տերևակալելը։ Գիտենալ, վոր անձրևը, ձյունը և կարկուտը թափվում են ամպերից, վոր կավն իր մեջ ջուր է պահում, իսկ ավազը՝ վոչ, վոր քարերը պինդ են, ջուր չեն անցկացնում, վոր գարնանը ծառեր են տնկում, վոր ծառատունկն օգտակար է աշխատավորության առողջության համար, վոր Խորհրդային իշխանությունն աշխատում է շատ ծառատնկարաններ պատրաստել, վորպեսզի բոլոր աշխատավորներն օգտվեն, վոր պետք է պահպանել և խնամել տունկերը։

4. Ֆիզդաստիարակություն։ Կարգավորել գնդակով խաղալ, մեծ գնդակը 1 $^{1}/_{2}$ մետր հեռավորության վրա գցել։ Վազել և թռչել երկու և մեկ վոտի վրա 2-3 սանտիմետր բարձրության վրա։ Հավասարակշռությունը պահպանելով քայլել գերանի վրայով։

5. Մաթեմատիկա։ Տարբերել 5 և 10 կոպեկները, ճանաչել թվա-

նշանները։ Հասկացողություն դիմացի և միջնեղի մասին, խորացնել անցածը։

6. Գրագիտություն։ Կարդալ և ընդօրինակել «Մայիսի 1-ը»։

7. Կերպարվեստ։ Տպավորությունները նկարել (Մայիսի 1-ը), կավ — ծեփել թռչուններ, տրակտորներ։

8. Ապլիկացիա։ Սովերային թատրոն. 1 թռչունների երամը. 2. ծառերի տերևների շատանալը. 3. Մայիսյան ցույց, ինտերնացիոնալ բնույթը. տարբեր ազգերի աշխատավորների մի քանի նմուշներ (Հնդիկ, Նեգր, Չինացի, Անգլիացի, Գերմանացի և այլն)։ Պիոներներ, դրոշակներ, ավտոներ, այս ամբողջը շարժման մեջ։ Այս պատկերները տալ մակետի ձևով։

Մակետ — 1. Ծառատունկ։

2. Մեզվանոց։

9. Երգ — ռիթմիկա. Մայիսի 1-ի առթիվ շարքային վարժություններ, քայլել, երգել, դրոշակներով, թմբուկով և զանգակներով։ Հրահանգով քայլել առաջ և ետ ու կազմել զանազան թեթև ձևեր։ Այդ ձևերից կազմել կոլեկտիվ պարեր, խմբավորումներով։ Տեքստիլի աշխատանքը նվագի տակ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Էքսկուրսիա — դիտելու նոր շինարարությունը։ Էքսկուրսիայի վայրն ընտրվում է մանկ-հիմնարկին մոտ գտնվող բաղը, ուր կատարվում է շինարարություն։ Ցանկալի է երեխաների ուշադրությունը հրավիրել այն շենքների վրա, վորոնք ավարտման պրոցեսի մեջ են, վորպեսզի երեխաները հրապուրվեն հակայական շենքով։ Պետք է բացատրել, թե այդ շենքերն ինչ նպատակի համար են ծառայելու (դպրոցի, գործարանի, հյուրանոցի, հանրակացարանի)։ Յեթե մանկ-հիմնարկի մոտակա բաղում չկան ավարտման պրոցեսում գտնվող շենքեր, այդ դեպքում պետք է նրանց ցույց տալ պատրաստի շենքեր և բացատրել, թե ինչի համար են կառուցված։ Ղեկավարը էքսկուրսիայի ընթացքում պետք է յերեխաների ուշադրությունը հրավիրի այն հանգամանքի վրա, թե շենքերն ինչ նյութերից են կառուցում (քար, տախտակ, ավազ, ապակի, երկաթ, գերաններ, աղյուսներ)։ Դիտել բանվորների աշխատանքը և այն թեթևացնելու միջոցները. (մեքենաներ — քար կտրող և բարձրացնող)։

2. Զրույց։ Զրույցի միջոցով ամփոփել էքսկուրսիայից ստացած տպավորությունները սոցշինարարության և բանվորների աշխատանքների մասին։ Նշել, վոր մեր երկրում գործարանները պատկանում են

բանվորներին, իսկ արտասահմանում՝ բուրժուաներին։ Մեր յերկրում բանվորները կառուցում են շատ գործարաններ։ Արտասահմանի բանվորների կյանքի և աշխատանքի պայմանները համեմատել մեր յերկրի բանվորների հետ։

3. Նկարների դիտում։ *Յերեխաներին ամսագիր տալ (խորհրդային և արտասահմանյան) դիտելու մեր սոցշինարարությունը և արտասահմանի բանվորների ու նրանց յերեխաների կյանքը (գործազրկություն, Մայիսի 1-ի ցույցերի ցրում, ժանդարմներ, բանվորների բանտարկություն և ծեծի մոմենտներ)։*

4. Յերգ — յերաժշտություն։ *Ղեկավարը սովորեցնում է սոց. շինարարության համապատասխան յերգ։ Նվագի տակ կազմակերպում է շինարարության պրոցեսներն արտահայտող ռիթմիկ շարժումներ։ Սովորեցրած նոր նյութերը հետագայում ոգտագործել Մայիսի 1-ի տոնակատարության հանդեսին։*

5. Պատմություն։ *Պատմել յերեխաներին Մայիսի 1-ին համապատասխանող պատմություն։ Պատմության վերջում դիտում են գրքի նկարները, և ղեկավարը զրույցի միջոցով ճշտում է յերեխաների ունեցած գաղափարներն այս մասին, վոր բոլոր ազգությունների աշխատավորները պետք է միանան և ոգնեն միմյանց թե աշխատանքի մեջ և թե բուրժուաների դեմ վարած պայքարում։ Ղեկավարը նշում է, վոր շուտով մայիսի 1-ն է լինելու, միջազգային բանվորների տոնը։*

6. Կապ այլ ազգի նախադպրոցական հիմնարկի կամ դպրոցի հետ. *Ղեկավարը յերեխաների հետ գնում է այլ ազգի մանկապարտեզ (թուրք, ռուս, ասորի և այլն) դիտում այնտեղի յերեխաների կյանքն ու աշխատանքը և նրանց հրավիրում իրենց մոտ՝ մասնակցելու մայիսի 1-ի տոնակատարությանը։ Այլ ազգի յերեխաները հյուրերին ցույց են տալիս իրենց շենքը, հարմարությունները, աշխատանքի սենյակը և աշխատանքները։ Յերգում են իրենց մայրենի լեզվով յերգեր և պայմանավորվում մայիսի 1-ը միասին տոնելու։ Յեթե մանկհիմնարկի մոտակա վայրում չկա այլ ազգի մանկապարտեզ, այդ դեպքում պետք է ոգտագործել կից արտադրության այլ ազգի բանվորին, վորի հետ պետք է նախորոք պայմանավորվել, վոր նա յերեխաների հետ մատչելի լեզվով զրուցի այն մասին թե ինչպիսի ծանր պայմաններում են ապրում արտասահմանի բանվորները և գործազուրկների յերեխաները և թե ինչպես են նրանք պայքարում բուրժուաների դեմ։ Այս զրույցն անց կացնել մեծ խմբակի յերեխաների հետ։ Ոտարերկրյա բանվորներին հրավիրել մասնակցելու մայիսի 1-ի տոնին։*

7. Գեղարվեստական պատմվածք Մայիսի 1-ի մասին կամ գրքերի ընթերցում։ *Ղեկավարը պատմելիք նյութի ընտրությունը պետք է կատարի վոչ միայն գրքից, այլ նաև ամսագրերից, լրագրից։ Գեղարվեստական պատմվածքի բովանդակությունը պետք է հուզեր առաջացնի յերեխայի մեջ և ճշտի հասարակական-քաղաքական դրույթները։ Պատկերացումներ տալ մեզ մոտ ապրող այլ ազգի աշխատավորության և նրանց յերեխաների կյանքի մասին, սոցշինարարության մեջ ունեցած նրանց մասնակցության մասին։ Պատմության միջոցով յերեխաներին պարզել վոր բոլոր յերեխաների, բոլոր ազգերի աշխատավորներն ունեն ընդհանուր նպատակ։ Պատմել, վոր Լենինը բոլոր յերկրների աշխատավորներին սովորեցնում էր միանալ բուրժուաների դեմ պայքարելու գործում և թե ինչպես Լենինը մտահոգված էր բոլոր ազգերի աշխատավորների կյանքով։ Յերեխաների մեջ ցանկություն առաջացնել տոնելու Մայիսի 1-ի տոնը։*

8. Յերգ-յերաժշտություն։ *Սովորեցնել յերեխաներին Մայիսի 1-ին համապատասխանող յերգեր «Մայիսի 1-ին, այս ուրախ որին», «վողջույն Մայիսի մեկին», «Մեր շարքով», Մանկական ինտերնացիոնալ, և այլն։ Վորոշում են, թե վոր խաղերը և յերգերը պետք է ցուցադրեն Մայիսի 1ին։*

9. Նկարչություն։ *Յերեխաներին տալ սոսնձաներկեր և թուղթ՝ իրենց տպավորությունները վերարտադրելու համար։ Նկարած աշխատանքներից առանձնացնել Մայիսի 1-ի առթիվ լույս տեսնող պատի թերթի համար։*

10. Խաղ։ *Սովորեցնել յերեխաներին «կարմիր աստղ» խաղը (ինտերնացիոնալ շարքերով հինգ ազգի)։*

11. Եքսկուրսիա դեպի գործարան։ *Նախորոք պայմանավորվելով գործարանի վարչության հետ, ղեկավարը յերեխաներին տանում է ծանոթացնելու իրենց կից կամ այլ արտադրության բանվորների աշխատանքներին, աշխատանքների բաժանման ու ռացիոնալիզացիային։ Հետաքրքրվել, թե ինչ ազգի բանվորներ կան գործարանում։ Եքսկուրսիայի համար դիտել ամենահեշտ ցեխը։*

12. Կերտվածք։ *Յերեխաներին տալ մկրատ, գունավոր թուղթ, սոսինձ, վրձին, մուրճ, մանգաղի, աստղի, կոնտուրներ, ստվարաթուղթ։ կատարել աշխատանքի բաժանում։ Այդ աշխատանքներին մասնակից դարձնել նաև պիոներներին։*

13. Կարդալ հեքիաթը՝ *«Հոկտեմբերիկներ» («Հոկտ.» 29թ. № 6)*
«Լիլիկը հոկտեմբերիկ(« « 29թ. № 10)
«Մայիսի 1-ին (« « 30թ. № 5)
«Զորս սերունդ» (« « 30թ. № 6)
«Մեր յեղբայրիկները(« « 29թ. № 8)

Այստեղ պարզվում են տարբեր ազգերի աշխատավորների ընդհանուր վիճակը, շահերն ու համերաշխությունը։

14. Ազատ ստեղծագործական խաղ։ Յերեխաներին տալ թմբուկներ, դրոշակներ՝ ազատ կերպով խաղալու, արտահայտելու իրենց ստեղծագործական ընդունակությունները։

15. Կազմակերպչական զրույց։ Հրավիրել պիոներներին, մշակելու տոնակատարության ծրագիրը, ընտրել բրիգադներ տոնն անցկացնելու, շենքը զարդարելու և տնտեսական խնդիրները լուծելու համար։

16. Զբոսանք։ Դիտել քաղաքի փողոցները, թե Մայիսի 1-ը տոնելու համար քաղաքն ինչպես է պատրաստվում։ Ղեկավարը յերեխաների ուշադրությունը հրավիրում է, թե բոլորն ինչպես են պատրաստվում Մայիսի 1-ը տոնելուն։ Յերեխաների հետ զրույցի ընթացքում ղեկավարը նշում է, վոր մեզ մոտ բանվորները տոնում են ազատ և ուրախ, իսկ արտասահմանում բուրժուաները բանտարկում են ցուցարարներին, ծեծում բանվորներին և ցրում նրանց ցույցերը։

17. Հակակրոնական բնույթ կրող զրույց։ Զրույցի ընթացքում ղեկավարը նշում է, Մայիսի 1-ը բանվորների տոնն է։ Այդ օրը բոլոր յերկրների բանվորները միասին են տոնում իրենց տոնը։ Զատիկը տերտերների և բուրժուաների տոնն է։ Զատիկի մասին խոսելիս պետք է տալ այն գրույթը, վոր աստված գոյություն չունի, վոր աստծու անունով տերտերները և բուրժուաները խաբում են բանվորներին։ Բնվորները և նրանց յերեխաները յեկեղեցի չեն գնում։

18. Պլակատներ պատրաստել։ Նախորոք պայմանավորվել մեծ յերեխաների հետ, թե վոր խումբը ինչ պլակատ պետք է պատրաստի։ Պլակատի բովանդակությունը պետք է հասկանալի լինի յերեխաներին։ Ղեկավարը ինքը գրում է լոզունգներ՝ խոշոր, ուղիղ, ձեռագիր տառերով, իսկ յերեխաների մի մասը ղեկավարի հետ պիոներների օգնությամբ կտրտում են տառերը, միյուսներն էլ սոսնձում և կպցնում են կարմիր կամ մեծ թղթին, վորից հետո ամրացնում են փայտերին։ Պատրաստում են նաև հակակրոնական բնույթ կրող պլակատներ։

19. Յերգ-յերաժշտություն։ Տոնի առթիվ սովորած յերգերը և ռիթմիկ շարժումները ավելի լավ յուրացնելու նպատակով կրկնում են և նշում, թե տոնի օրը վոր յերգերը և շարժումները պետք է ցուցադրեն։

20. Աշխատանք հյուսնոցում։ Յերեխաներն իրենց հյուսնոցում պատրաստում են դրոշակների կոթեր և դրոշակներ՝ շքերթին մասնակցելու համար։ Այդ աշխատանքների համար յերեխաներին տալ համապատասխան նյութեր և գործիքներ։

21. Զարդարելու աշխատանք։ Յուրաքանչյուր բրիգադ կարգում է իր վրա դրված պարտականությունները։ Յերեխաները պիոների օգնու-

թյամբ շենքը զարդարում են դրոշակներով, պլակատներով, լոզունգներով և այլն։

22. Հանդես։ Հանդեսն սկսել Ինտերնացիոնալով։ Ղեկավարներից մեկը կամ կից արտադրությունից հրավիրվածը խոսում է Մայիսի 1-ի տոնի մասին մատչելի լեզվով 10-15 րոպեյից վոչ ավելի։ Վորից հետո յերեխաները յերգում ու արտասանում են իրենց սովորած աշխատանքային հեղափոխական յերգերն ու վոտանավորները։ Ցուցադրում են ռիթմիկ շարժումները ու խաղերը։ Հանդեսին մասնակցում են նաև այլ ազգի մանկապարտեզը և պիոներները։ Հանդեսը վերջանում է մասսայական պարերով։

23. Լրագրում կարդալ թե Մայիսի 1-ն ինչպես են անցկացրել արտասահմանում։ Բացատրել յերեխաներին, թե ովքեր են օգնում այն հեղափոխական ընկերներին, վորոնք տուժում են այս պայքարում, ո՞վ է օգնում նրանց ընտանիքին, յերեխաներին։ Գաղափար տալ «Մոպր»-ի նշանակության մասին և անդամագրել «Մոպրին»։

24. Եքսկուրսիա դեպի «Մոպր»-ի կենտրոն կամ վորևէ կուլտուրական կամ արտադրական հիմնարկ, վորտեղ կա «Մոպր»-ի անկյուն։ Ղեկավարը նախորոք պայմանավորվում է, վորպեսզի այնտեղ բացատրությունը տրվի մատչելի լեզվով։

25. Նամակ գրել։ Գրում են նամակ ՀՍԽՀ-ի մանկապարտեզներից վորևէ մեկին, ուր նկարագրում են, թե ինչպես են իրենք տոնել Մայիսի 1-ը, խնդրում են, վոր նրանք էլ հայտնեն, թե ինչպես են անցկացրել այդ տոնը։ Մրցման են հրավիրում այդ մանկապարտեզին 100%-ով անդամագրվելով «Մոպր-ին։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Եքսկուրսիա դեպի մոտակա այգիները։ Կազմակերպել եքսկուրսիա դեպի այգիները դիտելու բնության արթնացումը, նրա մեջ կատարվող փոփոխությունները (ծառերի ծաղկել և տերևակալելը)։ Եքսկուրսիայից բերած նյութերը պահել բնության անկյունում՝ դիտելու համար։

2. Նկարչություն։ Ազատ նկարչություն. յերեխաներին տալ թուղթ սոսնձաներկեր, Մայիսի 1-ի տպավորություններն արտահայտելու համար։

3. Կենդանի անկյունում յեղած բույսերը փոխադրել։ Յերեխաներն իրենց կենդանի անկյունում յեղած բույսերը, [illegible]երի մեջ դրված ճյուղերն, արկղների մեջ ցանված ծաղիկները և հացաբույսերը փոխադրում են բակը և նշում, վոր այն բույսերը, վորոնք խնամվել են և վորոնք լույսի, արևի տակ են յեղել՝ աճել են, գունեղ են և այլն, իսկ այն բույսերը, վորոնք վոչ մի խնամք չեն ունեցել, զրկված են յեղել արևի ու լույսի ճառագայթներից՝ չեն աճել և դեղնած են։ Յեզրակացնում են, վոր

բույսի աճման համար մեծ նշանակություն ունի լավ խնամքը, արևը, օդը, ջուրը, լույսը և վոչ թե գոյություն չունեցող աստծու զորությունը։

4. Աշխատանք թռչնոցում. *Աշխատում են իրենց թռչնոցում։ Դիտում են թռչուններին (հավին, բադին), նրանց արտաքին տեսքը, կերը և թե ինչպես են ձվից ճուտիկներ դուրս գալիս։*

5. Էքսկուրսիա դեպի մոտակա այգին կամ զբոսավայրը. *Դիտելու, թե վորտեղ են տնկում ծառեր և թփեր. տեղում զրույց տանել ծառատունկի օգտակարության մասին։ Դիտել ծառատունկը և վորոշել, թե վոր ծառերն են փչացել, չորացել և վոր անհրաժեշտ է խնամել ծառատունկերը։*

6. Յեղանակացույց. *Շարունակել բնության դիտողությունները և յեղանակացույցի աշխատանքները, վոր տրված է նախորդ կազմակերպող մոմենտում։*

7. Նամակ ուղարկել. *Մայիսի 1-ի առթիվ ուղարկվող նամակի հետ կապոց ուղարկել (դրոշակներ, աստղեր, մուրճ, մանգաղ. կտրված նկարներ, գրքեր և այլն) հարևան հանրապետությունների մանկապարտեզների յերեխաներին (Վրաստան, Ադրբեջան)։*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Մանկապարտեզի խորհրդի նիստ, նվիրված Մայիսի 1-ի տոնակատարությանը։

2. Հրավիրել ծնողական ընդհանուր ժողով մասնակցությամբ կցված արտադրության բանվորների, զեկուցել մայիսի 1-ի տոնի նշանակության մասին և հատկապես կանգ առնել ինտերնացիոնալ դաստիարակության վրա։

3. Ծնողների համար կազմակերպել էքսկուրսիա դեպի արտադրություն, իսկ արտադրության բանվորների համար դեպի օրինակելի մանկական հիմնարկներ։

4. Կազմակերպել ինտերնացիոնալ ցերեկույթ ծնողների և բանվորների համար։

5. Մասնակցել ընդհանուր շքերթին, արտադրության պատի թերթի աշխատանքներին։ Հոդվածներ տալ ինտերնացիոնալ դաստիարակության մասին։

6. Թաղի անկազմակերպ յերեխաների համար կազմակերպել ցերեկույթ։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 13

ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄՆ ՅԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

(7/V—29/V—20 աշխատանքի օր)։

1. Հասարակական-քաղաքական դաստիարակություն. *Հասարակական քաղաքական հիմնական դրույթների և ծանոթությունների ամրացում, բանվորները գործարաններում պատրաստում են շատ մեքենաներ և մթերքներ՝ մեր յերկրի տնտեսության համար։*

Աշխատավորությունը պետք է շատ սովորի, վորպեսզի ղեկավարի յերկիրը։ Մենք սովորում ենք բոլորս միասին աշխատել և խաղալ։ Սովորում ենք լինել մաքուր, առողջ և կազմակերպված։ Մենք չենք հավատում աստծուն։ Մենք գիտենք, վոր ձյունն ու անձրևն ամպերից է, վոր բույսը լավ աճում է պարարտ հողում և լավ խնամքի շնորհիվ (արև, լույս և տաքություն)։ Հացը, մթերքները և մեքենաները շատ են լինում նրա համար, վոր բանվորները և կոլտնտեսականներն աշխատում են հարվածային կերպով, վոր պիոներները օգնում են սոցշինարարությանը։ Հոկտեմբերիկները պիոներներ են դառնալու. յերեխաները սովորում են բանվորներին օգնել մեր յերկրի պաշտպանության գործում։ Բոլոր ազգերի յերեխաները նույնպես սովորում են, ինչպես և մենք։ Մեր մանկապարտեզի մեծ յերեխաները պատրաստվում են դպրոց փոխադրվելու, միջակ խմբի յերեխաներն ավագ խումբ, իսկ փոքրերը՝ միջակ խումբ։

2. Աշխատանքային դաստիարակություն. *Խորացնել և ամրացնել փայտի աշխատանքներում յերեխաների ձեռք բերած ունակությունները։ Կարողանալ 2 սանտիմետր լայնություն ունեցող տախտակները սղոցել. աշխատանքի ժամանակ գործածելու համար տալ կոշկակարի բթածայր դանակ։ Աշխատանքի ժամանակ փայտը միացնել ուրիշ նյութերի հետ (կաշի, թիթեղ, ռետին, ստվարաթուղթ և այլն)։ Կատարել փորձեր փայտի և մետաղի հետ (մետաղն ընկղմվում է ջրի մեջ. իսկ փայտը՝ վոչ)։ Ամրացնել փոխհարաբերության ունակությունները (փոքրերին ու թույլերին ցույց տալ օժանդակություն և լավ աշխատանքի օրինակներ)։*

3. Բնագիտություն. *Իմանալ, վոր բույսերն առաջանում են սերմերից, վոր բողբոջներից գարնանը առաջանում են տերևներ և ծաղիկներ, վոր բույսի և ցանքի աճման համար անհրաժեշտ է վորոշ խնամք, հողի պարարտացում, փուխրացում սերմի զատում, քաղհան, ջրել և բերքի պահպանում։ Կարողանալ փուխրացնել հողը. աշխատել բահով և փոցխով, սերմերը ճիշտ ցանել։*

Տերևներից ճանաչել 2-3 տեսակ ծառ։

Յերկու տեսակը ճանաչել ծաղիկներից, մի տեսակը բողբոջներից (դեղձի, ծիրանի)։

Գիտենալ, վոր միջատները զարգանում են ձվիկներից։ Ճանաչել չորս տեսակ վնասատու և չորս տեսակ ոգտակար միջատներ (մեղու, մրջյուն, մորեխ, շերամ) ճանաչել նրանց արտաքինը, իմանալ տված ոգուտները և վնասները։ Գիտենալ, վոր վնասատու միջատներին պետք է վոչնչացնել։ Իմանալ վոչնչացնելու մի քանի միջոցներ (յեռացրած ջուր, հեղուկներ) և գիտենալ, վոր ոգտակար միջատներին պետք է պահպանել։ Գիտենալ, վոր թռչունները դուրս են գալիս ձվերից։ Ճանաչել ընտանի կենդանիներից կովին, յեզանը և թռչուններին. իմանալ նրանց տված ոգուտները։ Խորացնել բնության վերաբերյալ ծանոթությունները և գիտելիքները և ամրացնել մատերիալիստական աշխարհայեցողությունը։

4. Ֆիզ-դաստիարակություն. Խորացնել և ամրացնել յերեխաների ձեռք բերած ունակությունները։ Սովորեցնել, վոր չի կարելի կեղտոտ իրերը գետնից վերցնել, մատերը բերանը տանել։ Բերանը պետք է ծածկել հազալու և փռշտալու ժամանակ, չհազալ ուրիշի յերեսին։ Գիտենալ, վոր բոլոր կեղտոտությունները վարակի բույն են և վարակ տարածող։ Վոչ մի դեպքում հում ջուր չխմել։ Խմելու դեպքում անպատճառ պետք է յեռացնել։

Գիտենալ, վոր պետք է մարմնի կաշին մաքուր պահել և ամրացնել մաքուր ոդի և արևի ոգնությամբ, վոր ֆիզիկական շարժումները և շարժական խաղերն ամրացնում են առողջությունն, ավելացնում ուժը և կռվում հիվանդությունների դեմ։ Կարողանալ թռչել քսան սանտիմետր բարձրությամբ կապած պարանի վրայով։ Կարողանալ գնդակը յերկու մետր հեռավորության վրա գցել արկղը։ Խաղեր փոքր և մեծ գնդակներով։

5. Մաթեմատիկա. Գաղափար նեղի, լայնի, բարձրի, ցածրի մասին. խորացնել կոնկրետ առարկաներով. մինչև 6-ը հաշվել և թվանշանները ճանաչել. գործածել այդ թվանշանները՝ կապակցելով համապատասխան քանակի առարկաների հետ։

6. Գրագիտություն. Ամբողջ տարվա ընթացքում անցած ծանոթ բառերի յուրացում։ Կարողանալ իր անունը գրել, ընկերոջ անունը ճանաչել ինքնագրանցման տախտակի վրա։

7. Կերպարվեստ. Խորացնել և ամրացնել մատիտի, վրձինի և ներկերի գործածության մեջ ձեռք բերած ունակություններն ու գիտելիքները։ Ամրացնել կերպարվեստի նյութի հետ վարվելու, աշխատանքի պրոցեսում կազմակերպվածության, նյութերի ընտրության, ինքնագնահատության, պլանավորման և հասարակական հաշվետվության ունակությունները։

8. Յերգ-յերաժշտություն. Անցած նյութերի կրկնողություն. կարողանալ ցուցադրել

ա). 2/4, 3/4, 6/4 տակտերի կատարումը.

բ). անցած չափերը քառորդներով և ութերորդականներով.

գ). կոմպոզիցիա անցած շարքային վարժություններից.

դ). Խառն ռիթմիկ ձևեր և նրանցից բխող կոլեկտիվ պարեր։

ե). բեմադրություն՝ (инсценировка) գործարան, կոլտնտեսություն և այլն — ոգտագործել էքսկուրսիաների նյութը։ Յուրաքանչյուր պարապմունքի մեջ մտցնել ազատ վարժություններ և հանգստացուցիչ քայլվածք։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Զրույց. Ղեկավարը յերեխաների հետ կազմակերպում է զրույց, վորի ընթացքում նշում է, վոր արդեն յեղանակները տաքացել են և սրանից հետո բոլոր աշխատանքներն ամբողջովին կարելի յե փոխադրել բակը՝ բացոթյա աշխատելու համար։ Խորացնել այդ զրույցը, վոր մաքուր ոդում մնալն ամրացնում է որգանիզմը, վոր յերեխաները պետք է առողջ լինեն բանվորներին և կարմիր բանակայիններին փոխարինելու համար։

Զրույցում ղեկավարը յերեխաների հետ նախագծում է, թե ինչպես պետք է հրապարակը պլանավորել։

Պայմանավորվում են խաղերի և զբաղմունքների համար կազմակերպել հրապարակ։

2. Հողամասի ուսումնասիրությունը. Ղեկավարն ու յերեխաները միասին ուսումնասիրում են իրենց բակն ու հողամասը և վորոշում առանձին տեղեր հատկացնել խաղերի և զբաղմունքների համար։

Պայմանավորվում են կարգի բերել հրապարակը։ Ուսումնասիրությանը զուգընթաց ուշադրություն են դարձնում բնության մեջ կատարվող փոփոխությունների վրա, թարմ խոտերի յերևալը, ծառերի ծաղկելը և տերևակալելը (դեղձի, ծիրանի, շլորի)։

3. Դիտումներ. Հողամասը կարգի բերելու և կատարած էքսկուրսիաների ժամանակ դիտում են ծառերը։

4. Նկարչություն. Յերեխաներին տալ նկարչական նյութ և հետևել, թե վոր չափով են ձեռք բերել նյութի հետ վարվելու և գործածելու ունակությունները։

5. Զրույց կոլտնտեսության մասին. Յերեխաներն արդեն գաղափար ունեն կոլտնտեսության մասին։ Զրույցի ընթացքում ղեկավարը յերեխաների ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, վոր

արդեն կոլտնտեսություններում վերջանում է գարնանացանը և վոր այս տարի ավելի շատ են ցանել անցյալ տարվա համեմատությամբ։ Կոլտնտեսականները հիմա պետք է աշխատեն բանջարանոցներում, վոր քաղաքին հացից բացի տան նաև բանջարեղեններ, պտուղներ։

6. Էքսկուրսիա դեպի պիոներական հրապարակը. Երեխաները ղեկավարի հետ միասին գնում են պիոներական հրապարակը, դիտելու, թե նրանք ֆիզկուլտ վարժությունների համար ինչ գործիքներ և հարմարություններ ունեն։

7. Խաղերի հրապարակի սարքավորումը. Երեխաները ղեկավարի ոգնությամբ սարքավորում են հրապարակը թե ֆիզկուլտ վարժությունների համար և թե կազմակերպված ու ստեղծագործական խաղերի համար։ Ֆիզկուլտ վարժությունների համար գետնին ամրացնում են գերան, համապատասխան բարձրության վրա կախում են օղը, պատրաստում են բլուրը, ամրացնում են աստիճանները։ Ղեկավարն առաջարկում է երեխաներին՝ գերանի վրայով քայլել, աստիճաններով բարձրանալ և իջնել։ Վորոնք չեն կարողանում բարձրանալ կամ քայլել, սկզբում ղեկավարը նրանց ոգնում է, իսկ հետագայում այդ վարժությունները կատարում են ինքնուրույն կերպով։ Երեխաներին տրվում է այն դրույթը, վոր ֆիզկուլտ վարժություններն ամրացնում են որգանիզմը, վոր ֆիզկուլտուրայով պարապում են պիոներները, կոմերիտականները, բանվորները։ Այնուհետև պիոների կամ ղեկավարի ոգնությամբ պատրաստում են խաղալիքների մի մեծ արկղ, ցատկիչների և սանձերի համար կախարաններ և ամրացնում համապատասխան տեղ։

8. Երգ-երաժշտություն. Կրկնել սովորած երգերը։ Սովորել «Բրիգադիր եմ» երգը։

9. Կավ. Երեխաներին տալ կավ, ազատ կերպով արտահայտելու իրենց տպավորությունները։

10. Բակի շինարարական աշխատանքների համար աղյուսների պատրաստելը. Երեխաները դիտում են, թե մեծ երեխաներն ինչ շինարարական աշխատանք են տանում բակում և վորոշում են, թե ինչով կարող են ոգնել նրանց։

Համաձայնություն են գալիս մեծերի հետ աղյուսներ պատրաստել կառուցման համար։ Այդ նպատակով ղեկավարը երեխաներին տալիս է աղյուսի կաղապար (պատրաստած չորս տախտակներից, առանց տակի, արկղի ձև) փոքրիկ բահեր, կավ, ավազ և ջուր։ Ավազը, կավը և ջուրը խառնելով իրար, պատրաստում են խառնուրդ, վորը լցնում են կաղապարի մեջ և բահերով հարթելով դնում տախտակների վրա, արևի տակ, չորանալու։ Չորացնելուց հետո գործադրում են շինարարության համար։

11. Շինարարական աշխատանք. Ղեկավարը շինարարական աշխատանքների համար տրամադրում է խոշոր կառուցողական նյութ, իրենց պատրաստած աղյուսները, կավ, ավազ, ցեմենտ, քարեր, տախտակներ, էլեկտրական լարեր, ապակի և այլն։ Երեխաները սկսում են շինարարական աշխատանքը։ Կառուցում են իրենց միջավայրում ցեղած շինարարություններից. (էլեկտրոկայան, ջրաղաց, ակումբ)։

12 Զրույց-ավագ խմբի երեխաների ներկայացուցիչների ներկայությամբ. Ղեկավարը հիշեցնում է երեխաներին, վոր շուտով նրանք պետք է փոխադրվեն բարձր խումբ և առաջարկում է իմանալ մեծ երեխաներից, թե նրանք ինչպես են հերթապահում, ինչ են անում աշխատանքային սենյակում և ինչպես են պատրաստվում դպրոց գնալու համար։ Զրույցի վերջում երեխաները վորոշում են ստուգել, թե արդյոք պատրաստ են դպրոց գնալու համար։

13. Կատարած աշխատանքների ընտրություն. Ղեկավարը և երեխաները միասին վերանայում են խմբի ամբողջ աշխատանքները և ընտրում աշխատանքների մի մասը (նկարչություն, կավ, ձեռքի աշխատանք և այլն) ցուցադրելու ծնողներին ու մյուս խմբի երեխաներին, թե նրանք ինչով են զբաղվել և ինչ են արել ամբողջ տարվա ընթացքում։

14. Հասարակական-քաղաքական դաստիարակության ստուգողական աշխատանք (նկարների և զրույցի միջոցով). Ղեկավարը զրույցի համար նախորոք պատրաստում է հասարակական-քաղաքական դաստիարակության վերաբերյալ նկարներ, ամսագրեր, պլակատներ, երեխաների նկարածներից աչքի ընկնող մոմենտները և տալիս երեխաներին հայ- տարբերելու հասարակական-քաղաքական դրույթների յուրացումը (նկարներ-կարմիր բանակի կյանքից, սոցշինարարություն, պիոներներ, կոլտնտեսություն, բանվորների և այլն)։

Զրույցի ընթացքում երեխաները հիշում են վորտեղ և յերբ են ծանոթացել այդ նյութերի հետ և ղեկավարը ճշտում է նրանց կողմնորոշումներն ու դրույթները։ Նույն ձևի զրույց կարելի յե կազմակերպել բնության դիտողությունների վերաբերյալ, բացի էքսկուրսաներից ու զբոսանքներից, ճշտելու նրանց ծանոթությունները և գիտելիքները։

15. Խմբական արտասանություն. Արտասանություններ պատրաստել տարեվերջի հասարակական հանդեսի համար։ Կրկնելու և դերեր բաշխելու ժամանակ հաշվի առնել նաև երեխաների ցանկությունը. կարելի յե տալ խմբական (մասսայական) դերեր։

16. Զրույց. Երեխաների հետ զրույց ունենալ տարեկան աշխատանքների ամփոփման շուրջը, մոտավորապես հետևյալ սխեմայով. ա). ինչ գրքեր է կարդացել ղեկավարը, բ). ինչ են պատմել, ինչ պատմվածքներ գիտեն. գ). ինչ վոտանավորներ գիտեն Մարտի 8-ի, Լենինի որվա, Հոկտեմբերի և Նոյեմբերի մասին, ձմռան, գարնան վե-

րաբերյալ։ Խուսափել նոր նյութերից։ Կրկնելու համար ընտրել անցածից լավագույնները։

17. **Ստուգողական աշխատանք. Երգ-երաժշտություն**, Կրկնել սովորած երգը, վարժությունները։ Նշել բացերը և նվաճումները։ Ամփոփել անցածները և ընտրել լավագույնները՝ տարեվերջի հանդեսին ցուցադրելու։

18. **Կազմակերպել զրույց ցուցահանդեսի աշխատանքների շուրջը.** Երեխաները մեծերի հետ խորհրդակցում են, թե ինչպես կազմակերպեն ցուցահանդեսը, թե որ խումբը ինչ աշխատանքներ պետք է ցուցադրի։ Որոշում են ցուցահանդեսին ցուցադրել պատի թերթ, նվիրված Կարմիր բանակին, Հոկտեմբերյան Հեղափոխությանը, ինքնաշեն խաղալիքներ, բնության օրացույց, նկարներ, կավե աշխատանքներ և այլն։

19. **Պատի թերթի աշխատանքներ.** Երեխաները պիոներների և ղեկավարի օգնությամբ իրենց նկարած աշխատանքներից պատրաստում են պատի թերթ։ Առանձնացնում են գարնանային աշխատանքներին վերաբերող նկարները, կտրատում ու կպցնում են մի մեծ թերթի վրա։

20. **Ցուցահանդեսը զարդարելու աշխատանքներ.** Ցուցահանդեսի համար առանձնացված աշխատանքները դասավորում են սեղանների, դարակների վրա։ Պատերին ամրացնում են նկարներ, պլակատներ, լոզունգներ։ Շենքը զարդարում են դրոշակներով, բնական նյութերով։

21. **Ցուցահանդես։** Ցուցահանդեսի օրը հրավիրվում են մանկ. հիմնարկին կից արտադրության բանվորները, բանվորուհիները, կոլտնտեսականները, գործարկոմը կամ կոլտնտեսության նախագահը (նայած թե հիմնարկը որ արտադրությանն է կցված)։ Երեխաներից ընտրված հանձնաժողովը հյուրերին ցույց է տալիս իրենց աշխատանքները, կենդանի անկյունը, բանջարանոցը, ծաղկանոցը, արհեստանոցը, որտեղ պատրաստել են իրենց ինքնաշեն խաղալիքները։ Այնուհետև բացում են հանդեսը, ուր երեխաները արտասանում են ոտանավորներ, երգում են երգեր, ցուցադրում են բեմադրումներ (инсценировка), կենդանի լրագիր և այլն։ Վերջում տրվում է ճոխ նախաճաշ։

22. **Հանդեսին հրավիրված կից դպրոցի I** խմբի ղեկավարը դպրոցական հասակ ունեցող երեխաներին ընդունում է հանդիսավոր կերպով և բացատրում, որ Խորհրդային Միության մեջ բոլոր բանվորների և կոլտնտեսականների երեխաները 8 տարեկան հասակից սկսած պետք է սովորեն, որովհետև մեզ մոտ պարտադիր ուսում է, որ տղաները և աղջիկները սովորում են միասին. պիոներները և հոկտեմբերիկներն օգնում են ուսման աշխատանքներին։

23. **Հանդեսի օրը** հանդիսավոր կերպով 5 տարեկան երեխանե-

րին փոխադրում են միջին խումբ, 6 տարեկան երեխաներին՝ ավագ խումբ, իսկ 7 տարեկան երեխաներին դպրոց։

24. **Ավագ խմբի աշխատանքների ընդունումը.** Երեխաները կազմակերպված ձևով գնում են բարձր խումբը և ծանոթանում նրանց աշխատանքներին, գործիքներին, խաղալիքներին, և նյութերին։ Բարձր խմբի երեխաները պատմում են, թե ինչպես են օգտագործում այդ նյութերը և ինչ աշխատանքներ կարելի է պատրաստել։ Ընդունված նյութերը ղեկավարի հետ հաշվում են և որոշում, թե ինչը կարող են վերցնել բարձր խմբում օգտագործելու համար և ինչը կարող են նվիրել փոքրիկներին։ Հրավիրելով փոքրերին, նախօրոք տեսակավորած, հաշված նյութերը հանձնում են նրանց։ Ղեկավարը պատմում է, թե ինչ պետք է անեն նրանք միջին խմբում, իսկ երեխաները ցույց են տալիս իրենց խաղալիքները, գործիքները, նյութերը, կատարած աշխատանքները և այլն։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Բնությունը դիտելու շարունակություն.** Շարունակել բնությունը դիտելը։ Մեկ կամ երկու անգամ կատարել էքսկուրսիաներ, դեպի միևնույն այգիներն՝ էլ ավելի լավ դիտելու բնության մեջ կատարվող փոփոխությունները։

Ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ծառերն արդեն ծաղկել են, տերևակալել։

2. **Հասած բանջարեղենի հավաքում.** Բոլոր խմբերը միասին հավաքվում են իրենց բանջարանոցում և նայում թե որոնք են արդեն հասել և որը կարելի է քաղել։ Երեխաները բաժանվում են բրիգադների և յուրաքանչյուր բրիգադ հավաքում է տարբեր տեսակի կանաչեղեն (բողկ, սոխ, կոտեմ և այլն)։

3. **Աշխատանք ճագարանոցում.** Կերակրում են ճագարներին (խոտով, հացահատիկով, բանջարեղենով)։ Փոխում են խմելու ջուրը, մաքրում ամանները։ Դիտում են նրա արտաքին տեսքը, սնվելու մոմենտները։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Հրավիրել ծնողական ընդհանուր ժողով և հաշվետու զեկուցում տալ ուսումնական տարվա ընթացքում մանկապարտեզի կատարած աշխատանքների մասին։

2. Լսել բժշկի զեկուցումը տարած աշխատանքների մասին։

3. Կազմակերպել ցուցահանդես ներգրավել այդ աշխատանքներում ծնողներին, պիոներներին։

4. Հրավիրել խմբակային ծնողական ժողով, լսել ղեկավարի զեկուցումը երեխաների առաջադիմության և բնութագրերի մասին։

ԱՄԱՌԱՅԻՆ ԿՎԱՐՏԱԼ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 14.

ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

(1/VI — 29/VI — 25 աշխատանքի որ.)

(Ժամկետը փոփոխության չենթակա չէ, նայած տեղի պայմաններին)

Այս կազմակերպող մոմենտի նպատակն է հենց աշխատանքների սկզբից հրապարակում կազմակերպել համերաշխ — կոլեկտիվ կյանք: Դեռ մինչև յերեխաների հրապարակ գալը, հասարակական կազմակերպությունների, ծնող — կոլտնտեսականների ոժանդակությամբ պատրաստում են աշխատանքի համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Ծնողների, կոմյերիտական և պիոներ կազմակերպության հետ կազմակերպվում է շաբաթօրյակ, վորպեսզի հրապարակի համար նախապատրաստեն շենք և հողամաս: Շատ կարևոր է, վոր յերեխաները սկզբից և յեթ հրապարակում տեսնեն կատարյալ կարգ ու կանոն, վոր ամեն ինչին վորոշ տեղ է հատկացրած և ամենուրեք տիրում է մաքրություն: Ծնողների հետ այդ ժամանակամիջոցում պետք է տարված լինի մեծ բացատրական աշխատանք հրապարակի նշանակության մասին, վորպես հիմնարկ, ուր յերեխաները ստանում են կոմունիստական դաստիարակություն: Պետք է ծանոթացնել ծնողներին հրապարակի կանոններին և ռեժիմին:

Այս կազմակերպող մոմենտի շնորհիվ ղեկավարը պետք է յերեխաներին՝ սովորեցնի.

1. Միմյանց ոգնել, փոքրերին գործիքներով ոժանդակել, խաղալիքներից համաչափ ոգտվել, մտահոգված լինի հիմնարկի մաքրությամբ, կարգ ու կանոնով. խնամքով վերաբերվի իրերին, ամեն ինչ իր տեղը դնի, վորպեսզի բոլորի համար լավ լինի և հեշտ:

2. Յերեխաներին պիտի սովորեցնի ճիշտ կատարել ռեժիմը, ժամանակին լվացվել, ուտել, խմել, քնել, աշխատել, խաղալ, վորպեսզի առողջ, ամուր և ուժեղ լինեն:

3. Պիտի կանոնավորի տղաների և աղջիկների փոխհարաբերությունը: Նրանց միատեսակ աշխատանք տա:

1. Հասարակական — քաղաքական դաստիարակություն.

Փոքրերին գաղափար տալ, վոր իրերը և խաղալիքները վոչ միայն անձնական այլև հասարակական նշանակություն ունեն և պետք է խնամքով վերաբերվել: Տղաները և աղջիկները պետք է միասին աշխատեն և խաղան:

Մեծերը: Նկարի վրա ճանաչել Լենինին և Ստալինին: Գիտենալ, վոր Վլադիմիր Իլիչ Լենինը բանվորներին և գյուղացիներին

սովորեցնում էր պայքարել բուրժուաների, կուլակների դեմ և կառուցել գործարաններ, կոլտնտեսություններ: Ստալինը շարունակում է Լենինի գործը: Գիտակից գյուղացիները մտնում են կոլտնտեսություն: Կոլտնտեսություններում յերեխաների համար կազմակերպում են հրապարակներ:

2. Աշխատանքային դաստիարակություն

Փոքրերը: Սովորել մատիտը, վրձինը, մկրատը կանոնավոր բռնել: Գիտենալ, վոր թղթի վրա գրում և նկարում են: Կարողանալ խաղից և աշխատանքից հետո ղեկավարի ոգնությամբ հավաքել խաղալիքները և մատիտները:

Մեծերը: Կարողանալ վարվել ամանեղենի հետ, դասավորել ափսեները, գավաթները, հավաքել ամանեղենը, թաց շորով սրբել սեղանի յերես . մաքրել: Առաջին որը նախաճաշին հերթապահություն անել:

3. Բնագիտություն

Փոքրերը: Տարբերել ջուրը, թուղթը և խոտը, տարբերել ավազը կավից. գիտենալ թե ինչ ոգուտ են տալիս ընտանի կենդանիները և թռչունները (կով, ձին, շուն. բադը, սագը, հնդկահավը):

Մեծերը: Գիտենալ, վոր բույսն ունի արմատ, ցողուն, տերև. ծառն ունի արմատ, բուն, ճյուղեր, տերևներ:

4. Ֆիզդաստիարակություն

Բոլոր խմբերը: Գիտենալ, վոր առողջության համար անհրաժեշտ է մաքուր լինել, ժամանակին ուտել և քնել. մեծ մասամբ մաքուր ոդում լինել: Գիտենալ, վոր չի կարելի մի քանի հոգով միասին մի ամանից ուտել, միևնույն դգալով ուտել: Ամեն մեկը պետք է ունենա իր առանձին սրբիչը, ափսեն, դգալը, գավաթը: Չի կարելի ուրիշի կերակրի ավելցուկը և հացի մնացորդներն ուտել: Սովորեցնել ձեռքերը, յերեսը լվանալ օճառով և լավ չորացնել սրբիչով, վոր չճաքճքոտի: Քնելուց առաջ վոտները լվանալ, մաքուր և կանոնավոր ոգտվել արտաքնոցից:

5. Յերգ — յերաժշտություն

Փոքրերը: Լսել ղեկավարի յերգը և ձայնակցել:

Մեծերը: Յերգի կամ նվագի տակ ծափ տալ: Կանգ առնել ղեկավարի ազդանշանով, յերգը վերջանալու հետ: Քայլել յերգի կամ նվագի տակ: Տեղում կազմել շրջան: Մեկ-մեկ կազմել շարք, զույգ-զույգ քայլել. այս բոլորը ղեկավարի ոգնությամբ:

6. Կերպարվեստ

Փոքրերը՝ Սովորել ավազից պատրաստել զանազան ձևեր (ալազանոթների միջոցով): Գիտենալ գույները՝ կարմիր, սպիտակ, սև

Մեծերը: Կարողանալ այդ գույները գտնել շրջապատող միջավայրում. օրինակ՝ կարմիր դրոշակ, սպիտակ պատեր, սև կոշիկներ և այլն: Կարողանալ շինարարական նյութով պատ կառուցել:

7. Մաթեմատիկա

Փոքրերը: Տալ կողմնորոշումներ աջի, ձախի, մեծի և փոքրի մասին:

Մեծերը: Հաշվիլ մինչև 6-ը, ավելի մեծ, ավելի փոքր, կլոր:

8. Կենդանի խոսք

Բոլոր խմբերը: Սովորեցնել պատասխանել ղեկավարի հարցերին, ղեկավարին հայտնել իր ցանկությունների և հետաքրքրությունների մասին: Կարողանալ վողջունել հրապարակ գալիս և տուն գնալիս:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Միջին (6 տար.) և ավագ (7 տար.) համար:

1. Զրույց: Առաջին օրերը ղեկավարը յերեխաներին հարց ու փորձ է անում, իմանալու նրանց անունները, տարիքները, թե ով վորտեղ է ապրում, ունե՞ն արդյոք հայր, մայր, քույր, յեղբայր: Ինչով են զբաղվում ծնողները և այլն, յերեխաներին պատմում է թե ինչ պետք է անեն հրապարակում:

2. Խաղ: Անհրաժեշտ է, վոր ղեկավարն առաջին օրերից հետաքրքրի յերեխաներին հրապարակի կյանքով, տալով նրանց խաղալիքներ և նյութեր ու բացատրի, թե ինչպես օգտվեն: Լավ է անցկացնել կազմակերպված խաղեր: Ընտրել այնպիսի խաղեր, վորին մասնակցեն բոլոր յերեխաները, օրինակ՝ գնդակ խաղալ, շրջան կազմել կամ կանգնել շարքով, գնդակը գցել հերթով: Յեթե փոքրերը չեն ուզում խաղալ, խաղալիքներ տալ, պիոներների ղեկավարությամբ խաղալու համար:

3. Նկարչություն: Ղեկավարը նախորոք պատրաստելով մատիտներ և թուղթ (սրել ծայրերը — կտրատել թուղթը) տալիս է յերեխաներին նկարելու՝ ով ինչ ցանկանում է: Նկարչության ժամանակ հետևում է կարգապահությանը, առողջապահական կանոններին (ուղիղ նստել, չկռանալ). և մատիտի ճիշտ գործածությանը: Նկարելուց հետո հավաքում է թերթիկները և վրան գրում անունները:

4. Սրբիչների կախարանների համար նշաններ պատրաստելը: Կախարանների համար պատրաստում են նշաններ վորպեսզի յուրաքանչյուրը ճանաչի իր սրբիչի տեղը: Գունավոր թղթերից կտրում են յերկրաչափական պարզ ձևեր (քառանկյուն, յեռանկյուն, շրջան, քառակուսի) և սոսինձ քսելով կպցնում մեխի դիմաց: Մեծ յերեխաները

կարող են իրենք կտրել, իսկ փոքրերը՝ ղեկավարի և պիոների օգնությամբ:

5. Յերգ — յերաժշտություն: Սովորել «Ջրի հետ դու հաշտ ապրի» և «մենք ուրախ, առույգ մանկիկ ենք» յերգերը:

6. Հողամասի ուսումնասիրությունը: Ղեկավարը և յերեխաները միասին ուսումնասիրում են իրենց բակը և հողամասը ու վորոշում առանձին տեղեր հատկացնել ծաղկանոցին, բանջարանոցին: Խաղերի և զբաղմունքների համար պայմանավորվում են կարգի բերել հրապարակը:

Այդ աշխատանքների համար նախապատրաստում են բոլոր անհրաժեշտ իրերը (արկղներ, պատգարակներ, բահեր, ավելներ և այլն): Յեթե հրապարակը չունի այդ բոլորը կարելի յե խնդրել հարևան հրապարակից: Վորոշ իրեր կարելի յե բերել տներից:

7. Աշխատանք հողամասում: Յերեխաներն իրենց հողամասը կարգի յեն բերում, նախորոք պայմանավորվելով ով ինչ աշխատանք պետք է կատարի: Այս աշխատանքների ժամանակ յերեխաները բաժանվում են առանձին խմբերի և կատարում աշխատանքի բաժանում: Յերեխաների մի մասը հավաքում է փոքրիկ քարերը իսկ մյուս մասը պատգարակներով՝ չոր խոտերը, արմատները և տանում թափում առաջուց վորոշված տեղը: Ղեկավարը հետևում է, վոր յերեխաներն աշխատեն ռացիոնալ ձևով (պահպանել հանգստի և աշխատանքի համաչափությունը), համբերաշխ, կոլեկտիվ կերպով: Դժվար աշխատանքների դեպքում օգնում է նրանց: Աշխատանքից հետո տեսնում են իրենց կատարած աշխատանքի արդյունքը, թե ինչպես մաքուր է ու գեղեցիկ: Վորոշում են սիստեմատիկ կերպով հետևել մաքրությանը:

8. Հրապարակը զարդարելը: Յերեխաները գնում են դաշտ՝ հրապարակի զարդարման համար ծաղիկներ հավաքելու: Ծաղիկներից կապում են ծաղկեփնջեր և դնում սեղանների վրա, պատուհաններում, կախում են հեղափոխական առաջնորդների նկարներ (Լենին, Ստալին) և ուրիշ գեղարվեստական նկարներ, պլակատներ, լոզունգներ:

9. Կավ: Յերեխաներին տալ կավ՝ արտահայտելու հողամասում կատարած աշխատանքներից իրենց ստացած տպավորությունները: Բացի կավից տալ նաև լրացուցիչ նյութեր (ծառերի ճյուղեր, փայտիկներ և այլն):

10. Վորոշել խաղալիքներ պահելու տեղը: Ղեկավարը և յերեխաները միասին վորոշում են, թե վորտեղ դասավորեն իրենց խաղալիքները: Հրապարակում կամ հիմնարկի ներսում խաղալիքների համար առանձնացնում են մի անկյուն: Համաձայնության են գալիս, թե ով ինչ աշխատանք պետք է տանի: Յերեխաները ղեկավարի հետ միասին անկյունում դնում են սեղան, դարակներն ամրացնում պատին

և վրան դասավորում կամ կախում իրենց խաղալիքները (սանձեր, ողակներ)։ Դասավորված խաղալիքները հաշվում են և համաձայնության գալիս ղեկավարի հետ, թե ինչպես պետք է օգտագործեն։

11. Պատկերազարդ գրքեր դիտելը։ Յերեխաներին պատմել «Զարիկի առաջին օրը մանկապարտեզում» կամ Միտչելի «Նարեկը»։ Պատմությունից հետո դիտել նկարները։

12. Պատրաստել ջրի հետ խաղալու խաղալիքներ։ Յերեխաները ղեկավարի կամ պիոներների օգնությամբ պատրաստում են խաղալիքներ, օրինակ՝ ջրաղաց, նավակներ, շոգենավեր. խաղալիքների մի մասը նվիրում են փոքրերին։

13. Բակում խաղեր ջրի հետ։ Ջրով խաղալու համար յերեխաներին տրամադրվում է մի մեծ թաս ջուր (կամ կարելի յե օգտվել բակի ավազանից) և իրենց պատրաստած խաղալիքները, նաև շշեր, քարեր, ծառի կեղևներ։ Յերեխաները խաղալով տեսնում են, վոր առարկաներից մի մասն ընկղմում է ջրի մեջ, իսկ մյուսները՝ վոչ։ Ջուրը կեղտոտվելու դեպքում պետք է փոխել։

14. Յերգ — յերաժշտություն։ Սովորել «Հյուսնոցը» և կրկնել անցած յերգերը։

15. Հողամասի աշխատանքների ամփոփում յեվ ընդհանուր կանոնների սահմանում։ Յերբ հրապարակի կյանքը կանոնավորված է, ղեկավարը և յերեխաները միասին կազմակերպված ձևով մտնում են իրենց անկյուններին, նշում են, վոր ամեն ինչ իրենց վորոշված տեղում է, ամեն տեղ կարգ ու կանոն է տիրում և վոր անհրաժեշտ է այդ կարգը պահպանել։ Խաղալիքները կախել վորոշված տեղը, գործիքները և նյութերը նույնպես դասավորել իրենց տեղը։ Սահմանել հերթապահություն, վոր հետևի այդ բոլորի կատարմանը (հերթապահները փոխվում են ամեն օր)։

16. Կազմակերպված խաղեր։ Ղեկավարն առաջարկում է յերեխաներին խաղալ և քայլել թմբուկի զարկի տակ։

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Զբոսանքի ժամանակ յերեխաները դիտում են կոլտնտեսության դաշտերը և նշում թե վորտեղ ինչ է ցանված։ Յերեխաների ուշադրությունը դարձնել այն հանգամանքի վրա, վոր կոլտնտեսությունում աշխատում են մեքենաներով, միասին, կոլեկտիվ կերպով։ Տնտեսությունն ընդհանուր է, հողեր շատ ունի։ Կոլեկտիվ կերպով աշխատելը հեշտ է և արագ։ Կոլտնտեսություններում կազմակերպում են մսուրներ, մանկ-հրապարակներ։

2. Զրույցի միջոցով հայտաբերել, թե արդյոք յերեխաները գիտեն,

վոր առաջ հողերը պատկանում էյին բուրժուաներին, կալվածատերերին։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ բանվորները գյուղացիների հետ միասին հաղթեցին բուրժուաներին։ Խլեցին նրանց ձեռքից հողերը, գործարանները և իրենք սկսեցին ղեկավարել։ Լենինն ամբողջ աշխատավորության առաջնորդն է։ Նա սովորեցրեց թե ինչպես պետք է հաղթել բուրժուաներին։

3. Ազատ ստեղծագործական խաղեր։ Յերեխաներին տրամադրել շինարարական նյութ (խորանարդներ, աղյուսներ, փայտիկներ, անիվներ. և այլն)։ Յերեխաներին օգնել կառուցելու տրակտոր, սավառնակ և այլն։

ՓՈՔՐ ԽՄԲԱԿ (5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ).

Փոքր խմբի յերեխաներն առաջին օրերը հրապարակում մեծ մասամբ զբաղվում են խաղերով և ռեժիմի կիրառմամբ, բայց աստիճանաբար մասնակից են դառնում և օգնում մեծ յերեխաներին և ղեկավարին։ Մասնակցում են ընդհանուր կազմակերպված խաղերին, յերգերին։ Խաղում են ավազով, ջրով և այլն։ Վերոհիշյալ աշխատանքներում փոքր խմբի յերեխաները ներգրավվում են աստիճանաբար։ Սկզբում իրենց ցանկությամբ փոքրիկ խմբակներով։ Փոքր խմբի երեխաների հետ մեծ աշխատանք է տարվում ռեժիմի ճիշտ կիրառման ուղղությամբ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմակերպել ծնողներին — ընտրել հանձնաժողով։
2. Զեկուցել հրապարակի նշանակության և ծնողների անելիքների մասին։
3. Կազմակերպել շաբաթօրյակ կոլտնտեսականների հետ միասին մանկ-հրապարակի բակը կարգի բերելու։
5. Կապ հաստատել պիոներ կազմակերպության հետ։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 15

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ՅԵՎ ԾԱՂԿԱՆՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

(1/VII—20/VII—17 աշխատանքի օր. Ժամկետը յենթակա յե փոփոխության, նայած տեղի պայմաններին).

Այս կազմակերպող մոմենտը խոշոր նշանակություն ունի յերեխաների դաստիարակման գործում։ Կազմակերպելով իրենց բանջարանոցը, յերեխաները 1. հնարավորություն են ստանում ավելի սերտ կապ պահպանելու կոլտնտեսության հետ (կոլտնտեսությունից ստա-

2015—6

նում են սերմեր կամ պարարտանյութ և ծանոթանում, թե ինչպես են աշխատում կոլտնտեսականները դաշտում և բանջարանոցում). 2. գործնականում ծանոթանում են, թե ինչ օգուտ է տալիս բանջարանոցը հրապարակի, կոլտնտեսականների և բանվորների երեխաներին, նրանց սննդի բարելավման գործում. 3. աշխատելով բանջարանոցում, երեխաները ստանում են ավելի շատ գիտելիքներ բնության վերաբերյալ և թե ինչպես մարդն օգտագործում է բնությունն իր կարիքների համար։ Ծանոթանում են, թե ինչպես պետք է խնամել, ցանել, ջրել, քաղհանել բույսը։ Ծանոթանում են վնասատու և օգտակար թռչունների հետ։ Սովորում են տարբերել տարբեր տեսակի սերմերը, բանջարեղենները, ծաղիկները և այլն։ Երեխաներն իմանում են, որ լավ բերքը կախված է, ոչ թե գոյություն չունեցող աստծուց և տերտերների աղոթքներից, այլ խնամքից (հողի պարարտացում, սերմերի զտում, քաղհան և այլն)։

Բանջարանոցի և ծաղկանոցի աշխատանքներն օգնում են երեխաների առողջացմանը։ Երեխաներն, ամբողջ ժամանակ գտնվելով մաքուր օդում, շարժման մեջ, զարգացնում են իրենց մկանները, թոքերը և դառնում կայտառ ու ուժեղ։ Ղեկավարը պետք է ուշադրություն դարձնի, որ երեխաները չհոգնեն, որ մեծերն աշխատեն 25-30 րոպեից ոչ ավել, իսկ փոքրերը՝ 10-15 րոպեյից ոչ ավել ընդմիջումներով (հանգստանալու համար)։

Լավ կլինի, որ երեխաների բրիգադները 25-30 րոպեյի ընթացքում փոխեն աշխատանքի տեսակը. օրինակ՝ մի մասը քաղհանի, իսկ մյուսը ջրի և ընդհակառակը։ Բոլոր գործիքները պետք է համապատասխանեն երեխաների հասակին և ուժին։ Ոչ մի դեպքում երեխաները չպետք է աշխատեն մեծերի գործիքներով։ Մի շարք աշխատանքներ, որոնք երեխաների ուժերից վեր են, պետք է կատարեն մեծերը։ Բանջարանոցի և ծաղկանոցի կազմակերպման գործում պետք է մասնակցեն ծնողները, դպրոցականները և պիոներները։

Ծնողական ժողովում ղեկավարը պետք է բացատրի, որ երեխաների աշխատանքը բանջարանոցում և ծաղկանոցում օգուտ է առողջության համար (երեխաների բացօթյա ճաշը, կոլեկտիվ կերպով աշխատելը)։

1. Հասարակական—քաղաքական դաստիարակություն.

Փ ո ք ր ե ր ը։ Գիտենալ, որ բոլոր կոլտնտեսականները պետք է լավ աշխատեն կոլտնտեսության մեջ։

Քաղաքում շատ գործարաններ կան, այնտեղ աշխատում են բանվորներ և բանվորուհիներ։ Գործարաններում բանվորները պատ-

րաստում են տրակտորներ, ավտոներ, մեքենաներ, կտոր և շատ ուրիշ իրեր։

Պիոներները կարմիր փողկապ են կապում։ Պիոներներն օգնում են հրապարակի երեխաներին։

Մ ե ծ ե ր ը։ Կոլտնտեսության մեջ գյուղացիների համար հեշտ է աշխատելը. այնտեղ ավելի լավ են ապրում։ Միասին աշխատելը հեշտ է և արագ։ Երեխաները նույնպես պետք է միասին աշխատեն, օգնելով միմյանց։ Կոլտնտեսականները դաշտում աշխատում են մեքենաներով, տրակտորներով, որպեսզի ավելի հեշտ լինի և արագ։ Բանվորները և կոլտնտեսականները պետք է աշխատեն հարվածային կերպով։ Հարվածայինները լավ են աշխատում, չեն ուշանում, պարապուրդ չեն տալիս, պայքարում են պարապուրդ տվողների դեմ, օգնում են յետ մնացողներին, իրենց լավ աշխատանքով օրինակ են ծառայում բոլորին։ Հրապարակում երեխաները նույնպես պետք է լավ աշխատեն։

Գիտենալ, որ պիոներները կազմակերպված երեխաներ են, նրանք պետք է լավ սովորեն, որպեսզի մեծանան, դառնան գիտակից ու կազմակերպված բանվորներ և կոլտնտեսականներ։

Գիտակից բանվորներն ու կոլտնտեսականները և աշխատավորությունը չեն հավատում աստծուն, յեկեղեցի չեն գնում։

Բանջարանոցում աշխատելիս, դաշտում կոլտնտեսականների աշխատանքը դիտելիս պետք է մեծերին տալ այն հասկացողությունը, որ բերքը կախված է մարդու աշխատանքից և ոչ թե տերտերների աղոթքներից։

2. Աշխատանքային դաստիարակություն

Փ ո ք ր ե ր ը։ Կարողանալ ափսեները և գավաթները դասավորել, ջրել բանջարանոցը։ Գիտենալ, որ տախտակները կարելի յե ամրացնել մեխով մուրճի օգնությամբ, որ փայտից պատրաստում են սեղաններ, աթոռներ, տներ։

Կարողանալ աշխատել ընկերների կողքին, առանց խանգարելու միմյանց։

Մ ե ծ ե ր ը—Կարողանալ լվանալ և սրբել թեյի ամանեղենը։ Գիտենալ, որ տաք ջրով և օճառով հեշտ է ամանեղենն և լվացքը լվանալ, որ օճառը կեղտն լուծում է։ Կարողանալ կարգի բերել սենյակը, սովորեցնել ճիշտ աշխատել, բանջարանոցում փոցխերով, բահերով. բանել մուրճը, խփել մեխերը։ Կարողանալ աշխատանքի պրոցեսում օգնել միմյանց, գործիքները տալ ընկերներին։ Սովորեցնել փոքր խմբերով աշխատել, մաքուր, աշխատանքից հետո հավաքել նյութերը և գործիքները։

3. Բանջարանոցում

Փ ո ք ր ե ր ը—Սովորեցնել բանջարեղենների և ծաղիկների մեծ սերմեր տնկելը (լոբի, սիսեռ) փայտիկով փոսիկներ պատրաստել սերմերի համար և սերմերը մեջը տնկելով ծածկել հողով։

Գիտնալ այն բանջարեղենները, որ ցանում են բանջարանոցում (գետնախնձոր, գազար)։

Մ ե ծ ե ր ը—Գիտնալ, որ բույսերն աճում են սերմերից, որ ցանելու համար հարկավոր է սերմերը գտնել։ Լավ բերքի համար անհրաժեշտ է պարարտացած հող, լույս, տաքություն և խնամք, որ անհրաժեշտ է ցանելուց հետո խնամել, ջրել, քաղհանել, պայքարել վնասատուների դեմ (թրթուրների և այլն)։

Գիտենալ թե ինչպիսի գործիքներ են հարկավոր դաշտում և բանջարանոցում, ինչպես են աշխատում գութանով, տրակտորով։

Տարբերել թիթեռին, մեղրաճանճին։ Գիտենալ, որ կան օգտակար (մեղրաճանճ, անձրևորդ) և վնասակար (թրթուրներ, որդեր) միջատներ։

4. Ֆիզ-դաստիարակություն.

Փ ո ք ր ե ր ը—Ամրացնել լվացվելու ունակությունները։ Լվանալ ձեռքերը սիստեմատիկաբար զուգարանից օգտվելուց, նախաճաշից, ճաշից առաջ և կեղտոտ աշխատանքից հետո։ Կեղտոտ ձեռքերը բերանը չդնել, աչքերը չտրորել, ուրիշի երեսին չհազալ և չփռշտալ։

Ուտելու ժամանակ կանոնավոր օգտվել գդալից։ Չթափել, չփշրել։ Գիտնալ իր սրբիչի տեղը. ժամանակին կախել սրբիչը իր տեղը, չօգտվել ուրիշի սրբիչից, մաքուր պահել քիթը։

Մ ե ծ ե ր ը—Ունենալ նախնական գաղափար ջրի, արևի և օդի մասին (լող, արևի և օդի վաննաներ)։ Կարողանալ լվանալ վիզը և ականջները։ Գիտնալ, որ բանջարանոցում և ծաղկանոցում աշխատելը օգուտ է առողջության համար։

5. Երգ-երաժշտություն.

Փ ո ք ր ե ր ը—Կարողանալ քայլելիս կանգ առնել ղեկավարի ազդանշանի տակ։ Հեշտ երգերի երգելը։

Մ ե ծ ե ր ը—Կազմել շարքեր մեկ մեկ և քայլել ղեկավարի երգի տակ։ Քայլելիս ուղղել շարքերը։

6. Կերպարվեստ.

Փ ո ք ր ե ր ը—Կարողանալ ավազից պատրաստել մարգեր, թումբեր։ Կարողանալ խաղալ ավազի անոթներով, շինարարական նյութով։ Կառուցել կոլխոզի բակը (անասնապահական) տրակտոր։

Գիտենալ, որ մատիտը և ներկը թողնում են հետք թղթի վրա։ Ճանաչել առարկաների վրա կարմիր գույնը, կարմիր դրոշակ, կարմիր բլուզ, ծաղիկ։

Մ ե ծ ե ր ը—Կապույտ, կարմիր, դեղին, կանաչ գույներ։ Կարողանալ գունավոր մատիտներից գտնել վերոհիշյալ գույները։

7. Մաթեմատիկա.

Փ ո ք ր ե ր ը—Հաշիվ մինչև 5-ը, գիտնալ երկար—կարճ, ավելի երկար, ավելի կարճ, շրջան։

Մ ե ծ ե ր ը—Հաշիվ ըստ կարգի մինչև 15-ը։ Գիտենալ քառակուսին։ Գիտնալ ամիս, ամսաթիվ և օրը ղեկավարի պատմելով։

8. Կենդանի խոսք.

Փ ո ք ր ե ր ը—Երեխաների մեջ պատվաստել ազատ և պարզ արտահայտվելու ունակություններ։ Սովորել կարճ ոտանավոր (4 տողանի)։

Մ ե ծ ե ր ը—Կարողանալ գտնել հանելուկներ և հիշել հրապարակում լսված լոզունգները։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Միջին (6 տար.) և ավագ (7 տար.) համար)

1. Զրույց բանջարանոցի կազմակերպման մասին. Նախքան զրույց կազմակերպելը. ղեկավարը և յերեխաները միասին գնում են դիտելու բանջարանոցի աշխատանքները թե ինչ են ցանել կոլտնտեսությունում, ինչ են տնկել և ինչ աշխատանքներ են կատարում իրենց ծնողները բանջարանոցում։ Այնուհետև զրույցի շնորհիվ վերհիշում են իրենց տեսածը, յեզրակացնում բանջարանոցի օգուտն աշխատավորության համար. դրանով յերեխաների մեջ առաջանում է ցանկություն հրապարակում ևս կազմակերպել բանջարանոց։ Վորպեսզի լավ կազմակերպեն իրենց բանջարանոցը. յերեխաները ղեկավարի հետ միասին
նորից գնում են կոլտնտեսության կամ դպրոցի բանջարանոցն ուսում-
նասիրելու, տեսնելու, թե ինչպես են աշխատում կոլտնտեսականները
(բրիգադաներով, վորոնց տրվում է աշխատանքի վորոշ պլան)։
2. Իրենց հողամասի ուսումնասիրությունը. Ղեկավարը և յերեխա-
ները միասին ուսումնասիրում են և վորոշում թե վորտեղ ավելի լավ
է բանջարանոց կամ ծաղկանոց կազմակերպել։ Չափում են հողամասի
յերկարությունն ու լայնությունը և սահմանավորում քարերով։ Ղեկա-
վարը բացատրում է, թե ինչպիսի տեղը և հողը լավ է բանջարեղենի
ու ծաղիկների համար (բաց արևահայաց տեղ և պարարտացրած հող)։
3. Էքսկուրսիա դեպի վերանորոգման արհեստանոց։ Այն գործիքները,

վորոնք կարիք ունեն մեծ չափով վերանորոգման, յերեխաները տանում են կոլտնտեսության գարբնոցը կամ վերանորոգման արհեստանոցը և բանվորներին խնդրում վերանորոգել: Յերեխաները դիտում են արհեստանոցում յեղած գործիքները, մեքենաները և նրանց հիմնական մասերն, անիվները, շարժիչը: Իմանում են, թե մեքենաներն ինչ աշխատանքներ են կատարում: Բանվորները յերեխաների ներկայությամբ վերանորոգում են նրանց գործիքները և յերեխաները գործիքներով վերադառնում են հրապարակ:

4. **Գյուղատնտեսական գործիքների անկյուն կազմակերպելը:** Յերեխաները և ղեկավարը միասին վորոշում են մի տեղ հատկացնել վերանորոգված գործիքներին, վորպեսզի ամեն ինչ իր տեղը լինի ու չըփչանա: Յերեխաները հաշվում են իրենց գործիքները, թե ամեն տեսակից քանի հատ ունեն: Ղեկավարը գրանցում է մի տետրի մեջ և նշանակում հերթապահներ, վորոնք պետք է հետևեն գործիքների չըփչանալուն, մաքրությանը, բաժանեն յերեխաներին, իսկ աշխատանքից հետո հավաքեն: Պիոներները պատրաստում են փոքրիկ քարտեր, վորոնց վրա նկարում են գործիքները և գրում նրանց քանակն ու անունները (բահեր, փոցխեր, պատգարակ և այլն), ապա կախում համապատասխան գործիքների դիմաց:

5. **Գնալ կոլտնտեսություն սերմեր բերելու:** Ղեկավարը նախորոք պայմանավորվում է կոլտնտեսության վարչության հետ, յերեխաներին սերմեր տալու մասին: Յերեխաներն ստացած սերմերը բերում են մանկ-հրապարակ, տեսակավորում և վերոշում թե վորը պետք է ավելի շուտ ցանել, վորը մի քիչ հետո, վորի սերմերը պետք է թրջել և այլն:

6. **Աշխատանք բանջարանոցում՝ մեծերի հետ:** Ղեկավարը նախորոք պայմանավորվում է պիոներների կամ ծնողների հետ, վորպեսզի նրանք գան օգնելու հողամասի և մարգեր շինելու աշխատանքներին: Մեծերը փորում են հողը, փոքրերը ջոկում քարերը և փոքրիկ պատգարակներով տանում լցնում մեծերի նախորոք փորած փոսի մեջ: Այս աշխատանքների ընթացքում յերեխաները ծանոթանում են հողի տեսակներին (կավահող, ավազահող, պարարտացրած): Դիտում են հողից հանած միջատներին, անձրևորդին: Անձրևորդերին դիտում և թողնում են իբրև օգտակարների:

Վորպեսզի յերեխաները համոզվեն, վոր անձրևորդն օգտակար է, անհրաժեշտ է ապակե ամանի մեջ դնել մի քանի վորդ և կոշտ հող ու դիտել, թե ինչպես մի քանի օրում նրանք կփափկացնեն հողը:

7. **Յերգ — յերաժշտություն:** Սովորել «Տրակտորիստ եմ», «Մեր կոլխոզի արտերը», «Անհատը և կոլխոզը» յերգերը:

8. **Մարգեր շինելը:** Մարգեր շինելու աշխատանքը հիմնականում կատարում են մեծերը: Յերեխաներն օգնում են բաժանվելով բրիգադ-

ների 4-5 հոգի: Չափում են մարգերի յերկարությունը՝ յերկուական մետր և լայնությունը 70 սմ: Տնկում են փայտիկներ, թելը ձգում վոր ուղիղ լինի: Ղեկավարն օգնում է յուրաքանչյուր բրիգադին՝ կանոնավոր ոգտվել մետրից, փայտիկները տնկել մի քիչ թեք, թելը պինդ ձգել: Յերեխաները գալիս են այն յեզրակացության, վոր մարգերի մեջ յեղած լայն տարածությունը հեշտացնում է աշխատանքը:

ա) Մարգեր պատրաստելիս ղեկավարը զրույց է անում յերեխաների հետ, հողի մշակման մասին (յերեխաները գնացել են կոլտնտեսության, խորհտնտեսության դաշտը, հերկելու ժամանակ տեսել են հողի պարարտացումը): Վորպեսզի յերեխաները համոզվեն, թե ինչ նշանակություն ունի հողի կանոնավոր մշակումը, պետք է կատարել հետևյալ փորձը: Մարգը բաժանում են յերկու մասի. մի մասը խնամում են, իսկ մյուս մասը ցանելուց հետո թողնում են անխնամ (չեն ջրում, չեն նոսրացնում և չեն քաղհանում ամբողջ ամառը):

Յերեխաները գալիս են այն յեզրակացության, վոր բերքը կախված է լավ խնամքից և վոչ թե տերտերների աղոթքներից կամ գոյություն չունեցող աստծուց: Այս աշխատանքների ընթացքում յերեխաները հարթում են մարգերի միջին ճանապարհները և մարգերի կողքերն ուղղում տախտակներով:

9. **Սերմեր ցանելը:** Սերմերը ցանում են մեկը-մեկից հավասար տարածության վրա. փոքրերը ցանում են խոշոր սերմեր (սիսեռ, դդում, վարունգ և այլն):

10. **Ընթերցել պատկերազարդ գրքեր:** «փոքրիկ կոլխոզնիկները» («հոկտ» 30 թ. № 3) «գյուղ և քաղաք» Հ. Հայրապետյանի և «մեր բանջարանոցը»:

11. **Բանջարանոցը ջրելը:** Յերեխաները վերջացնում են արմատապտուղների ցանումը — սոխ, գազար, գետնախնձոր: Վերջում ջրում են մարգերը: Ղեկավարը բացատրում է, վոր մեկ կողմի վրա չթեքվելու համար դույլերը և ցնցուղները միաժամանակ պետք է վերցնել յերկու ձեռքով, թեքվելը վնասակար է: Հարկավոր է զգույշ ջրել, վոր ուժեղ ջրով չողողվի ցանքը: Ջրելուց հետո տակառը նորից լցնում են ջրով՝ մյուս որվա համար:

12. **Կավի աշխատանք:** Յերեխաները ծեփում են իրեր «Մեր բանջարանոցը» թեմայի շուրջը: Փոքրերը ծեփում են իրենց ցանկացածը:

13. **Եքսկուրսիա դեպի բանջարանոց՝ դիտելու մեծերի աշխատանքը քաղհանը, բույսերի նոսրացումը:** Յերեխաները դիտում են մեծերի աշխատանքը: Ղեկավարը յերեխաների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, թե ինչպես համերաշխ և արագ են աշխատում մեծերը: Բացատրում է թե ինչու յեն քաղհանում և նոսրացնում բույսերը: Մեծերը յերեխաներին ցույց են տալիս մոլախոտեր, վնասատու միջատ-

ներ: Յեթե ժամանակին չհավաքեն, չնոսրացնեն, մոլախոտերը կչատանան, վնասատու միջատները կբազմանան: Տերտերները խաբում եյին գյուղացիներին, թե աղոթքներն օգնում են բույսի աճմանը: Յեթե բանջարանոցը ժամանակին և լավ մշակենք, լավ բերք կստանանք:

14. Քաղհանը յեվ նոսրացումը հրապարակի հողամասում: Յերեխաներն ըստ մարգերի թվի բաժանվում են բրիգադների, վորոնք իրար հետ սոց. մրցման պայման են կապում (ով իր մարգն ավելի մաքուր և խնամքով կքաղհանի): Վերհիշում են, թե կոլտնտեսականներն ինչպես են աշխատել ընդհանուր բանջարանոցում: Գալիս են իրենց բանջարանոց, նոսրացնում ու քաղհանում բույսերը: Մեծերը ծանոթանում են բույսերի կազմությանը (արմատ, ցողուն և տերև): Բացատրվում է փոքրերին, վոր քաղհանն օգնում է լավ աճելուն (աստված չի օգնի): Փոքրերը հանած անպետք խոտերը տանում և հավաքում են մի տեղ: Մարգերի մի փոքրիկ մասը թողնում են առանց քաղհանի, վորպեսզի տեսնեն և համեմատեն լավ խնամած մարգերի հետ:

Այդ ժամանակամիջոցում հողամասում յերեխաներին հաջողվում է տեսնել գորտ, վորը բռնում և դնում են բանկայի մեջ: Յերեխաներին պետք է բացատրել, վոր գորտը վնասակար չէ, այլ օգտակար է հողագործությանը: Յերեխաների միջից վերացնել գորտի վերաբերյալ զանազան նախապաշարումները և նրանց միջից արմատախիլ անել գորտից վախենալը ու զզվելը, գործածելով վարակվելու մասին յեղած զրույցները:

15 Կարդալ «գորտին ազատեց» գիրքը:

16. Զրույց քաղաքի յեվ գյուղի մասին: Յերեխաներին գաղափար տալ գյուղի և քաղաքի, բանվորների և կոլտնտեսականների փոխադարձ կապի մասին (քաղաքի գործարաններում բանվորները պատրաստում են մեքենաներ, կտոր, կոշիկ և այլ իրեր: Աշխատավոր գյուղացիները քաղաքին տալիս են հաց, կաթնամթերք և բանջարեղեն):

Համախմբվելով կոլտնտեսությունների և կոոպերացիայի շուրջը, մենք ամրացնում ենք այդ կապը և վորովհետև կուլակները խանգարում են այդ աշխատանքին, մենք պետք է պայքարենք նրանց դեմ:

17. Յերեխաներին սովորեցնել «փոքրիկ գորտիկ» յերգը:

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Յերեխաները սղոցում են տախտակներ: Միացնում են մեխերով: Խաղալու համար պատրաստում են արկղներ, փոքրիկ սեղաններ և նստարաններ:

2. Շարունակել աշխատանքը ճաշարանում (կերակրել, խնամել և այլն):

3. Կազմակերպել շարժական խաղ (գնդակով, ցատկիչներով):

4. Զբոսանքներ դեպի դաշտ, անտառ, գետ, զբոսանքների ժամանակ խոսել այն մասին, թե ինչ նշանակություն ունի արևը բուսականության և առողջության համար:

ՓՈՔՐ ԽՈՒՄԲ (5 տարեկաններ)

Այս կազմակերպող մոմենտում փոքրերը մասնակցում են մեծերի աշխատանքներին: Դիտում են սերմերի տեսակավորման աշխատանքը: Հողամասը փորելու ժամանակ քարերն առանձնացնում են (նրանց բացատրվում է, վոր քարերը խանգարում են բույսերի աճմանը): Տընկում են լոբու և սիսեռի սերմեր: Փոքր յերեխաների հետ կարելի է գնալ կոլտնտեսության բանջարանոցը, յեթե նա մոտ է: Ղեկավարը գլխավորապես հետևում է ռեժիմի ռացիոնալ կիրառմանը, վորպեսզի յերեխաներն առողջ լինեն:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

1. Կոլտնտեսությունների ակումբներում կազմակերպել օգտակար բանջարեղենի ցուցահանդես:

2. Համաձայնության գալ պիոներների հետ, թե նրանք ինչ մասնակցություն են ունենալու բանջարանոցի կազմակերպմանը:

3. Հրավիրել ծնողական ժողով, լսել զեկուցում բանջարեղենի օգտակարության մասին: Այս զեկուցումներին մասնակից դարձնել բժշկին, գյուղատնտեսին, ուսուցչին, ակումբավարին:

4. Ծնողների ուժերով կազմակերպել շաբաթօրյակ հողամասի սկզբնական և դժվարին աշխատանքները կատարելու համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 16.

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ

(21/VII — 11/VIII — 19 աշխատանքի օր)

Այս կազմակերպող մոմենտի շնորհիվ յերեխաները ծանոթանում են կարմիր բանակի հետ, վորը պաշտպանում է մեր շինարարությունը մեր թշնամիների՝ բուրժուաների հարձակումից: Տալ հասկացողություն, վոր աշխատավոր կոլտնտեսականները և բանվորները կարմիր բանակ գնալով նրա զանազան մասերում սովորում են զինվարժություն (հեծելազոր, հետևակ, հրետանի), վորպեսզի կարողանան պաշտպանել մեր յերկիրը: Յերեխաները պետք է իմանան, վոր մյուս յերկրների գիտակից բանվորները Խորհրդային Միության բարեկամներն են և նրանք էլ մեզ հետ կպաշտպանեն խորհուրդները, կոլտնտեսություն-

ները, գործարանները, դպրոցները, մանկապարտեզներն օտարյերկրյա բուրժուազիայի հարձակումից: Գիտենալ, վոր կարմիր բանակն ամառը գնում է ճամբար զինավարժության:

1. Հասարակական — քաղաքական դաստիարակություն.

Փոքրերը: Կարմիր բանակայինները սովորում են հրացանաձգություն, թնդանոթաձգություն և սավառնակով թռչել: Կարմիր բանակայինները ստանում են նաև գիտություն, նրանք կարգապահ են: Յերեխաները պետք է սովորեն լինել այնպես կարգապահ, ինչպես կարմիր բանակայինները:

Մեծերը: Պետք է գիտենան, վոր Խորհրդային Միության ամրացման համար բանվորները կառուցում են շատ նոր գործարաններ, տներ, կոլտնտեսություններ: Բուրժուաները պատերազմ են պատրաստում մեր Միության դեմ, վորպեսզի խլեն բանվորների ձեռքից գործարանները: Կարմիր բանակը պաշտպանում է մեր յերկիրը բուրժուաների հարձակումից:

Կարմիր բանակ են ընդունում բոլոր ազգերի աշխատավորության՝ հայ, թուրք, ռուս և ուրիշ: Կարմիր բանակ չեն ընդունում տերտերներին, բուրժուաներին: Կարմիր բանակի առաջնորդն է Ընկ. Վորոշիլովը:

Բուրժուաները, տերտերները, կուլակները խանգարում են և վնասում սոցշինարարությանը (կրկնություն): Բուրժուաներին ձեռնտու չէ, վոր աշխատավորությունն աստծուն հավատա: Տերտերները ներշնչում են աշխատավորությանը, վոր աստվածը հրամայում է աշխատել բուրժուաների համար և նրանց հպատակվել: Կոլտնտեսությունները պետք է աշխատեն հարվածային կերպով, բրիգադներով: Իմանալ, վոր բրիգադով աշխատելը լավ է:

2. Աշխատանքային դաստիարակություն

Փոքրերը պետք է իմանան թուղթ կտրել, վրձինը և մատիտը ճիշտ բռնել (կրկնություն), օգնել մեկը մյուսին, գործիքները միմյանց հանձնել:

Մեծերը: Կարողանալ ճիշտ բռնել վրձինը (ունակութ. ամրացում), կարել կոճակները, յերիզը, լվանալ փոքր իրեր, փոշու շորեր (կրկնութ.):

Իմանալ, վոր աղյուսը ցեմենտով են միացնում. հաղորդակցության միջոցները՝ ձի, գնացք, մեքենա, շոգենավ, սավառնակ, վոր այս բոլորը անհրաժեշտ է վոչ միայն ռազմական նպատակների այլև գյուղատնտեսության համար: Կարողանալ աշխատել խմբերով. նպատակ դնել առաջադրությունը կատարել, սկսած գործը վերջացնել: Աշխատելիս իրար օգնել, միմյանց չխանգարել:

3. Բնագիտություն

Բոլոր յերեխաները պետք է շարունակեն աշխատանքը բանջարանոցում և ծաղկանոցում, ուր ամրացվում են բանջարանոցի և ծաղկանոցի խնամքի վերաբերյալ գիտելիքներ և ունակություններ:

Փոքրերը: Իմանալ իրենց ծաղկանոցում ցանված ծաղիկները. մի քանի դաշտային ծաղիկներ (զանգակներ և այլն) չորացնել, կազմել հավաքածու: Գիտենալ, վոր կոլտնտեսութ. նվաճումները (լավ բերք) կախված են վոչ թե գոյություն չունեցող աստծուց, այլ մարդու աշխատանքից և գիտությունից (կրկնողություն):

4. Ֆիզդաստիարակություն

Փոքրերը: Խորացնել և ամրացնել յերեխաների ձեռք բերած մաքրապահական և առողջապահական ունակությունները: Ուտելու ժամանակ ճիշտ բռնել դգալը. ուտել մաքուր, կերակուրը չթափել. կարողանալ վողողել բերանը. օգտվել թաշկինակից:

Մեծերը: Կարմիր բանակայինները զբաղվում են ֆիզկուլտուրայով, վորպեսզի առողջ, դիմացկուն, ուժեղ և ճարպիկ լինեն: Յերեխաները նույնպես պետք է առողջ, ուժեղ և ճարպիկ լինեն. Կարողանալ վազել, ուղիղ քայլել, ազդանշանով կանգ առնել, աջ և ձախ դառնալ:

Կարողանալ խմբով խաղալ գնդակով, օղակով, սանձերով: Կարողանալ թաց շորով մաքրել սեղանի և պատուհանների փոշին. խաղալիքները և գործիքները դասավորել իրենց տեղը: Մաքուր լվանալ ամանեղենը և լավ սրբել:

5. Մաթեմատիկա

Փոքրերը: Ամրացնել հետևյալ հասկացողությունները՝ գունդ, շրջան. քանակային և ըստ կարգի հաշիվը մինչև 5-ը:

Մեծերը: Ամրացնել գումարումը 10-ի շրջանում, տալ հետադարձ համարանք 10 ից 1-ը: Ամրացնել ձևերի հասկացողությունը (փոքրերին տված ձևերի) և գաղափար հաստի, բարակի, ծանրի, թեթևի մասին: Իմանալ իր տարիքը, քանի տարեկան է, վո՞ր ամիսն է հիմա և ամսաթիվը:

6. Կերպարվեստ

Փոքրերը: Կարողանալ թուղթը կտրել ուղիղ գծով (կրկնողություն) և ծալել. կտրել հինգ-անկյուն աստղ, շրջաններ, կտրտել թղթե շերտեր և կպցնել թղթին:

Իմանալ, վոր վերջինով պետք է քիչ սոսինձ վերցնել:

Մ ե ծ ե ր ը: Կարողանալ ավագի հետ խաղալիս կառուցել սարեր, փոսեր, մի կտոր կավից ծեփել մի վորևիցե առարկա, իր ամբողջությամբ, չկպցնելով առանձին մասեր:

7. Յերգ — յերաժշտություն

Փ ո ք ր ե ր ը: Իմանալ սովորած յերգերը. քայլել զույգ-զույգ յերգի կամ նվագի տակ կազմել շարքեր:

Մ ե ծ ե ր ը: Բաժանվել աջ և ձախ, քայլել մեկ մեկ՝ ղեկավարի ցուցմունքով: Յերգել սովորած յերգերը:

8. Կենդանի խոսք

Փ ո ք ր ե ր ը: Կարողանալ նկարներով պատմել բանվորների աշխատանքների մասին, թե ինչ են նրանք կառուցում, և կարմիր բանակի մասին:

Մ ե ծ ե ր ը: Կրկնել և սովորել լոզունգները կարմիր բանակի մասին և պլակատի վրա գրվածը: Կարողանալ ասել պիոներական վողջույնը՝ «Բանվորների գործի համար յեղիր պատրաստ» «Միշտ պատրաստ»: Կարողանալ հանելուկները լուծել և հանելուկներ ասել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(միջին — 6 տար. և ավագ — 7 տար. համար)

1. Նկարներ յեվ պատկերներ դիտելը. Յերեխաները ղեկավարի հետ միասին դիտում են պատկերազարդ գրքեր, ամսագրեր. պատկերները պետք է ներկայացնեն սոց-շինարարությունը ու կարմիր բանակի կյանքը: Պետք է ընտրել այնպիսի գրքեր և ամսագրեր, վորոնք արտահայտեն նոր շինարարությունը, կոլտնտեսությունը, խորհ-տնտեսությունները և այլն: Դիտելուն զուգընթաց ղեկավարը բացատրում է, վոր այս բոլորը կառուցել են բանվորները և աշխատավոր կոլտնտեսականները: Ցույց տալ կարմիր բանակի կյանքից նկարներ — հետևակ, հեծելազոր, տանկեր, նշել, վոր բուրժուաներն ուզում են մեզ խանգարել, իսկ կարմիր բանակը պաշտպանում է:

2. Քայլվածք. Սովորեցնել քայլել հաշվի կամ թմբուկի զարկի տակ ինչպես կարմիր բանակայիններ՝ ուրախ, ուղիղ, իրար յետևից:

3. Եքսկուրսիա-դեպի լագեր, զորանոց, պաշտավիաքիմի բջիջները, կոլտնտեսության ակումբները, ռազմական անկյունները: Նախորոք պայմանավորվել հիմնարկի պետի հետ և վորոշված որը գնալ յերեխաների հետ միասին (յեթե զորանոց չկա, խնդրել զորացրված կարմիր բանակայինի պատմել — կարմիր բանակի կյանքից):

Պատմելիս ցույց տալ հակագազ, հրացան, բացատրել թե ինչու համար

են դրանք. ինչպես են ոգտագործում, (բացատրականի համար նախորոք պայմանավորվել և մշակել մատչելի լեզվով զրույցի նախագիծ 5-7 րոպե տևողությամբ):

4. Նկարչություն. Տրամադրել գունավոր մատիտներ կամ սոսնձաներկեր: Ազատ կամ առաջադրությամբ նկարել եքսկուրսիայի տպավորություններից:

5. Յերգ-յերաժշտություն. Սովորել կարմիր բանակի վերաբերյալ յերգեր «Մեծ Հոկտեմբերն ինձ ծնեց», «Թող դուրս գա մեր դեմ», «Կարմիր բանակային» և այլն:

6. Զրույց. Նորից դիտել կարմիր բանակի կյանքը պատկերացնող պատկերազարդ գրքեր և ամսագրեր: Նշել, վոր տերտերները և բուրժուաներն ուրիշ յերկրներում շարունակ պատրաստվում են մեր դեմ պատերազմելու: Նրանք վախենում են, վոր իրենց բանվորները և գյուղացիները նույնպես կարող են իրենց ձեռքից խլել գործարանները, հողը և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, ինչպես Խորհրդային Միության մեջ: Մեր յերկիրը պատերազմ չի ուզում, բայց պիտի պատրաստվի, վոր կարողանա պաշտպանվել հարձակումից: Մեր կարմիր բանակը պատրաստվում է յերկրի պաշտպանության համար և ոգնում է նոր կյանքի կառուցմանը:

Կարմիր բանակայիններն ոգնում են կոլտնտեսականներին, նրանց աշխատանքներին: Սովորում են, թե ինչպես վարեն տրակտորը, ինչպես խնամեն կենդանիներին, վորպեսզի կոլտնտեսությունը շատ յեկամուտ տանի:

7. Պլակատ պատրաստելը. Պատրաստել կարմիր բանակի վերաբերյալ պլակատներ: Յերեխաները պլակատներից և հին ամսագրերից կտրում են կարմիր բանակայինին վերաբերող նկարներ և փակցնում են մի թղթի վրա, վորպես պլակատ: Այս աշխատանքներում ոգնում են պիոներները: Կարելի յե պատրաստել ալբոմ և պատի թերթ:

8. Կարմիր բանակային խաղի համար պատրաստել համապատասխան պարագաներ. Յերեխաներին տրամադրել գեն գցելու նյութեր, եքսկուրսիայում տեսածը վերարտադրելու և պատրաստելու համար որինակ՝ հրացան, սավառնակ, թնդանոթի մոդել, գլխարկ և այլն: Նախորոք պատրաստ ունենալ գեն գցելու նյութերը և գործիքները: Այս աշխատանքները կատարել 2-3 որում պիոներների ոգնությամբ:

9. Խաղ. Խաղն իր մեջ ընդգրկելու յե կարմիր բանակի կյանքը և նրանց որվա ռեժիմը: Խաղալ «արթուն պահակ», «Կարմիր բանակ» և այլ խաղեր:

10. Պատմություն. Ընթերցել կամ պատմել կարմիր բանակի կյանքից մատչելի պատմվածքներ, որինակ՝ «Կարմիր հերոսը», «Մենք կարմիր բանակային ենք», «Յեղիր պատրաստ պաշտպանելու համար»:

11. **Զրույց ոգոստոսի 1-ի նշանակության մասին.** *Յերեխաների հետ դիտել նկարներ, թե ինչպես կարմիր բանակայինները, բանվորները և կոլտնտեսականները պատրաստվում են պաշտպանելու մեր յերկիրը: Պատմել, յերեխաներին՝ որ ուրիշ յերկրների բանվորները և գյուղացիները մեր ընկերներն են և մեզ ոգնում են կռվելու բուրժուաների դեմ: Պատմել, որ ոգոստոսի 1-ին, մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները դուրս կգան փողոց ցույց տալու բուրժուաներին, որ իրենք բոլորը պատրաստ են պաշտպանելու Խորհրդային Միությունը:*

Իմանալ, որ մյուս յերկրների բանվորներն այդ որը կպահանջեն բուրժուաներից, որ նրանք դադարեցնեն պատերազմի պատրաստությունը Խորհրդային Միության դեմ:

12. **Ոգոստոսի 1-ին մասնակցելու նախապատրաստական աշխատանքներ.** *Յերեխաները պիոներների ոգնությամբ պատրաստում են լոզունգներ, պլակատներ, բանակային գլխարկներ, դրոշակներ, ցույցին մասնակցելու համար:*

Լոզունգներ.— 1. Կորչի պատերազմը. 2. Կորչի բուրժուազիան. 3. Մենք պատերազմ չենք ուզում, բայց մենք պատրաստ ենք: Պատրաստել կենդանի լրագիր:

13. **Զարդարելու աշխատանք.** *Շենքը զարդարել իրենց պատրաստած լոզունգներով, պլակատներով, պատի թերթով, նկարներով (պատից փակցնել Ստալինի, Բուդյոննու, Վորոշիլովի նկարները): Յերեխաները պետք է իմանան, որ Վորոշիլովը և Բուդյոննին կարմիր բանակի առաջնորդներն են, որ նրանք բանվորների և գյուղացիների հետ միասին քշեցին բուրժուաներին:*

14. **Մասնակցություն ցույցին.** *Յերեխաներն ոգոստոսի 1-ին մասնակցում են ընդհանուր շքերթին, բայց 20-25 րոպեյից վոչ ավելի: Գնում են զույգերով, պիոներների և դաստիարակների հետ: Յերեխաները տանում են իրենց պատրաստած դրոշակները, թնդանոթները, սավառնակները և այլն:*

15. **Հանդես.** *Հրավիրել ծնողներին, կոլտնտեսականներին, բանվորներին, պիոներներին և կարմիր բանակի ներկայացուցիչներին: Ցուցադրել սովորած յերգերը, ոտանավորները և կենդանի լրագիրը:*

16. **Պատմել** — *յերեխաներին, թե բուրժուական յերկրներում թերթերն ինչ են գրում պաշտպանության որվա մասին: Ղեկավարը բերում է համապատասխան թերթեր, ամսագրեր և կարդում յերեխաներին:*

17. **Ռազմական անկյան կազմակերպում.** *Յերեխաների պատրաստած մոդելներով, մակետներով, ալբոմներով պատրաստել անկյուն:*

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմակերպող մոմենտի ամբողջ ընթացքում յերեխաները շարունակում են իրենց աշխատանքը բանջարանոցում և ծաղկանոցում. որինակ՝ քաղհանի, ջրելու աշխատանքը, բնության և դաշտային աշխատանքների դիտելը եքսկուրսիայի ժամանակ:

2. Դիտել, թե ինչպես է փոխվում դաշտը բերքահավաքից հետո: Դիտել աշխատանքի բաժանումը, մեքենաների աշխատանքը: Նշել մեքենաների առավելությունները:

3. Ամեն որ ունենալ ազատ և կազմակերպված խաղեր. սահմանել հերթապահություն անձնական մարմնի մաքրության և հանդստի կազմակերպման: Յերեխաները պետք է լինեն մաքուր, կոկիկ հագնված, պարտաճանաչ՝ ինչպես կարմիր բանակայինն է, որպեսզի առողջ և ուժեղ մեծանան ու փոխարինեն բանակայիններին:

ՓՈՔՐ ԽՈՒՄԲ (5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)

Փոքր յերեխաների հետ կարմիր բանակի մասին զրույցը տարվում է առանձին, շատ համառոտ և նկարների միջոցով: Յերեխաները պատմում են իրենց իմացածը կարմիր բանակի մասին: Յերեխաները նկարների վրա տեսնում են, թե ինչքան շատ թնդանոթներ, հրացաններ ունի կարմիր բանակը, թե ինչպես են սովորում՝ հրաձգություն, սավառնակով թռչել: Զրույցի ժամանակ պետք է նշել, որ կարմիր բանակը պաշտպանում է բանվորներին և կոլտնտեսականներին բուրժուաներից: Նա ուժեղ և անվեհեր է:

Փոքրիկների աշխատանքի ժամանակ պետք է լավ ոգտագործել յերգերը, խաղերը (պետք է յերեխաներին տալ կարմիր աստղ, փայտիկներ և այլն) գրոտանքը, նկարներ դիտելը և պետք է ձգտել, վոր յերեխաները ստանան հուզական ապրումներ՝ կապված կարմիր բանակի հետ, սիրեն կարմիր բանակը:

Կարիք չկա փոքրերին դուրս բերել շքերթին, տանել եքսկուրսիա: Այդ բոլորը նրանց համար բարդ և հոգնեցուցիչ է:

Կազմակերպող մոմենտի ընթացքում անհրաժեշտ է հետևել ռեժիմի ճիշտ կիրառմանը, լվացվելուն, ուտելուն և մաքրությանը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Հրավիրել ծնողական ընդհանուր ժողով, բացատրել ոգոստոսի 1-ի նշանակությունը և նրանց ներգրավել ցույցին մասնակցելու:

2. Կազմակերպել հատուկ զեկուցում «Պատերազմը և կրոնը», «Կընոջ մասնակցությունը յերկրի պաշտպանության գործում» նյութերի շուրջը:

3. Մասնակցել այդ օրը լույս տեսնող պատի թերթին և ոգնել լույս ընծայելուն։

4. Գյուղի կամ շրջանի կուլտ-կենցաղային կոմիսիայի կամ և հասարակական կազմակերպությունների հետ միասին կազմել տոնակատարության ծրագիր։

5. Կազմակերպել բարձրաձայն ընթերցանություն դաշտում — կոլտնտեսականների հանգստի ժամին։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄՈՄԵՆՏ № 17

ՀՐԱՊԱՐԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԾԵԼԸ

(13/VIII—29/VIII 15 աշխ. օր, ժամկետը յենթակա յե փոփոխության, նայած տեղի պայմաններին)

Տվյալ կազմակերպող մոմենտում ամփոփում ենք ամառային հրապարակի աշխատանքները։ Այս շրջանի հիմնական խնդիրներն են 1. ամփոփել յերեխաների հետ տարած կրթա-դաստիարակչական աշխատանքները. 2. ստուգել, թե վոր չափով յերեխաները ֆիզիկապես կազդուրվել և մտավորապես զարգացել են, 3. ցույց տալ ծնողներին և հասարակությանը հրապարակի ոգուտներն ու նվաճումները, նրանց հետ միասին միջոցներ նշել հրապարակներն ամրացնելու և մանկապարտեզների վերածելու ուղղությամբ։

Այս կազմակերպող մոմենտում յերեխաները ղեկավարի հետ միասին ամփոփում են հրապարակում իրենց կատարած աշխատանքները։ Ղեկավարը պետք է աշխատանքների ընթացքում, զրույցի միջոցով, դիտելով յերեխաների ազատ ստեղծագործական խաղերը և զբաղմունքները, դասավորելով յերեխաների ձեռքի աշխատանքը, ստուգի՝ տաջոգիմել են, թե վոչ, ինչ գիտելիքներ և ունակություններ են ձեռք բերել բնագիտությունից, հասարակական-քաղաքական դաստիարակությունից (ինչ գիտեն Լենինի, Ստալինի, Կարմիր բանակի, սոց. շինարարության և կոլտնտեսության մասին)։ Ի՞նչ յերգեր և վոտանավորներ են սովորել։ Վո՞ր չափով նրանք ընտելացել են կոլեկտիվ, կազմակերպված և համերաշխ կյանքին։ Յերեխաների մեջ վո՞ր չափով է ամրացել բացասական վերաբերմունքը դեպի կրոնը։

1. Հասարակական քաղաքական դաստիարակություն

Իմանալ, վոր բոլոր ազգերի աշխատավորության յերեխաները պետք է համերաշխ ապրեն միմյանց հետ, միասին աշխատեն, խաղան և սովորեն։

Պիոներները լավ են սովորում, նրանք պատրաստվում են մասնակցելու սոց. շինարարությանը։

Բոլոր յերեխաները պետք է լավ աշխատեն, վորպեսզի մեծանալուց դառնան լավ պիոներ։

Ամրացնել ամառվա ընթացքում ձեռք բերած ունակություններն ու գիտելիքները։

2. Աշխատանքային դաստիարակություն

Ամրացնել այն գիտելիքներն ու ունակությունները, վոր տրվել են անցած կազմակերպող մոմենտներում՝ փայտի, թղթի և տնտեսական աշխատանքների վերաբերյալ։

3. Բնագիտություն

Աշխատանք տանել ամրացնելու բնության վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները և ունակությունները։ Իմանալ տարվա յեղանակները. Իմանալ, թե ինչու համար են գործածում չորացած մոշը, մորին։

Բնության օրացույցում նշանակել արևոտ, ամպամած, անձրևային յեղանակը նկարելով կամ պայմանական նշաններով։

4. Ֆիզդաստիարակություն

Սովորել կուլտուր-առողջապահական ունակությունները (լվացվելը, շորերի և շենքի մաքրությունը, բերան վողողելու կարողությունը, թաշկինակի օգտագործումը)։

Փոքրերը։ Իմանալ, վոր հատակին և գետնին չի կարելի թքել, վոր դրանից կարող են վարակվել ուրիշները։ Հազալու ժամանակ շրջվել և բերանը ծածկել ձեռքով, սենյակներ մտնելիս վոտները սրբել։

Մեծերը։ Իմանալ, վոր պաս պահելը վնաս է առողջությանը, վոր պաս պահել հնարել են տերտերները, վորպեսզի խաբեն մարդկանց, վոր առողջության համար անհրաժեշտ է մաքուր օդ, իսկ յեկեղեցում ծխի հոտ է գալիս և դա վնաս է առողջությանը։ Տներում պատրաստում են օդանցքներ, վորպեսզի ցուրտ ժամանակ էլ օդանցքների միջոցով մաքուր օդ շնչեն։

Բոլոր յերեխաները պետք է կարողանան հրապարակը հավաքել, թղթերը լցնել առանձին կողովի կամ արկղի մեջ և սեղանները, աթոռակները, բակն ու մարգերը մաքուր պահել։

2015—7

5. Մաթեմատիկա

Ամրացնել ամառվա ընթացքում ձեռք բերած գիտելիքները։

6. Երգ-երաժշտություն

Կարողանալ երգի կամ նվագի տակ քայլել։ Մեկ-մեկ և զույգ-զույգ քայլելիս կարողանալ պահպանել շարքը։

7. Կերպարվեստ

Փ ո ք ր ե ր ը։ Ամրացնել կտրելու, նկարելու, ծեփելու և գույներ ճանաչելու ունակությունները։

Մ ե ծ ե ր ը։ Կարողանալ ներկերով ներկել։ Ներկելուց հետո լվանալ վրձինները։ Իմանալ, վոր ամեն գույն պետք է ունենա իր առանձին վրձինը։

8. Կենդանի խոսք

Իմանալ պիոներական ողջույնը, կարողանալ պատմել նկարներով։ Կարողանալ ղեկավարի ասածը կրկնել։

Մ ե ծ ե ր ը։ Կազմակերպված ձևով մասնակցել զրույցին, խոսել հերթով, ձայն խնդրել, հանձնարարությունը հայտնել և բերել պատասխանը. մեծերին բացատրել իրենց աշխատանքները ցուցահանդեսում։ Կոլեկտիվ կերպով ողջունել, լոզունգ ասել։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Միջին (6 տար.) և ավագ 7. տար.) համար)

1. Զրույց ամառվա աշխատանքների ամփոփման մասին. *Զբոսանքների ժամանակ ղեկավարը երեխաների ուշադրությունը դարձնում է այն հանգամանքի վրա, վոր բերքահավաքը վերջանում է։ Զրույցի ընթացքում ղեկավարը նշում է, վոր շուտով մանկ. հրապարակը պետք է վերջացնի իր աշխատանքը։ Հարցնում է երեխաներից՝ արդյոք գոհ են նրանք հրապարակի կյանքից։ Երեխաներն արտահայտում են, թե իրենք ինչ են արել հրապարակում և ինչ գիտելիքներ և ունակություններ են ձեռք բերել։ Վորոշում են աշխատանքներն ամփոփել և ծնողների ու կոլտնտեսականների համար ցուցահանդես կազմակերպել։*

2. Կավ. *Երեխաներին տալ կավ՝ ազատ ստեղծագործական աշխատանքների համար։*

3. Ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքներ. *Երեխաները մեծերի հետ խորհրդակցում են, թե ինչպես կազմակերպեն ցուցահանդեսը, թե վոր խումբն ինչ աշխատանքներ պետք է տա ցուցահանդեսի համար։ Վորոշում են ցուցահանդեսին ցուցադրել պատի թերթեր՝ նվիրված կարմիր բանակին, ինքնաշեն խաղալիքներ, նկարներ, կավի աշխատանքներ և այլն։ Երեխաները ղեկավարի և պիոներների օգնությամբ իրենց նկարած աշխատանքներից պատրաստում են պատի թերթ։ Առանձնացնում են ամառային աշխատանքներին վերաբերող նկարները, կտրում և կպցնում մի մեծ թերթի վրա։ Պատրաստում են նաև ալբոմներ զանազան թեմաների շուրջը (կարմիր բանակի, բանջարանոցի, պիոներական ճամբարի և ֆիզկուլտուրնիկների կյանքից)։ Նկարները կտրում են հին ամսագրերից ու պլակատներից։ Այս աշխատանքը տևում է 2-3 որ։*

4. Երգ-երաժշտություն. *Կրկնել ամառվա ընթացքում սովորած երգերը։*

5: Նկարչություն. *Երեխաներին տալ սոսնձաներկեր, իրենց պատրաստած կավի աշխատանքները ներկելու։*

6. Իրենց բանջարանոցի բերքահավաքը. *Ղեկավարը երեխաներին առաջարկում է հրապարակի աշխատանքը վերջանալու պատճառով հավաքել իրենց բանջարանոցի բերքը, լավերն առանձնացնել ցուցահանդեսի համար, իսկ մնացածն օգտագործել նախաճաշի համար։*

7. Ցուցահանդես. *Ցուցահանդեսի օրը հրավիրվում են ծնողները, մանկ. հիմնարկին կցված արտադրության բանվորները, կոլտնտեսականները, գործարկոմը կամ կոլտնտեսության նախագահը (նայած վոր արտադրությանն է կցված հիմնարկը)։ Երեխաներից ընտրված հանձնաժողովը հյուրերին ցույց է տալիս իրենց աշխատանքները, կենդանի անկյունը, բանջարանոցը, ծաղկանոցը, արհեստանոցը, վորտեղ պատրաստել են իրենց ինքնաշեն խաղալիքները։ Այնուհետև սկսվում է հանդեսը, երեխաներն արտասանում են, երգում և ցուցադրում կենդանի լրագիր. կոլտնտեսության ներկայացուցիչը կամ ծնողը խոսում է երեխաների նվաճումների մասին և ասում, վոր Խորհրդային Միության մեջ ամբողջ աշխատավորությունն աշխատում է հարվածային կերպով, կոմունիստների հետ միասին, ընկ. Ստալինի ղեկավարությամբ մասնակցում է սոց. շինարարությանը և սովորում կատարել Լենինի պատգամները։*

8. Ընթերցել և պատմել երեխաներին. *«Մարդն ինչով է ճամբա գնում» և «Համբիկի նամակը» («Հոկ.» 30 թ. № 1)։*

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Շարունակել բնության դիտողությունները (աշնան սերմերը հավաքելու, բերքահավաքի)։ Պետք է երեխաների ուշադրությունը

դարձնել մթերքները քաղաքի կոլտնտեսական շուկան փոխադրելուն և
քաղաքից մեքենաները, արդյունաբերական ապրանքները գյուղ փո-
խադրելու մասնակին։

2. Զրույց ունենալ յերկրաաարդության միջազգային որվա մա-
սին՝ զրույցի բովանդակությունը հետևյալն է. կոմունիստները, դրանք
առաջավոր բանվորները, կոլտնտեսականները և աշխատավորներն են.
Նրանք Լենինյան կուսակցության անդամներն են, վորի ղեկավարու-
թյամբ կառուցում են գործարաններ, կոլտնտեսություններ, խորհ-տըն-
տեսություններ, դպրոցներ և այլն։ Պիոներները և կոմունիստներն
օգնում են բանվորներին և կոլտնտեսականներին նոր կյանք կառու-
ցելու։ Բոլոր յերկրներում կան կոմյերիտականներ և պիոներներ։

Սեպտեմբերի սկզբին տոնվում է յերկրաաարդության միջազգա-
յին որը։ Այդ որը կազմակերպում են ցույց։

ՓՈՔՐ ԽՈՒՄԲ (5. տար.)

Փոքրիկների հետ տարվում են ամփոփման նույն աշխատանքնե-
րը՝ թե ամբողջ ամառը հրապարակում ինչ են արել և ինչպիսի սան-
առողջապահական, կոլեկտիվ ունակություններ են ձեռք բերել։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Հրավիրել հրապարակի ծնողական ժողով։ Լսել զեկուցում հրա-
պարակի կատարած աշխատանքների մասին։

2. Նախապատրաստական աշխատանք տանել հրապարակը ման-
կապարտեզի վերածելու ուղղությամբ (կոլտնտեսական խորհրդի միջո-
ցով մանկապարտեզի համար շենք ստանալ)։

ԿԵՆՑԱՂԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Յերեխաների առողջացման աշխատանքները հրապարակում սկը-
վում են հենց հրապարակի կազմակերպման առաջին որից։ Վորպեսզի
յերեխաների կենցաղը բարելավենք թե մանկ-հրապարակում և թե
ընտանիքում, համապատասխան պայմաններ ստեղծենք նրա ֆիզիկա-
կանի նորմալ աճման համար ու կուլտուր-առողջապահական ունակու-
թյուններ պատրաստենք անհրաժեշտ է, վոր կենցաղի բարելավման
աշխատանքները տարվեն ամբողջ ամառվա կվարտալում մյուս կազմա-
կերպող մոմենտների հետ զուգընթաց։ Այդ իսկ պատճառով կենցաղի
բարելավումը կազմակերպող մոմենտը տրվում է վորպես հավելված,
տոանց վորոշելու նրա ժամկետը, վորովհետև նա պետք է սկսվի հրա-
պարակի սկզբից և յեթ մինչև վերջը։

Այս կազմակերպող մոմենտի շնորհիվ ղեկավարը պետք է աշխա-
տի, վոր 1. յերեխաները գիտակցորեն մտածեն իրենց առողջության
մասին։ Խորհրդային Միության յերեխաները պետք է լինեն առողջ և
ուժեղ մեծերին փոխարինելու համար։

2. Ամրացնեն և խորացնեն հրապարակում ստացած սանիտարա-
կան – առողջապահական ունակությունները։

3. Յերեխաները սովորեն առողջապահական կանոններ և կիրառեն
վոչ միայն հրապարակում այլ և տանը։

4. Յերեխաները իմանան, վոր կրոնական ծիսակատարություն-
ները (պաս պահելը, հաղորդվելը, յեկեղեցու պատեր համբուրելը) փչա-
ցնում են առողջությունը և վարակման միջոց հանդիսանում։

5. Ծնողների հետ աշխատանք տանել յերեխաների խնամքի
համար։

6. Յերեխաների առողջացման ուղղությամբ սատիճանաբար մտըց-
վում են նորանոր միջոցներ (արևի և ոդի վաննաներ, մարմնի շփում-
ներ)։ 10 որ մեկ անգամ ստուգել հրապարակի սանիտարական դրու-
թյունը, յերեխաների ձեռք բերած առողջապահական ունակություն-
ները և ձեռք առնել համապատասխան միջոցներ ել ավելի խորացնելու
այդ ուղղությամբ տարվող աշխատանքները։
Այս աշխատանքներին մասնակից անել բժշկին։

1. Հասարակական քաղաքական դաստիարակություն

Փոքրերը պետք է իմանան, վոր կոլտնտեսություններում հողը
և ամբողջ տնտեսությունն ընդհանուր է։ Տերտերներին և կուլակներին
կոլտնտեսություններում չեն ընդունում։ Կոլտնտեսականները բանվոր-
ների համար քաղաք են ուղարկում հաց, բանջարեղեն, կաթ, յուղ։
Բանվորները կոլտնտեսությունների համար պատրաստում են մեքենա-
ներ, կտորեղեն, կոշկեղեն և այլն։

Մեծերը պետք է իմանան, վոր գործարանների, կոլտնտեսու-
թյունների շինարարությունը ղեկավարում են կոմմունիստները, վոր
կուլակները և տերտերները դեմ են կոլտնտեսություններին, նրանք
խանգարում են ցանքերին և բերքահավաքին, չեն թողնում, վոր գյուղա-
ցիները մտնեն կոլտնտեսության մեջ։

Այն գյուղացիները, վորոնք չեն մտնում կոլտնտ. մեջ, կոչվում
են մենատնտեսներ, նրանք ունեն իրենց սեփական տնտեսությունը
և աշխատում են մենակ, առանձին։ Կոլտնտ. մեջ ավելի հեշտ է աշ-
խատել, վորովհետև այնտեղ աշխատում են միասին։ Կոլտնտեսություն-
ներում ընդունում են բոլոր ազգությունների աշխատավորներին՝ թուրք,
հայ, ռուս, ասորի, քյուրդ։

Բանվորները օգնում են կոլտնտ. կազմակերպելուն. նրանք կոլտնտեսականների հետ միասին պայքարում են կուլակների և տերտերների դեմ։ Նրանք բրիգադներ են ուղարկում կոլտնտեսություններին օգնելու, նրանց մեքենաները վերանորոգելու համար։

Բոլոր աշխատավորները՝ կոլտնտեսականները, բանվորները, բանվորուհիները պետք է սովորեն, որպեսզի լավ աշխատեն, որ կարողանան ղեկավարել մեքենաները, լավ մշակեն արտերը։ Աշխատավորների համար Խորհրդային իշխանությունը բաց է անում ակումբներ, դասընթացներ, լիկկայաններ. յերեխաների համար կազմակերպում են մանկապարտեզներ, մսուրներ, դպրոցներ, մանկ-հրապարակներ։ Պիոներները սովորում են, որպեսզի օգնեն գործարանների և կոլտնտեսությունների կառուցմանը։

Ստալինը աշխարհի կոմունիստների, բանվորների, կոլտնտեսականների և աշխատավորների ղեկավարն է։

Գործարաններում, կոլտնտեսություններում, ՄՏԿ-ում բանվորները խնամքով պահում են մեքենաները։

Երեխաները նույնպես պետք է խնամքով վերաբերվեն մանկապարտեզի իրերին, խաղից հետո խաղալիքները դասավորեն իրենց տեղը, որ չկոտրվեն (կրկնություն)։

2. Աշխատանքային դաստիարակություն.

Փոքրերը պետք է կարողանան թուղթ կտրելիս, մկրատը ճիշտ բռնել և ուղիղ գծով կտրել։ Իմանալ, որ սապնաջրով կեղտը լավ է մաքրվում։ Կարողանալ ողողել թասերը։

Մեծերը։ Կարողանալ ինքնուրույն կերպով պատրաստել սեղանը, թրջել փոքրիկ լաթերը, գիտենալ, որ սնունդը պատրաստում են վառարանի վրա, որ կերակուրը յեփում են, տապակում են և թխում, որ յեփելուց կրուպան փափկում է և փոխում իր համը։

Գիտենալ, թե ինչ է անում դարբինը. կարողանալ տախտակի լայն մակերևույթի վրա մեխեր խփել։

Կարողանալ կտոր կարել մկրատով և կարել առաջին կարը։ Աշխատել փոքր խմբակներով (ամրացնել այդ ունակությունը)։ Պայմանավորվել ընկերների հետ՝ չխանգարել, այլ օգնել իրար, կարողանալ ավարտել սկսած գործը։ Գիտենալ հաղորդակցության միջոցների մասին — ձի, ավտո, նավ, գնացք։

3. Բնագիտություն

Փոքրերը պիտի կարողանան տերևներից ճանաչել կարտոֆիլ, սոխը, կաղամբը, ծառերից ճանաչել՝ ուռին, ծիրանի ծառը, յեղևնին, թռչուններից՝ կաչաղակը, ճնճղուկը, ագռավը։

Իմանալ, որ թրջած կավը ծեփվում է։

Մեծերը պիտի գիտենան, որ ծաղկից գոյանում է պտուղ, պտղից — սերմեր։ Ծառի բունը ծածկված է կեղևով։ Տերևներից՝ ճանաչել տանձենին, խնձորենին, դեղձը և մի քանի տեղական բանջարեղեններ։

Իմանալ, որ աղյուսը, ամանները պատրաստում են կավից։

Իմանալ՝ գիշեր, ցերեկ, այսոր, յերեկ, վաղը։

4. Ֆիզդաստիարակություն

Բոլոր յերեխաները պետք է գիտենան, որ արևը և ջուրը օգտակար են առողջության համար, որ արևի վաննաները ամրացնում են օրգանիզմը, որ լողանալը օգուտ է բերում, բայց լողանալ կարելի է օրական մի անգամ և ջրում միայն 5 րոպեյից վոչ ավել։ Բացօթյա մերկ ման գալը (օդի վաննաներ) նույնպես օգտակար է։

Գիտենալ, որ միջատները՝ ոջիլները, ճանճերը, փայտոջիլները փոխադրում են վարակը. անհրաժեշտ է նրանց վոչնչացնել. դրա համար պետք է հաճախ լողանալ բաղնիսում, սպիտակեղենը փոխել, անկողինը թափ տալ, կերակուրը ճանճերից ծածկել։

Գիտենալ, որ պետք է ուտել առանձին ամանից, առանձին գդալով։ Մի ամանից ուտելը վնաս է, վորովհետև հիվանդներից վարակվում են առողջները։ Եկեղեցին և կրոնը վնաս են բերում։

Կարողանալ ամանները հավաքել և սեղանների ու աթոռների փոշին սրբել թաց շորով։

Փոքրերը։ Սովորեցնել արտաքնոց գնալուց հետո և ուտելուց առաջ յերեսը ու ձեռքերը լվանալ և սրբիչով լավ ցամքեցնել։ Վիզը, ականջները լվանալ, բերանը ողողել, քնելուց առաջ ոտները լվանալ։ Հետևել շորերի մաքրությանը, ուտելիս չկեղտոտել։ Կարողանալ կոճկել և կոճակներն արձակել (մեծերը օգնում են փոքրերին)։

Մեծերը։ Պետք է կարողանան քայլել մի ուղղությամբ և ուղղությունը փոխել ըստ ազդանշանի։ Կատարել շարժումներ ըստ հրամանի՝ ձեռները բարձր, իջեցնել, տարածել (բացվել)։

5. Մաթեմատիկա

Փոքրերը։ Հաշվել մինչև 5, կարողանալ կյանքում գործադրել ըստ կարգի հաշիվը — առաջին, յերկրորդ և այլն։

Հաստ — բարակ, ավելի հաստ — ավելի բարակ։ Հասկացողություններ՝ գունդ, շրջան։

Մեծերը։ Գումարումն 10-ի շրջանում կոնկրետ առարկաներով։ Գաղափար տալ ծանրի-թեթևի ավելի ծանրի-ավելի թեթևի մասին։ Գիտենալ իր տարիքը։

6. Երաժշտություն

Փոքրերը պետք է կարողանան կազմել սյունաշար (մեկ-մեկ) առանց ղեկավարի ծափերի կամ նվագի տակ։ Զույգերով քայլել։ Ղեկավարի ազդանշանով բարձրացնել և իջեցնել դրոշակը։ Կանգ առնել ղեկավարի «կանգ — առ» հրամանով։

Մեծերը։ Քայլել շարքով, ղեկավարի ծափով վերակազմել շրջան։ Պարերի շարժումներ՝ ղեկավարի ցուցումով. յերգեր՝ ղեկավարի հետ։

7. Կերպարվեստ

Փոքրերը պետք է իմանան կարմիր, կապույտ և կանաչ գույները. խաղ — ավազով, ջրով, մանր քարերով։

Մեծերը պիտի կարողանան գունավորել շրջաններ, քառանկյուններ, ճանաչեն բաց կապույտ և նարնջագույն գույները։ Կարողանան կախարաններին կպցնել նշաններ։ Կարողանալ կանոնավոր պահել մատիտը և վրձինը, նկարել առանց սեղանը կեղտոտելու։

8. Կենդանի խոսք

Փոքրերը պիտի կարողանան արտասանել փոքրիկ վոտանավորներ։

Մեծերը պիտի կարողանան արտասանել 8 տողից բաղկացած վոտանավորներ. կատարել բանավոր փոքրիկ հանձնարարություններ և բերել պատասխանը, թե ինչպես է կատարված. որինակ՝ իմանալ ինչ են անում փոքրերը ավագի մոտ, ինչ խաղ են խաղում։ Կարողանալ ասել հանելուկ և գտնել հանելուկը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Միջին (6 տար.) յեվ ավագ (7 տար.) համար)

1. Յերեխաներին յենթարկել բժշկական քննության յեվ զրույց կազմակերպել: *Բժիշկը բացատրում է յերեխաներին, վոր առողջ լինելու համար անհրաժեշտ է հրապարակի մաքրությունը թե ներսից և թե դրսից, անհրաժեշտ է մաքուր լվացվել, չուտել մեկ ընդհանուր ամանից, չուտել անլվա պտուղներ և բանջարեղեն ինչպես նաև խակ միրգ։ Ուտելուց հետո բերանը վողողել։ Պառավական բժշկությանը չհավատալ, հիվանդության դեպքում բժշկվել բժշկի մոտ։ Ճանճերը և միջատները վնասակար են, նրանք հիվանդություններ են տարածում, նրանց դեմ պետք է պայքարել։ Բացատրել, թե ինչու չի կարելի հաղորդվել, համբուրել յեկեղեցու նկարներ և այլն։ Բժիշկն առաջարկում է յերեխաներին առողջ լինելու համար թե հրապարակում և թե տանը ձեռք առնել հետևյալ միջոցները. կարգի բերել հրապարակը և հետևել մաքրությանը. թեթև հագնվել և ոգտվել արևից՝ ջրից, ոդից։ Այս բոլորի շնորհիվ յերեխաները կլինեն առողջ, ուժեղ և մեծանալով կկարողանան լավ աշխատել գործարաններում և կոլտնտեսություններում։ Ընտրել 2-3 հոգուց բաղկացած կարճ ժամանակով սանիտարական բրիգադ՝ մաքրությանը հետևելու և լվացվելիս փոքրերին ոգնելու համար (բժշկի բացակայության դեպքում կատարում է ղեկավարը)։*

2. Արևի վաննաների յեվ մարմնի ցփման համար տեղ պատրաստել: *Ղեկավարը և յերեխաները միասին հետազոտում են իրենց հրապարակը և վորոշում արևի, ջրի վաննաների տեղը. սկսում են կարգի բերել և սարքավորել անհրաժեշտ պարագաներով (յերկար նստարանի վրա դնում են մեծ դույլերով ջուր՝ տաքանալու և ցնցուղ՝ շփման համար։ Սրբիչների համար պատրաստում են կախարան կամ կապում են պարան։ Բժշկի խորհրդներով սկսում են աշխատանքները։*

3. Առողջապահության վերաբերյալ պատկերազարդ գրքեր կամ նկարներ դիտել: *Ղեկավարը յերեխաներին տրամադրում է պատկերազարդ նկարներ, տալիս նրանց բացատրությունը — շեշտը դնելով առողջապահական կանոնների և մաքրության վրա։ Յերեխաները վորոշում են հետազոտել հրապարակը։*

4. Հրապարակի սանիտարական հետազոտում: *Ղեկավարի առաջարկությամբ և պիոներների մասնակցությամբ յերեխաները բաժանվում են բրիգադների, մի բրիգադ հետազոտում է խաղատեղը, մյուսն՝ արտաքնոցը, յերրորդն՝ ինվենտարը, պահարանը։ Պիոներներն արձանագրում են բացերը։ Հետազոտելուց հետո բրիգադները (մեծերից) զեկուցում են հայտնաբերած բացերի մասին և իրենց առաջարկություններն անում այդ բացերը վերացնելու համար։*

5. Կավ։ *Յերեխաներին տալ կավ ծեփելու համար (թե ինչպես ենք ոգտվում արևից, ջրից, ոդից)։*

6. Գնալ դաշտ՝ ավելի համար խոտ քաղելու կամ կոոպերատիվից գնել ավել: *Մեծերը քաղում են խոտը, տալիս փոքրերին՝ մի տեղ հավաքելու։ Հետո յերեխաները բաժանվում են յերկու խմբի, մի խումբը ավելներ է պատրաստում, մյուսը՝ կապում (ղեկավարի ոգնությամբ)։ Ղեկավարն իր հետ պետք է վերցնի թել և դանակ։*

7. Հրապարակը կարգի բերել։ *Ամենից առաջ կարգի յեն բերում շենքը։ Փոքրերը կարող են լվանալ խաղալիքները և շին-նյութը. մեծ յերեխաները թաց շորով մաքրում են դարակները, պատուհանները, մեծերի ոգնությամբ լվանում սեղանները և աթոռակները, վորից հետո յերեխաները կարգի յեն բերում բակն ու պարտեզը և ջրում, հետո ավլում են բակն, աղբը հավաքում և պատգարակների վրա տանում թափում վորոշած տեղը։ Վերջացնելուց հետո տեսնում են իրենց աշ-*

խատանքի արդյունքը, թե ինչքան մաքուր և գեղեցիկ են. Վորոշում են սիստեմատիկ հետևել մաքրությանը: Աշխատանքները կատարել 2 օրվա ընթացքում և հետևել, վոր յերեխաները չհոգնեն:

8. Նկարչություն. Յերեխաներին տրամադրել մատիտ կամ ներկ և առաջարկել նկարել, թե ինչ ենք մենք անում՝ մաքուր լինելու համար: Յերեխաների նկարներից ընտրել հաջողները և կազմել ալբոմ:

9. Ազատ ստեղծագործական խաղեր — Սանիտարական բնույթ կրող:

10. Յերգ-յերաժշտություն. Կրկնել սովորած յերգերը և սովորել «Անաստված եմ» յերգը: Քայլել նվագի կամ յերգի տակ:

11. Պիոներների մասնակցությամբ սանիտարական անկյան համար պատրաստել առողջապահական յեվ հակակրոնական լոզունգներ: Պիոներները գրում են, յերեխաները նկարում կամ կտրատում են. ձևավորում են գունագույն պլակատներ:

Լոզունգները լինելու յեն հետևյալ բովանդակությամբ՝ 1. «Ուտելուց առաջ լվացվիր». 2. «Քնելուց առաջ ատամներդ լվա». 3. «Կորչեն աղոթքները». 4. «Կրոնը թույն է» 5. «Օդը, ջուրն ու արևը մեր բարեկամներն են» և այլն:

12. Էքսկուրսիա դեպի գետ կամ լիճ. Յերեխաները և պիոներները միասին գնում են գետը կամ լիճը: Իրենց հետ վերցնում են փոքրիկ դույլեր: Դույլերով ջուր են բերում հրապարակ, համեմատում աղբյուրի ջրի հետ և նշում վոր աղբյուրաջուրը մաքուր է և թափանցիկ, իսկ լճի և առվի ջուրը կեղտոտ է և պղտոր:

Յեզրակացնում են, վոր աղբյուրի ջուրը կարելի յե խմել, իսկ առվի կամ լճի ջուրն առանց յեռացնելու խմելը վնաս է և կարող է հիվանդացնել: Զրույցի ժամանակ պետք է նշել, վոր զանազան օրհնած ջրերը հնարել են տերտերները և կուլակները, վորպեսզի գյուղացիներին իրենց հպատակեցնելու համար լավ խաբեն:

13. Էքսկուրսիա դեպի պիոներական ճամբար կամ պիոներական կոլեկտիվ. Յեթե կոլտնտեսության կից կա պիոներական կոլեկտիվ կամ շրջակայքում պիոներական ճամբար, ապա կարելի է յերեխաներին տանել այնտեղ տեսնելու, թե ինչպես են ապրում և ինչով են զբաղվում պիոներները: Յերեխաներին բացատրել, վոր պիոներները կազմում են կոլեկտիվ, վորը ղեկավարում է կոմյերիտական կորիզը. Նրանք օգնում են սոց-շինարարությանը և դպրոցի կատարվող աշխատանքներին: Պիոներներն օգնում են նաև հրապարակի յերեխաներին:

14. Յերեխաները (մեծերը) պատմում են իրենց «Առողջ լինելու համար ինչ ենք անում» նյութի մասին. Վորպեսզի յերեխաները լավ հիշեն կատարած աշխատանքը և սովորեն լավ արտահայտվել, ղեկավարը բոլորին առաջարկում է պատմել «առողջ լինելու համար մենք ինչ ենք անում» նյութի մասին: Ղեկավարն առաջարկում է հերթով պատմել: Յերեխաների պատմությունները գրի յե առնում պիոները կամ ղեկավարը և գրքույկ կազմում:

15. Ծնողական ժողովի համար կազմակերպել ցուցահանդես. Պիոներների հետ միասին պատին փակցնել պատրաստած առողջապահական և հակակրոնական բնույթ կրող պլակատներ և լոզունգները: Պատրաստել ֆիզկուլտ և պիոներական կյանքի առողջապահական ալբոմ (ամսագրերից կտրատել առողջապահության վերաբերյալ նկարներ), ցուցադրել նաև յերեխաների նկարները:

16. Զբոսանք դեպի դաշտ՝ ծաղիկներ հավաքելու. Յերեխաները ծաղիկներ են հավաքում ծնողական ժողովի համար և բերում դնում են ծաղկամանների մեջ ու զարդարում ցուցահանդեսը: Ժողովի օրը յերեխաները հանդես են գալիս իրենց յերգերով և արտասանություններով:

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Շարունակել բանջարանոցի և ծաղկանոցի աշխատանքները (քաղհանել, ջրել, խնամել):
2. Շարունակել աշխատանքը թռչնոցում (հավերի խնամք):
3. Անցկացնել կազմակերպված խաղեր:

ՓՈՔՐ ԽՈՒՄԲ (5 տարեկաններ)

Այս կազմակերպող մոմենտի ընթացքում փոքր յերեխաները նույնպես մասնակցում են այն աշխատանքներին, վոր կատարում են մեծերը բացառությամբ էքսկուրսիայից դեպի գետը կամ լիճը: Յերեխաների մեջ գլխավորապես խորացնել սանառողջապահական ունակությունները:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Հրավիրել ծնողական ժողով, լսել բժշկի զեկուցումը յերեխաների առողջացման մասին (նկարների ցուցադրումով):
2. Կազմակերպել շաբաթօրյակ — մաքրել հրապարակը:

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ—ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆԸ՝ 1 Ռ. 50 Կ.

Б

Программа работ Дошкольных учреждений
(по организующим моментам)
Госиздат ССР Армении—Эривань

ՀՀ Ազգային գրադարան
NL0228788

50.469